

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԳԵՈՐԳԻ ՕՆԻԿԻ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ  
ՄՈԴԵԼՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ը.00.08 - <<Մաթեմատիկական տնտեսագիտություն>> մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝

ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>3</b>
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....</b>	<b>4</b>
<b>ԳԼՈՒԽ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ</b>	
<b>ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....</b>	<b>10</b>
1.1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ.....	10
1.1.1. ՍԱՀՄԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՌԻԹՅՈՒՆԸ.....	14
1.1.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ.....	20
1.1.3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ.....	22
1.1.4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՌԻԹՅՈՒՆԸ	25
1.1.5. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԵԿԵՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՌԻԹՅՈՒՆԸ...	26
1.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	27
1.3. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....	32
<b>ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ</b>	
<b>ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ.....</b>	<b>40</b>
2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ԵՎ ՄՈՂԵԼՆԵՐԸ..	40
2.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ԵՎ ՄՈՂԵԼՆԵՐԸ .....	50
2.2.1. ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ .....	50
2.2.2. ՔԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ.....	57
2.2.3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ .....	63
2.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	67
<b>ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ</b>	
<b>ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ.....</b>	<b>72</b>

3.1. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ.....	73
3.1.1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	74
3.1.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՔԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	77
3.1.3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ.....	85
3.1.4. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ.....	92
3.2. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ.....	97
3.3. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԱՁԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ.....	101
<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>107</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....</b>	<b>110</b>
<b>ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....</b>	<b>119</b>

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Կոռուպցիայի իրողությունը Հայաստանի Հանրապետության առջև ծառայած լրջագույն հիմնախնդիրներից մեկն է: Անկախացումից ի վեր հանրապետության գրեթե բոլոր ոլորտներում արձանագրվել է կոռուպցիայի բարձր մակարդակ, որը դրսևորվել է կաշառակերության, հովանավորչության, քաղաքական կոռուպցիայի և այլ առումներով: Կոռուպցիան, հանդիսանալով <<անտեսանելի սև ձեռք>>, իր բացասական հետևանքներն է թողել տնտեսական, իրավական և ժողովրդավարական զարգացումների վրա: Այն դրսևորվել է պետական և ոչ պետական իստիտուտների տարբեր ոլորտներում և հանգեցրել թե՛ ոլորտային և թե՛ մասշտաբային ձևախեղումների, ինչի արդյունք է հանրապետությունում առկա ինչպես իրավական և ժողովրդավարական գործընթացների դեռևս ոչ ցանկալի մակարդակը, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացումը: Վերջինիս համատեքստում, կոռուպցիայի բացասական ազդեցությունը դրսևորվում է երկրի մակրոտնտեսական ցուցանիշներում, ինչպիսիք են, օրինակ, հանրային բարեկեցության ցածր մակարդակը, ցածր շնչային եկամուտը, ցածր տնտեսական աճը, եկամուտների գերբևեռացումը, ազքատության բարձր մակարդակը, տնտեսության մոնոպոլացման բարձր մակարդակը, արտագաղթի որևէ կերպ չարդարացվող ցուցանիշները և այլն:

Կոռուպցիայի իրողությունը, արգելակելով պետական և ոչ պետական կառավարման արդյունավետ համակարգի գործառումը, երկակի է ազդում հանրային բարեկեցության վրա: Մի կողմից, պետաիշխանական ինստիտուտները և քաղաքական գործակալները առաջնորդվում են սեփական մասնավոր շահերով և չեն ծառայում ազգային բարեկեցությանը, իսկ մյուս կողմից՝ ստեղծված կոռումպացված իրավիճակը ազդում է տնտեսական գործակալների վստահության վրա՝ զսպելով հնարավոր օտարերկրյա և տեղական ներդրումների հավելաճին և բնակչությանը մղելով արտագաղթի:

Հայաստանի Հանրապետության քառորդդարյա պատմության ընթացքում տարբեր կառավարություններ նպատակադրել են կոռուպցիայի կրճատմանն ուղղված

պետական քաղաքականության իրականացում, սակայն բոլորն էլ լայն իմաստով ձախողվել են՝ սահմանված նպատակներին հասնելու առումով: Հակակոռուպցիոն քաղաքականության առումով Հայաստանը անդամագրվել է բազմաթիվ միջազգային կառույցների, ստորագրվել են համապատասխան պայմանագրեր, վերջիս արդյունքում ձևավորվել է հակակոռուպցիոն պայքարի իրականացման և մշտադիտարկման գործիքակազմ, սակայն վերջին հաշվով ներկայումս կոռուպցիան շարունակում է մնալ որպես երկրի լրջագույն հիմնախնդիրներից մեկը: Այսպիսով, կոռուպցիայի իրողության ակադեմիական ուսումնասիրությունները և արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը, որը կներառի ինստիտուցիոնալ բավարար կառուցակարգեր և գործիքակազմ, Հայաստանում շարունակում է մնալ որպես արդի հիմնախնդիր:

Մյուս կողմից, ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում, հատկապես ազգային ակադեմիական հանրության կողմից, լայն տարածում է գտել սահմանադրականության հիմնախնդրի ուսումնասիրությունը, ինչն ընդհանրական իմաստով բացատրում է երկրի զարգացվածության աստիճանը: Մշակվում են սահմանադրականության գնահատման, կառավարման և մշտադիտարկման արհրաժեշտ մեթոդաբանություն և գործիքակազմ՝ նպատակաուղղված ախտորոշելու առկա իրավիճակը և առաջարկելու իրավիճակի կարգավորման ու կառավարման քաղաքականություն:

Սահմանադրականությունը, այն է՝ սահմանադրությամբ ամրագրված հիմնադրույթների, նորմերի, սկզբունքների իրացվածությունը իրական կյանքում, ակադեմիական որոշակի շրջանակների բնորոշմամբ համարվում է երկիրը բնութագրող թիվ 1 ինդիկատորը: Սահմանադրականության հասկացությունն ունի բավական բաղադրյալ էություն և ներառում է ժողովրդավարական, իրավական և տնտեսական բաղկացուցիչներ: Սահմանադրականության առումով կարևորվում է ինչպես երկրում հիմնարար ժողովրդավարական ազատությունների առկայությունն ու պաշտպանությունը, արդյունավետ կառավարության առկայությունը, զսպումների և հակակշիռների կենսագործ համակարգը, իրավունքի գերակայությունը, այնպես էլ հանրային բարեկեցությունն ու սոցիալ-տնտեսական զարգացումը:

Վերոնշյալի համատեքստում կարելի է արձանագրել, որ կոռուպցիայի իրողությունն ունի լայնամասշտաբ ազդեցություն սահմանադրականության մակարդակի վրա: Այն դրսևորվում է սահմանադրականության ինչպես իրավա-ժողովրդավարական, այնպես էլ սոցիալ-տնտեսական ասպեկտներում: Ուստի, այս հետազոտությունում փորձ է արվում դիտարկել կոռուպցիայի ասպեկտը և սահմանադրականության համատեքստում առաջադրել անհրաժեշտ լուծումներ:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հետազոտության հիմնական նպատակը կոռուպցիայի և սահմանադրականության փոխազդեցության բացահայտումն ու գնահատումն է, ինչի համար առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- ❖ ուսումնասիրել սահմանադրական տնտեսագիտության տեղական և միջազգային գրականությունը, սահմանադրականության վերաբերյալ առկա գնահատականները,
- ❖ ուսումնասիրել կոռուպցիայի գնահատման մեթոդաբանությունը և առկա գնահատականները,
- ❖ ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության վարած հակակոռուպցիոն քաղաքականությունը և վերջինիս արդյունքները,
- ❖ փորձագիտական գնահատման միջոցով պարզել կոռուպցիան ձևավորող համակարգային գործոնները,
- ❖ փորձագիտական գնահատմամբ պարզել կոռուպցիայի իրողության փոխկապակցվածությունը սահմանադրականության որոշ/հիմնական բնութագրիչների հետ,
- ❖ ընտրված ցուցանիշների հիման վրա քլաստերավորման մեթոդաբանությամբ խմբավորել ԱՊՀ, Արևելյան Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության հարևան երկրները՝ բացահայտելու միմյանց մոտ երկրների խմբերը սահմանադրականության համատեքստում:

**Հետազոտության օբյեկտն ու առարկան:** Հետազոտության օբյեկտը կոռուպցիայի և սահմանադրականության փոխկապակցվածության իրավիճակն է, իսկ

առարկան՝ կոռուպցիայի և սահմանադրականության փոխազդեցության մոդելների մշակումը և էմպիրիկ գնահատումները:

**Հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:**

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են ծառայել սահմանադրական և ինստիտուցիոնալ տնտեսագիտության, սահմանադրականության, կոռուպցիայի ուսումնասիրության և գնահատման մեթոդաբանության վերաբերյալ ակադեմիական հանրության աշխատությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը, օրենսդրությունն ու Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած հակակոռուպցիոն քաղաքականության ծրագրերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսամաթեմատիկական մեթոդներ: Մասնավորապես, իրականացվել է երկքայլ քլաստերավորում, գործոնային վերլուծություն, բազմագործոն ոչ գծային ռեգրեսիոն վերլուծություն՝ պանելային տվյալների կիրառմամբ:

Հետազոտության տեղեկատվական հիմք են ծառայել Թրանսփերենսի Ինթերնեյշնալ հակակոռուպցիոն կենտրոնի, Համաշխարհային Բանկի, Համաշխարհային տնտեսական համաժողովի, Միացյալ ազգերի զարգացման ծրագրի Դեմոկրատիայի զանազանություն կազմակերպության կողմից կատարված հրապարակումները և տվյալների շտեմարանները:

**Հետազոտության հիմնական գիտական նորույթը:** Ատենախոսության հիմնական արդյունքները և գիտական նորույթը հետևյալն են՝

- ❖ բացահայտվել է կոռուպցիայի մակարդակը պայմանավորող համակարգաստեղծ գործոնների համախումբը ցույց է տրվել մոդելավորման գործընթացում դրանց ներառման ուղիները,
- ❖ կատարվել է կոռուպցիայի և սահմանադրականության որոշ/հիմնական բնորոշիչների փոխկապվածությունը բացահայտող փորձագիտական վերլուծություն՝ նախապես իրականացնելով կառավարման արդյունավետությունը նկարագրող համաթվերի գործոնային վերլուծություն,

- ❖ սահմանադրականության համատեքստում իրականացվել է երկքայլ քլաստերավորում՝ ԱՊՀ, Արևելյալ Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության հարևան երկրների կտրվածքով:

**Հետազոտության արդյունքների տեսական և գիտագործնական նշանակությունը:** Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը հանդիսանում է եզրահանգումների օգտագործման հնարավորությունը Հայաստանի Հանրապետության Կառավարության, պետական և ոչ պետական հակակոռուպցիոն կենտրոնների, կոռուպցիայի դեմ պայքարող հասարակական կազմակերպությունների ծրագրերում, մասնավորապես, հակակոռուպցիոն քաղաքականության սահմանման, լրամշակման, իրականացման և մշտադիտարկման տեսանկյունից:

**Հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները:** Հետազոտության հիմնական արդյունքները քննարկվել են ԵՊՀ Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի կողմից կազմակերպված սեմինարների ընթացքում, ԵՊՀ տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում, <<Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր>> (2017թ.) միջազգային 5-րդ գիտաժողովում, ինչպես նաև Նիդերլանդների Թագավորության Ռոտերդամի Էրազմուս համալսարանի Քաղաքային զարգացման և բնակարանային ռազմավարությունների ինստիտուտում (IHS) Էրազմուս+ ծրագրի շրջանակներում անցկացված սեմինարների ընթացքում (2017թ. մայիս-հուլիս):

Հետազոտության արդյունքները հրապարակվել են հինգ գիտական հոդվածներում և մեկ գիտաժողովի ժողովածուում:

1. Ավետիսյան, Գ., 2016, Կոռուպցիա. Իրավիճակի ակտորոշման և վերլուծության (գնահատման) որոշ հիմնահարցեր, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր (ՀՃԱԼ), Հ. 13, N. 4, էջ 402-408:
2. Ավետիսյան, Գ., 2017, Կոռուպցիայի ազդեցությունը կառավարման արդյունավետության վրա. Բանբեր, Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն, No. 1 (22), էջ 68-79:



3. Ավետիսյան, Գ., 2017, Կոռուպցիան և հանրային բարեկեցությունը, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր միջազգային 5-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ ԵԳՄ, էջ 12-18:
4. Ավետիսյան, Գ., 2017, Կառավարման համակարգի բնութագրիչների գործոնային վերլուծությունը՝ պանելային տվյալների կիրառմամբ, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր (ՀՃԱԼ), Հ.14, N.3, էջ 375-383:
5. Ավետիսյան, Գ., 2017, Քլաստերային վերլուծությունը՝ կառավարման համակարգի արդյունավետության բնութագրիչների համատեքստում, Ֆինանսներ և Էկոնոմիկա, #9-10 (205-206), էջ 19-23:
6. Ավետիսյան, Գ., 2018, Կառավարման համակարգի ցուցիչների ազդեցությունը կոռուպցիայի մակարդակի վրա, Ֆինանսներ և Էկոնոմիկա, #1-2 (209-210), էջ 13-15:

**Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է 120 էջ (առանց հավելվածների՝ 118 էջ):

# ԳԼՈՒԽ 1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

## 1.1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության գերակա ուղղություններից մեկը սահմանադրականության բարձր մակարդակի հաստատումն է, այն է՝ սահմանադրական հիմնարար սկզբունքների ու դրույթների իրացումը իրական կյանքում: Այս համատեքստում սակավաթիվ են այն երկրները, որոնց է հաջողվել ապահովել սահմանադրականության բարձր իրացվելիության աստիճան, քանի որ բազմաթիվ երկրներում կարելի է արձանագրել սահմանադրականության դեֆիցիտի առկայություն, ինչն արտացոլվում է հանրային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում<sup>1</sup>: Սահմանադրականության դեֆիցիտն իր բացասական ազդեցությունն է ունենում նաև տնտեսական զարգացման տեսանկյունից: Ուստի, սահմանադրական տնտեսագիտության շրջանակներում գերակայություն է հանդիսանում սահմանադրական դեֆիցիտի հաղթահարման նպատակադրումն ու իրացումը:

Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի ապրիլին կայացած հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրությունը: Սակայն, բարեփոխված սահմանադրության ընդունումը դեռևս չի հանդիսանում բավարար պայման սահմանադրականության հաստատման հարցում: Սահմանադրականության բարձր մակարդակի հաստատման հարցում նպատակ պետք է հանդիսանա երկրում պետական իշխանության մարմինների լիազորությունների և պարտավորությունների արդյունավետ կառավարումը, և վերջինիս արդյունքում, հաղթահարելով պետության առջև ծառայած խնդիրները, սահմանադրական նորմերի իրացումը:

---

<sup>1</sup>Մխիթարյան Ժ., «Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 4:

Վերոնշյալ խնդիրների լուծմանն ընդառաջ ձևավորվեց սահմանադրական տնտեսագիտությունը: Վերջինս, հանդիսանալով ինստիտուցիոնալ տնտեսագիտության մի նոր ուղղություն, ուսումնասիրում է սահմանադրության դրույթների իրացման մակարդակը տնտեսագիտահրավազգիտական շրջանակներում: Սահմանադրական տնտեսագիտությունը համեմատաբար երիտասարդ գիտական ուղղություն է, որը ձևավորվել է 20-րդ դարի վերջում:

<<Սահմանադրական տնտեսագիտություն>> եզրույթն առաջին անգամ օգտագործել է ամերիկացի տնտեսագետ Ռիչարդ Մաքքինզին 1982 թվականին<sup>2</sup>: Սակայն ակադեմիական շրջանակներում Սահմանադրական տնտեսագիտության ներկայիս բնորոշումը տվել է ամերիկացի տնտեսագետ Ջեյմս Բյուքենենը, ով ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում սկիզբ է դրել մի նոր գիտական ուղղության, որի համար 1986 թվականին արժանացել է տնտեսագիտության նորելյան մրցանակի<sup>3</sup>: Ըստ Բյուքենենի <սահմանադրական տնտեսագիտությունն ուսումնասիրում է կանոնների /սահմանադրական/ գործող հատկությունները, ինստիտուտները, որոնց շրջանակներում անհատները փոխազդում են, և այն մեխանիզմները, որոնք միջոց են հանդիսանում այդ կանոնների ու ինստիտուտների առաջացման և ընտրության<sup>4</sup>: Սահմանադրական տնտեսագիտությունը բնորոշվում է նաև, որպես գիտության ուղղություն, որն ուսումնասիրում է օրենքների, կանոնների և ինստիտուտների հատկությունները, որոնք սահմանափակում են տնտեսական գործակալների, քաղաքական գործիչների ընտրությունը, լիազորություններն ու գործունեությունը<sup>5</sup>:

Հետաքրքրական է սահմանադրական տնտեսագիտության և ոչ սահմանադրական տնտեսագիտության սահմանազատման փիլիսոփայությունը: Ընդհանուր տնտեսագիտության փիլիսոփայության շրջանակներում սկզբունքային դիրք է գրավում առկա սահմանափակումների պարագայում /լավագույն/ ընտրության

<sup>2</sup> McKenzie, R., “Constitutional Economics: Containing the Economic Powers of Government”, Lexington MA: Lexington Books, 1984.

<sup>3</sup> Buchanan J. M., “The Constitution of Economic Policy,” Nobel Prize Lecture, 1986.

<sup>4</sup> Buchanan J. M., “The Domain of Constitutional Economics,” Constitutional Political Economy, Vol. 1, No.1, 1990, էջ 1:

<sup>5</sup> Van den Hauwe, L., “Constitutional Economics II”, The Elgar Companion to Law and Economics, 2005, էջ 223–224:

հիմնախնդիրը, ինչի արդյունքում տնտեսագետները հաճախ վկայակոչում են ընդհանուր տնտեսագիտությանը որպես գիտություն ընտրության մասին<sup>6</sup>: Ի հակադրություն վերոգրյալի, սահմանադրական տնտեսագիտության պարագայում, փիլիսոփայության հիմք է հանդիսանում ընտրությունը սահմանափակումների միջև<sup>7</sup>: Այսպիսով, սահմանադրական տնտեսագիտությունն ուսումնասիրում է կանոնների ընտրությունը և ստացել է նաև <կանոնների տնտեսագիտություն> (economics of rules) անվանումը<sup>8</sup>: Վերոնշյալ տարանջատումն իրականացրել է Ջեյմս Բյուքենենը՝ շարունակելով շվեդ տնտեսագետ Կնուտ Վիքսելին (Knut Wicksell), ով իր հիմնարար աշխատություններից մեկում<sup>9</sup> շեշտադրում էր կանոնների կարևորությունը<sup>10</sup>:

Սահմանադրական տնտեսագիտությունն ընդգրկում է նաև այլ կիրառական հարցերի լայն շրջանակ: Այն հնարավորություն է տալիս պարզաբանել կանոնների, ինստիտուտների և անհատների փոխազդեցությունը և բացատրել, թե ինչպես համապատասխան կանոնների ընտրությունը կնպաստի ծառայած հիմնախնդիրների հանգուցալուծմանը<sup>11</sup>:

Այս համատեքստում դիտարկվում են պետությունը, քաղաքացիներն ու տնտեսական գործակալները, որոնք մշտապես գտնվելով փոխազդեցության մեջ, հետապնդում են որոշակի նպատակներ: Այդ նպատակներն ու դրանց հասնելու միջոցները տարբեր են և երբեմն կարող են հակադրվել միմյանց: Այս տեսակի

---

<sup>6</sup> Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 34:

<sup>7</sup> Buchanan J. M., “The Domain of Constitutional Economics,” Constitutional Political Economy Vol. 1, No.1, 1990, էջ 3, Van den Hauwe, L., “Constitutional Economics”, The Elgar Companion to Law and Economics, 2nd edition/Edited by Jurgen G. Backhaus.-Edward Elgar Publishing, 2005, էջ 224:

<sup>8</sup> Vanberg V. “Market and State: The Perspective of Constitutional Political Economy,” Freiburg Discussion Papers on Constitutional Economics, No 04/10, 2004, էջ 3:

<sup>9</sup> Wicksell K., “Finanztheoretische Untersuchungen” Investigations into the Theory of Finance, Jena: Gustav Fischer, 1896.

<sup>10</sup> Buchanan J. M.. “Choise, Contract and Constitutions,” Vol. 16 of The Collective Works of James M. Buchanan, Indianapolis: Liberty fund, 2001, էջ 9-10, Van den Hauwe L., “Constitutional economics,” The Elgarcompanion to law and economics, 2nd edition/ Edited by Jurgen G. Backhaus.-Edward Elgar Publishing, 2005, էջ 227:

<sup>11</sup> Vanberg V., “Democracy, Citizen Sovereignty and Constitutional Economics,” Public Choise and the Challenges of Democracy, Edited by Pardo, Jose C. and Schwartz, Pedro, Edward Elgar Publishing, 2007, էջ 102:

դրսևորումները կանոնակարգելու և կառավարելու նպատակով ընդունվում են որոշակի իրավական նորմեր և կանոններ: Ուստի, այդ իրավական նորմերն ու կանոնները հանդիսանում են քաղաքական և իրավա-տնտեսական հարաբերությունների կանոնակարգման հիմքեր, որտեղ ելակետային դեր ունի սահմանադրական իրավունքը<sup>12</sup>:

Հաշվի առնելով սահմանադրական տնտեսագիտության բազմաղորտայնությունը, այս շրջանակներում տնտեսագետներն ու իրավաբանները փորձում են միավորվել՝ հասկանալու համար սահմանադրական իրավունքի և տնտեսական որոշումների կայացման փախազդեցությունները: Այս համատեքստում խոսքը չի գնում առանձին տնտեսագիտության և/կամ առանձին իրավագիտության մասին, այլ դիտարկվում է այս երկու գիտությունների միաձուլումը: Այն իրենից ներկայացնում է մեթոդաբանական միավորում՝ փաստացի հակասությունների վերացման նպատակով<sup>13</sup>: Ի լրացում վերոգրյալի, հայտնի ակադեմիկոս Օլեգ Կուտաֆինը նշել է, որ սահմանադրական տնտեսագիտությունը հնարավորություն է ստեղծում դիտարկել տնտեսագիտության և իրավագիտության հիմնահարցերը մեկ ամբողջության շրջանակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք անխզելիորեն փոխկապակցված են և հաճախ կանխորոշում են մեկը մյուսի զարգացումը<sup>14</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը, կարելի է արձանագրել, որ սահմանադրական տնտեսագիտությունը տնտեսագետների և իրավագետների կողմից պետության, ինստիտուտների և հասարակության գործունեության նորմատիվների ապահովման հիմնախնդիրների հանդեպ համալիր ուսունասիրությունն է՝ ուղղորդված տնտեսական զարգացման և հանրային բարեկեցության ապահովման<sup>15</sup>:

<sup>12</sup> Баренбойм П. Д., Лафитский В.А., Захаров А.Б., Меркулова Н.Ю., “Конституционная экономика для школ”, Учебное пособие.-М.:Юцтицинформ, 2006, էջ 6:

<sup>13</sup>Barenboim P., Merkulova N., “25th Anniversary of Constitutional Economics: The Russian model and legal Reform in Russia”, The World rule of Law Movement and Russian Lega Reform.-M:Justitsinform, 2007, էջ 182:

<sup>14</sup> Баренбойм П. Д., Лафитский В.А., Маы В.А.,Захаров А.Б., Меркулова Н.Ю., “Конституционная экономика для школ”, Учебное пособие.-М.:Юцтицинформ, 2006, էջ 2:

<sup>15</sup> Баренбойм П. Д., “Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализм”, М.:Лум, 2013, էջ 85, 100:

Այսպիսով, հիմք ընդունելով սահմանադրական տնտեսագիտության ուսումնասիրության առանցքային գաղափարի՝ սահմանադրականության հասկացությունը, կարելի է անդել, որ սահմանադրականության վերջնանպատակներից են իրավունքի գերակայության ապահովումը և հանրային բարեկեցության բարձր մակարդակը: Այս համատեքստում առանձնակի կարևորություն ունի պետաիշխանական համակարգում արդյունավետ կառավարումը, ինչն երաշխավորում է սահմանադրական դրույթների իրացվելիությունը իրական կյանքում: Ի հակադրություն արդյունավետ կառավարման, կարևոր է նաև կոռուպցիայի դերը վերոնշյալ մեխանիզմների իրացման պրոցեսում, քանի որ վերջինս զսպող/արգելակող ուժ է հանդիսանում արդյունավետ կառավարմանը:

### 1.1.1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրականություն եզրույթը ծագել է ամերիկյան քաղաքաիրավական փիլիսոփայության շրջանակներում, երբ ԱՄՆ հիմնադիրները այսպես բնորոշեցին սահմանադրության դրույթների գերակայությունը աժանցյալ օրենքների նկատմամբ<sup>16</sup>: Ներմուծվեց իշխանության թևերի տարանջատման գպումների և հակակշիռների համակարգը, որը նպատակ էր հետապնդում բացառել իշխանության կենտոնացումը/մոնոպոլացումը<sup>17</sup>: Սակայն, /որակյալ/ սահմանադրության առկայությունը չի հանդիսանում երկրում սահմանադրականության բարձր մակարդակի անհրաժեշտ և բավարար պայման: Այս համատեքստում հետաքրքիր նախադեպ է Միացյալ Թագավորության օրինակը, որտեղ սահմանադրականության բարձր մակարդակն ապահովվել է գրավոր սահմանադրության բացակայության պայմաններում<sup>18</sup>:

<sup>16</sup> Кутафин О.Е., “Российский конституционализм”, М.:Норма, 2008, էջ 3,4,6:

<sup>17</sup> Elgar Encyclopedia of Comparative Law, 2nd Edition, Edited by Jan Smits, Cheltenham: Edward Elgar Publishing, 2012, էջ 228:

<sup>18</sup> Մխիթարյան Ժ., «Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 59:

Ինստիտուցիոնալ տնտեսագիտական գրականությունն առաջարկում է սահմանադրության և սահմանադրականության բազում սահմանումներ և բնորոշումներ, որոնցից առավել հայտնի են՝

- ❖ Բառակազմության իմաստով սահմանադրություն եզրույթը հայերենում բաղկացած է սահման և դնել արմատներից, ինչը լավագույնս ներկայացնում է դիտարկվող հասկացության հիմնական առաքելությունը<sup>19</sup>:
- ❖ Համաձայն Գ. Հարությունյանի սահմանադրականությունն առկա է պետական և հասարակական այն համակարգերում, որտեղ սահմանադրությամբ ամրագրված դրույթներն կենսունակ իրողություններ են, առկա է սահմանադրականության անհրաժեշտ և բավարար գործող միջավայր, ինչպես նաև առկա է սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ սահմանադրությունը քաղաքացիական հասարակության հիմնական օրենքն է՝ միտված ապահովելու հասարակության կայուն և ապահով զարգացումը<sup>20</sup>:
- ❖ Մեկ այլ մոտեցմամբ սահմանադրականությունը, դա սկզբունքների, գաղափարների և կանոնների համախումբ է՝ միտված ծառայելու կամայականության բացառմանը՝ քաղաքական համապատասխան համակարգ ձևավորելու միջոցով<sup>21</sup>:
- ❖ Համաձայն Մաքիլվեյնի սահմանադրականության գերակա որակը կամայականության բացառումն է՝ իրավական սահմանափակումների միջոցով<sup>22</sup>:

---

<sup>19</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. Խմբ.՝ Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյանի: -Եր. <Իրավունք>, 2010, էջ 8,9,13,15:

<sup>20</sup> Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 59:

<sup>21</sup> Concise Routledge Encyclopedia of Philosophy, General editor: Craig Edward. London: Routledg, 2000, էջ 171:

<sup>22</sup> Mcilwain Ch. H., “Constitutionalism: Ancient and Modern,” Revised edition, Cornell University Pres, New York, 1947, էջ 21, 136:

- ❖ Համաձայն Վայթինգթոնի սահմանադրականությունը քաղաքական ռեժիմի հիմնարար սկզբունքների արդյունավետ կառավարումն է՝ կառավարման սահմանափակումների միջոցով<sup>23</sup>:
- ❖ Համաձայն Վեբստերի բառարանի, սահմանադրականությունը կառավարումն է և հավատարմությունը սահմանադրության սկզբունքներին<sup>24</sup>:
- ❖ Համաձայն Ստենֆորդի հանրագիտարանի, սահմանադրականությունը մի գաղափար է, համաձայն որի կառավարությունը կարող է և նույնիսկ անհրաժեշտ է, որ սահմանափակվի իր իշխանությունում, և վերջինիս լեգիտիմությունն ու հեղինակությունը բնորոշվում է այդ սահմանափակումներին հետևելուց<sup>25</sup>:
- ❖ Մեկ այլ մոտեցմամբ սահմանադրականության դոկտրինան ենթադրում է, որ իշխանությունը պետք է ունենա սահմաններ, պետք է առկա լինի անհատական իրավունքների և զսպումների ու հակակշիռների համակարգի արդյունավետություն<sup>26</sup>:
- ❖ Համաձայն Բարբերի, ի լրացում սահմանադրականության հասկացության այն կոմպոնենտին, ըստ որի սահմանադրությունը սահման է դնում իշխանությանը, այն նաև ենթադրում է արդյունավետ պետական ինստիտուտների առկայություն՝ նպատակադրված հանրային բարեկեցության արդյունավետ մակարդակի ապահովմանը<sup>27</sup>:
- ❖ Ըստ Ժ. Մխիթարյանի, սահմանադրականությունը զարգացման մի մակարդակ է, երբ պետական իշխանության կամայականության հանդեպ դրված է սահման՝ մարդու իրավունքներով և իշխանական թևերի տարանջատման միջոցով, երբ պետական իշխանությունը

<sup>23</sup><http://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199208425.001.0001/oxfordhb-9780199208425-e-16>

<sup>24</sup> <https://www.merriam-webster.com/dictionary/constitutionalism>

<sup>25</sup> <https://plato.stanford.edu/entries/constitutionalism/>

<sup>26</sup> Berggren, N., Karlson, N., “Constitutionalism, division of power and transaction costs,” Public Choice, No. 117, 2003, էջ 99:

<sup>27</sup> Barber N. W., “Constitutionalism: Negative an Positive,” Oxford Legal Studies Research Paper No. 7/2015, 2015, էջ 1,6:



արդյունավետորեն ծառայում է հանրային բարեկեցության բարձրացման հիմնանպատակին և սահմանադրությամբ ամրագրված հիմնարար նորմերն իրացված են իրական կյանքում<sup>28</sup>:

Ինչպես պարզ է դառնում սահմանադրության և սահմանադրականության վերոնշյալ սահմանումներից և բնորոշումներից, ուսումնասիրվող հասկացությունն ունի բաղադրյալ էություն, և ակադեմիական շրջանակներն առաջարկում են վերջինիս կոմպոնենտների հետևյալ շարադրանքը՝

❖ համաձայն Ազատության տան<sup>29</sup>

- սահմանադրականության գերակայություն,
- հարգանքը սահմանադրության հիմնարար իրավունքների նկատմամբ,
- իրավունքի գերակայություն,
- ժողովրդավարությանը միտված ինստիտուտներ,
- իշխանության թևերի տարանջատում,
- անկախ դատական համակարգ,
- դատական վերահսկողություն,

❖ համաձայն Մասաբոյի<sup>30</sup>

- իրավունքի գերակայություն,
- մարդու իրավունքների իրացվածություն,
- արդյունավետ կառավարում,

❖ համաձայն Ֆոմբադի<sup>31</sup>

- ժողովրդավարական ինստիտուտներ,
- հիմնարար իրավունքների և ազատությունների իրացում,
- իշխանության թևերի տարանջատում,

---

<sup>28</sup> Մխիթարյան Ժ., «Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 67:

<sup>29</sup> “Thematic Analysis of Zimbabwe’s Proposed Draft Constitution,” by Justice Mavedzenge, A Report by: Freedom House, 2012, էջ 19-20:

<sup>30</sup> Masabo J., “The State of Constitutionalism in Tanzania Mainland -2013”, The Annal State of Constitutionalism in East Africa 2013, Editor Murangira, Thierry B., Fountain Publishers, 2014, էջ 7:

<sup>31</sup> Fombad Ch. M., “Constitutional Reforms and Constitutionalism in Africa: Reflections on Some Current Challenges and Future Prospects,” Buffalo Law Review, Vol. 59, No. 4, 2011, էջ 1014:

- դատական համակարգի անկախություն,
- սահմանադրականության հսկողություն օրենքների նկատմամբ,
- հսկողություն սահմանադրության փոփոխության նկատմամբ,
- ❖ համաձայն Ջարգացող աշխարհի հանրագիտարանի<sup>32</sup>
  - կանոնավորված ընտրություններ,
  - որակյալ կառավարության հիմնադրում,
  - անկախ դատական համակարգ,
  - հանրային կարգուկանոն,
  - անհատական իրավունքների պաշտպանվածություն,
- ❖ համաձայն Մեյի և Կուպերի<sup>33</sup>
  - գրավոր սահմանադրության առկայություն,
  - մաքուր ընտրություններ,
  - իշխանության թևերի տարանջատում,
  - անհատական իրավունքների պաշտպանություն,
  - դատական համակարգի անկախություն,
- ❖ համաձայն Համեմատական իրավունքի Էլգարի հանրագիտարանի<sup>34</sup>
  - իրավունքի գերակայություն,
  - ժողովրդավարություն,
  - հարգանքը սահմանադրության նկատմամբ,
  - իշխանության թևերի տարանջատում,
  - դատական համակարգի անկախություն,
- ❖ համաձայն Սթեյլիերի և Վիսերի<sup>35</sup>
  - ժողովրդավարություն,
  - սահմանադրության գերակայություն,

<sup>32</sup> “Encyclopedia of the Developing World”, Edited by Leonard, Thomas M., Routledge, 2005, էջ 391:

<sup>33</sup> May R. J., Cooper S. L., “Intellectual Property Rights Under the Constitution’s Rule of Law,” Perspectives from FSF Scholars, Vol. 9, No. 31, 2014, էջ 2:

<sup>34</sup> Elgar Encyclopedia of Comparative Law, 2nd Edition, Edited by Jan Smits, Cheltenham: Edward Elgar Publishing, 2012, էջ 227:

<sup>35</sup> Steytler N., Visser J., “Sa’s Reputation is Undeserved,” Mail and Guardian, 06/09/2013, 00:00, Available at <https://mg.co.za/article/2013-09-06-00-sas-reputation-is-undeserved>:

- իրավունքի գերակայություն,
- իշխանության թևերի տարանջատում,
- սահմանափակված կառավարություն,
- դատական համակարգի անկախություն,

❖ համաձայն Օդոկիի<sup>36</sup>

- ժողովրդավարություն,
- մարդու հմնարար իրավունքների իրացվածություն,
- իրավունքի գերակայություն,
- մաքուր ընտրություններ,
- իշխանության թևերի տարանջատում,
- սահմանափակված կառավարություն,
- կառավարության հաշվետվողականություն,
- դատական համակարգի անկախություն,


Հաշվի առնելով վերոնշյալ մոտեցումները Ժ.Մ.-ի կողմից գնահատվել է Հայաստանի Հանրապետության սահմանադրականությունը: Գծապատկեր 1.1-ում ներկայացված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական քարտեզը, ներկայացված են գնահատված հենասյուների արդյունքները:

---

<sup>36</sup> Odoki, B. J. “The On-Going Constitution-Making Process in Uganda,” Report of the Chairman of Uganda Constitutional Commission, Available at: <http://www.constitutionnet.org/vl/item/going-constitution-making-process-uganda-hon-mr-justice-b-j-odoki-chairman-uganda-constituti>, էջ 5:

## Գծապատկեր 1.1

Սահմանադրականության Հայաստանի Հանրապետության քարտեզը<sup>37</sup>



### 1.1.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Կոռուպցիայի իրողությունը ինչպես հանրային կյանքում, այնպես էլ տնտեսական համակարգերում ուսումնասիրվում է քաղաքաիրավագիտական և սոցիալ-տնտեսագիտական առումներով: Ծավալվում են լայնամասշտաբ քննարկումներ և գիտահետազոտական աշխատանքներ, ստեղծվում են բազմաթիվ հակակոռուպցիոն պետաիրավական և հասարակական հանձնաժողովներ, որոնք միտված են վերհանել երկրում առկա կոռուպցիան և պայքար մղել այն հաղթահարելու համար: Այնուհանդերձ, ո՞րն է պատճառը, որ այսքան լայնածավալ հակակոռուպցիոն գործողությունները չեն հանգեցնում կոռուպցիոն իրադարձությունների նկատելի կրճատման:

<sup>37</sup> Մխիթարյան Ժ., «Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 127:

Հասկանալու համար հակակոռուպցիոն պայքարի առկա անարդյունավետությունները, անհրաժեշտություն է առաջանում սկզբնապես աստորոշել առկա իրավիճակը, այն է՝ հասկանալ կոռուպցիայի էությունը, վերջինիս չափման տեսամեթոդաբանական հիմքերը և առկա գնահատականները, ինչպես նաև կոռուպցիայի մակարդակի կրճատմանն/վերացմանն ընդառաջ ակադեմիական շրջանակների կողմից առաջադրված լուծումները:

Ակադեմիական գրականությունն առաջարկում է կոռուպցիայի բազմաթիվ սահմանումներ, որոնք սովորաբար լրացնում են միմյանց: Առավել հայտնի սահմանումներից են՝

- ❖ Վեբստերի (Webster) բառարան. ազնվության կամ շիտակության խաթարման, կամ կորստի գործողություն (գործընթաց)<sup>38</sup>:
- ❖ Օքսֆորդի (Oxford) բառարան. իշխանության անարդար կամ անլեգալ վարքագիծ<sup>39</sup>:
- ❖ Համաշխարհային Բանկ (World Bank). հանրային իշխանության չարաշահումը (անարդյունավետ օգտագործումը), որը հանգեցնում է մասնավոր շահի<sup>40</sup>:
- ❖ Յան Սենիոր. Կոռուպցիան կոռումպացված գործչի կամ գործակալի կողմից կատարվող մի գործողություն է, որի ժամանակ կոռումպացված անձը կամ գործակալը իրեն տրված իշխանության և/կամ դիրքը չարաշահելու միջոցով մատակարարում է գաղտնի ծառայություն 3-րդ կողմին, որի արդյունքում 3-րդ կողմը կարող է ազդեցություն ունենալ որոշակի իրողությունների վրա՝ ձեռք բերելով առավելություն, ինչի արդյունքում շահում է 3րդ կողմը և/կամ կոռումպացված գործիչը կամ գործակալը<sup>41</sup>:
- ❖ Դանիել Կաուֆման. <<Օրինական>> կոռուպցիան իշխանության չարաշահումն է օրենքի սահմաններում<sup>42</sup>:

---

<sup>38</sup> <http://www.merriam-webster.com/dictionary/corruption>

<sup>39</sup> <http://www.oxforddictionaries.com/definition/english/corruption>

<sup>40</sup> <http://www1.worldbank.org/publicsector/anticorrupt/corruptn/cor02.htm#define>

<sup>41</sup> Senior I., "Corruption – The World's Big Problem", Institute of Economic Affairs, London, 2006, էջ 19:

<sup>42</sup> Kaufmann D., Vicente P., "Legal Corruption", World Bank, 2005, էջ 4:

Վերոնշյալ սահմանումներից պարզ է դառնում, որ կոռուպցիան այնպիսի իրողություն է, երբ մասնակիցներից մեկը սովորաբար պետական կառավարման համակարգի որևէ տարր է, և սեփական օգտակարությունը առավելագույնին հասցնելու (մաքսիմալացնելու) նպատակով, այդ մասնակցի կողմից սովորաբար չարաշահվում և/կամ անարդյունավետ են օգտագործվում օրենսդրությամբ իրեն վերապահված պետաիրավական կամ իշխանական լծակները, որը բացասաբար է անդրադառնում հանրային բարեկեցության վրա:

Վերոնշյալ սահմանումներից կարելի է նաև եզրակացնել, որ կոռուպցիան սովորական կարգազանցություն չէ, քանի որ, ի տարբերություն մյուս բոլոր հանցագործությունների, այստեղ (ա) <<տուժող կողմ>> կարող է հանդիսանալ ամբողջ հանրությունը, (բ) կոռուպցիան սովորաբար իրականացվում է այն անձանց կողմից, ովքեր ենթադրաբար պետք է պայքարեն վերջինիս դեմ:

Ի լրացում իշխանական դիրքի չարաշահման, ինչն ավելի շուտ իրավագիտական հասկացություն է, տնտեսագիտական գրականության տեսանկյունից առավել կարևոր է ոչ թե կոռուպցիայի փաստը որպես իրավունքի չարաշահում, այլ այդ չարաշահման բացասական ազդեցությունը տնտեսության վրա: Ի հակադրություն հայտնի տնտեսագետ Ադամ Սմիթի <<անտեսանելի ձեռքի>> տեսության, ըստ որի շուկան ինքնակարգավորվող մեխանիզմ է<sup>43</sup>, տնտեսագետները հաճախ կոռուպցիան դիտարկում են որպես <<անտեսանելի սև ձեռք>>, ինչը խաթարում է տնտեսական մեխանիզմների և օրենքների օպտիմալ իրացվելիությունը՝ խոչընդոտելով հանրային բարեկեցության մակարդակի աճին<sup>44</sup>:

### 1.1.3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության համատեքստում կառավարման արդյունավետության հիմնահարցերը հանդիսանում են ուսումնասիրության կարևոր առարկա, քանի որ արդյունավետ հանրային կառավարումը ենթադրում է նաև

<sup>43</sup> Smith A., “An Inquiry into the Nature and Causes of Wealth of Nations”, Indianapolis: Liberty Fund, 1976b [1776].

<sup>44</sup> Harutyunyan Kh., “National Integrity System Assessment Armenia 2014”, TIAC, Working papers, 2015.

տնտեսական արդյունավետություն<sup>45</sup>: Կառավարման արդյունավետությունը բաղադրյալ հասկացություն է. այս եզրույթով բնութագրվում են կառավարման որակական տարբեր հատկանիշներ, ուստի, անհրաժեշտություն է առաջանում սահմանել կառավարման արդյունավետության հասկացությունը:

Տնտեսական գրականության մեջ կառավարման արդյունավետության առավել հայտնի և օպերացիոն սահմանում առաջարկում է Համաշխարհային Բանկը, որտեղ կառավարման արդյունավետության բաղադրյալ հասկացությունը բնորոշվում է որպես արդյունավետության բազմաթիվ գործոնների համախումբ՝

- ❖ Համաշխարհային Բանկ (World Bank). Կառավարման արդյունավետությունը ներառում է հանրային ծառայությունների որակը, քաղաքացիական ծառայությունների որակը և անկախությունը քաղաքական ճնշումներից, քաղաքականության ձևավորման և իրականացման որակը և կառավարության կողմից հավատարմությունը այդ քաղաքականությանը<sup>46</sup>:

Մյուս կողմից, Համաշխարհային Տնտեսական Համաժողովի կոմից գնահատվող Համաշխարհային մրցունակության ցուցանիշը ներառում է կառավարման արդյունավետությունը բնորոշող այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են<sup>47</sup>

- Կառավարման ծախսերի արդյունավետություն,
- Կառավարման հաշվետվողականություն,
- Կառավարման թափանցիկություն,

---

<sup>45</sup> Rafayet A, Kitenge E., Bedane, "Government Effectiveness and Economic Growth", Economics Bulletin, 2017, Volume B., 37, Issue 1, էջ 222-227, Acemoglu D., Johnson S., Robinson J.A., "The colonial origins of comparative development: An empirical investigation", American Economic Review, 2001, 91 (5), էջ 1369–1401, Acemoglu D., Robinson J., "The role of institutions in growth and development", Review of Economic Institutions, 2010, 1 (2), Barro, R.J., "Determinants of economic growth: A cross-country empirical study", MIT Press, 1998, Knack S., Keefer P., "Institutions and economic performance: Cross-country tests using alternative institutional measures", Economics and Politics, 1995, 7 (3), էջ 207–227, Kaufmann D., Kraay A., "Growth without Governance", Economia, 2002, 3(1), էջ 169– 229, Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., "Governance matters VII: Governance indicators for 1996–2007", World Bank Policy Research Paper, 2008, Adserà A., Boix C., Payne M., "Are You Being Served? Political Accountability and Quality of Government", J. Law Econ Organ., 2003, 19 (2), էջ 445-490:

<sup>46</sup> <https://info.worldbank.org/governance/wgi/pdf/ge.pdf>

<sup>47</sup> [http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017\\_FINAL.pdf](http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf)

- Հովանավորչությունը կառավարման ապարատում,
- Կոռուպցիան կառավարման ապարատում,
- Քաղաքական կայունություն,
- Իշխանության արդյունավետ տարանջատում,
- Իրավունքի գերակայություն,
- Կրթության մակարդակ,
- Առողջապահության մակարդակ,
- Հանրային ծառայությունների հասանելիություն,
- Մաքուր ընտրություններ,
- Ժողովրդավարության աստիճան,
- Արտահայտման ազատություն,
- Ազատ մեդիա,
- և այլն:

Այս ամենից պարզ է դառնում, որ կառավարման արդյունավետության հիմնարար հասկացությունը ներառում է որակական այնպիսի կատեգորիաներ, որոնք վերաբերում են թե՛ կառավարման համակարգին և թե՛ առկա համակարգում կառավարման գործունեությանը: Այսպիսով, կառավարման արդյունավետության հասկացությունը կարելի է պայմանականորեն բաժանել 2 մասի՝ կառավարման գործառնական և համակարգային արդյունավետության:

Համակարգային արդյունավետության հասկացության ներքո կարող են ներառվել այնպիսի բնորոշիչներ, որոնք ներկայացնում են առկա համակարգի որակական հատկանիշները, ինստիտուտների առկայությունը և փոխկապակցվածությունը, սահմանադրությամբ իշխանության տարանջատման ու զսպումների և հակակշիռների համակարգը և այլն:

Գործառնական արդյունավետության եզրույթը կարող է բնորոշել կառավարման ընդհանուր քաղաքականությունը և առկա համակարգի միջոցով այդ քաղաքականության իրացվելիության որակը: Այս համատեքստում կոռուպցիան և հովանավորչությունը հանդիսանում են կառավարման գործառնական արդյունավետության բնութագրիչներ:



#### 1.1.4. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում սահմանադրականությունը բնորոշող կարևոր բաղադրիչ է հանդիսանում երկրում առկա իրավունքի գերակայության մակարդակը, ինչը բնութագրում է երկրի օրինավորության աստիճանը: Իրավա-տնտեսագիտական գրականությունն առաջարկում է իրավունքի գերակայության հասկացության զանազան սահմանումներ, որոնցից առավել հայտնիները ներկայացված են ստորև՝

- ❖ Վեբստերի (Webster) բառարան. իրավիճակ, որտեղ երկրի օրենքներին ենթարկվում են բոլորը<sup>48</sup>:
- ❖ Օքսֆորդի (Oxford) բառարան. իշխանության կամայականության սահմանափակումը՝ ենթարկելով հստակ որոշված և սահմանված օրենքներին<sup>49</sup>:
- ❖ Իրավունքի գերակայության Ավստրալիայի ինստիտուտ (Rule of Law Institute of Australia). Ժողովուրդը (ներառյալ կառավարությունը) պետք է կառավարվի օրենքի կողմից և ենթարկվի դրան, և օրենքը պետք է լինի այնպիսին, որ ժողովուրդը ունակ լինի հետևելու դրան<sup>50</sup>:

Ի լրացում վերը նշվածի, Համաշխարհային արդարադատության ծրագիրը (World Justice Project) սահմանում է իրավունքի գերակայությունը հիմնված 4 հիմնական հասկացությունների վրա<sup>51</sup>: Դրանք են՝

1. Հաշվետվողականություն. կառավարությունը/պետությունը, ինչպես նաև մասնավոր անձիք հաշվետվողական են օրենքի առաջ:
2. Արդար օրենքներ. օրենքները հստակ են, հրապարակված, կայուն և արդար: Կիրառվում են հավասարապես և պաշտպանում մարդկանց հիմնարար իրավունքները, ներառյալ մարդկանց և իրենց

<sup>48</sup> <https://www.merriam-webster.com/dictionary/rule%20of%20law>

<sup>49</sup> [https://en.oxforddictionaries.com/definition/rule\\_of\\_law](https://en.oxforddictionaries.com/definition/rule_of_law)

<sup>50</sup> <https://www.ruleoflaw.org.au/what-is-the-rule-of-law/>

<sup>51</sup> <https://worldjusticeproject.org/about-us/overview/what-rule-law>

ունեցվածքի/սեփականության անվտանգությունը և մարդու այլ հիմնական իրավունքները:

3. Բաց կառավարություն. գործընթացները, որոնց միջոցով օրենքները ուժի մեջ են մտնում, կառավարվում և կիրառվում, հասանելի են, արդար և արդյունավետ:
4. Հասանելի և անկողմնակալ վեճերի լուծում. Արդարադատությունը սահմանափակ ժամանակով հանձնվում է իրավասու, մրցունակ, էթիկական և անկախ ներկայացուցիչների, ովքեր հասանելի են, ունեն բավարար ռեսուրսներ և արտացոլում են այն համայնքների դեմքը, որոնց ծառայում են:

Այսպիսով, վերոնշյալ սահմանումներից հետևում է, որ իրավունքի գերակայությունը մի կողմից ենթադրում է ողջամիտ և արդարացի օրենսդրական կարգավորումների առկայություն, իսկ մյուս կողմից՝ այդ օրենքների անկողմնակալ և պատշաճ իրացվելիություն: Ստացվում է, որ իրավունքի գերակայության հասկացությունը բավական մոտ է գտնվում սահմանադրականության հասկացությանը և նմանօրինակ արտացոլում ունենում երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդավարական զարգացման հարցում:

#### **1.1.5. ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ**

Ինստիտուցիոնալ տնտեսագիտության համատեքստում հանրային բարեկեցության եզրույթը հանդիսանում է բաղադրյալ հասկացություն, որը վերաբերում է այնպիսի տնտեսական կատեգորիաների, ինչպիսիք են տնտեսական աճը, տնտեսական զարգացումը, վերջինիս ներառականությունը, եկամտի բաշխումը և վերաբաշխումը, սոցիալական ծրագրերի որակը և իրացվելիությունը, և այլն:

Հանրային բարեկեցության աստիճանը, թեև, լինելով համեմատաբար արստրակտ հասկացություն, լավագույնս նկարագրում է երկրի տնտեսական զարգացվածության մակարդակը:

Գրականությունն առաջարկում է հանրային բարեկեցության բազմաթիվ սահմանումներ, որոնցից են՝

- ❖ Օքսֆորդի (Oxford բառարան. Համայնքի կամ հասարակության բարեկեցությունը, հատկապես առողջապահության և տնտեսական հարցերի վերաբերյալ<sup>52</sup>:
- ❖ Վեբստերի (Webster) բառարան. Բարեկեցիկ իրավիճակը հատկապես երջանկության, բարօրության և բարգավաճման առումով<sup>53</sup>:
- ❖ Բիզնես (Business-Dictionary) բառարան. Ռեսուրսների և պայմանների առկայությունը՝ ողջամտորեն հարմարավետ, առողջ և ապահով ապրելու համար<sup>54</sup>:

Ինչպես պարզ է դառնում վերոնշյալ սահմանումներից, հանրային բարեկեցությունը վերաբերում է ոչ միայն տնտեսական բարեկեցությանը, այլ նաև այնպիսի սոցիալական բնորոշիչների, ինչպիսիք են առողջությունը, երջանկությունը, ապահովությունը և այլն:

Այսպիսով, հետագա վերլուծություններում հանրային բարեկեցության ուսումնասիրությունը կկառուցվի վերը նկարագրված բնորոշիչների համատեքստում:

## 1.2. ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պետական և հանրային ինստիտուտներում, ինչպես նաև ամբողջ երկրում առկա կոռուպցիայի մակարդակի գնահատման կառուցակարգերից մեկը խորքային հարցումներն են և այդ հարցումների վրա հիմնված փորձագիտական գնահատականները: Այս տեսակի գնահատականներից են, օրինակ, կոռուպցիայի ընկալման համաթիվը՝ ԿԸՀ<sup>55</sup> (CPI - Corruption Perceptions Index), որը յուրաքանչյուր տարի գնահատվում և հրապարակվում է Թրանսպարենսի Ինթերնեյշնալի կողմից,

<sup>52</sup> [https://en.oxforddictionaries.com/definition/social\\_welfare](https://en.oxforddictionaries.com/definition/social_welfare)

<sup>53</sup> <https://www.merriam-webster.com/dictionary/welfare>

<sup>54</sup> <http://www.businessdictionary.com/definition/welfare.html>

<sup>55</sup> <http://transparency.am/hy/cpi>

կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը՝ ԿՀԲ<sup>56</sup> (GCP – Global Corruption Barometer), և այլն:

### Աղյուսակ 1.1

#### Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր 2013<sup>57</sup>

Երկիր	Կուսակցություններ	Խորհրդարանական/օրենսդիր իշխանություն	Ոստիկանություն	Քիզեն/նաանավոր հասրված	Լրատվամիջոցներ	Պետական պաշտոնյաներ/հանրային ծառայողներ	Դատական համակարգ	ՀԿ-ներ	Կրոնական կազմակերպություններ	Զինված ուժեր	Կրթական համակարգ	Առողջապահական ինժնարկներ
Համաշխարհային միջին	3.8	3.6	3.7	3.3	3.1	3.6	3.6	2.7	2.6	2.9	3.1	3.3
Թվարկված երկրների միջին	3.6	3.6	3.6	3.4	3.1	3.6	3.7	2.7	2.5	2.8	3.2	3.6
Հայաստան	3.7	3.7	3.9	3.5	3	4	4	2.8	2.9	3.2	3.7	4
Ադրբեջան	2.5	2.5	2.9	2.8	2.5	2.8	3.1	2.5	2.3	2.5	2.8	3.1
Վրաստան	2.9	3	2.5	2.8	3.2	2.6	3.4	2	1.6	1.9	2.4	2.8
Մոլդովա	4.1	4.2	4.2	3.6	3	4	4.3	2.9	2.3	3.2	3.7	4.1
Ռուսաստան	4.2	4.3	4.5	3.6	3.7	4.6	4.4	3.3	3.1	4	4	4.1
Ուկրաինա	4.1	4.2	4.4	3.9	3.4	4.3	4.5	3.2	3	3.5	4	4.2
Ղազախստան	2.6	2.6	3.9	3.2	2.4	3.5	3.8	2.6	2.1	2.9	3.6	3.6
Էստոնիա	3.7	3.1	2.6	3.3	2.6	3.2	2.8	2.4	2.1	2	2.3	2.7
Լատվիա	4	3.7	3.5	3.4	3	3.8	3.5	2.4	2.1	2.3	2.5	3.4
Լիտվա	4.2	4.3	3.9	3.6	3.3	3.9	4.3	2.6	2.5	2.4	3.2	4.1
Թուրքիա	3.9	3.5	3	3.4	3.6	3.2	3.1	3	3.1	2.9	3.2	3.2

<sup>56</sup> [http://transparency.am/storage/GCB2013\\_Tables\\_am.pdf](http://transparency.am/storage/GCB2013_Tables_am.pdf)

<sup>57</sup> [http://transparency.am/storage/GCB2013\\_Tables\\_am.pdf](http://transparency.am/storage/GCB2013_Tables_am.pdf)

Աղյուսակ 1.1-ում և 1.2-ում ներկայացված են 2013 թ.-ի ԿՀԲ-ի, ինչպես նաև 2010-2015 թթ.-ի ընթացքում ԿԸՀ-ի արդյունքները Հայաստանի համար՝ համեմատության մեջ դրվելով Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ որոշ երկրների հետ:

Աղյուսակ 1.1-ում ըստ ոլորտների/հաստատությունների ներկայացված են կոռուպցիայի մակարդակի վերաբերյալ հանրային կարծիքի գնահատականներ:

Այսպիսով, համաշխարհային միջին ցուցանիշների համաձայն, ըստ հանրային կարծիքի ամենակոռումպացված ոլորտներ/հաստատություններ են համարվում կուսակցությունները (3.8 միավոր): Թվարկված երկրների միջին ցուցանիշների համաձայն, ըստ հանրային կարծիքի ամենակոռումպացված ոլորտ/հաստատությունը դատական համակարգն է (3.7 միավոր): Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նշված է աղյուսակում, ըստ հանրային կարծիքի առավել բարձր կոռուպցիոն մակարդակ առկա է պետական պաշտոնյաների կողմից հանրային ծառայությունների ոլորտում, դատական համակարգում և առողջապահական հիմնարկներում (բոլորը ստացել են 4 գնահատական): Փոքր-ինչ <<զիջում>> է ուստիկանանությունը (3.9 միավոր): Իսկ ամենացածր կոռուպցիայի մակարդակ, ըստ հարցվածների, առկա է հասարակական կազմակերպություններում (2.8 բալ): Եթե համեմատենք համաշխարհային միջինի հետ, ապա Հայաստանի Հանրապետությունում միջինից ցածր կոռուպցիան, ըստ հարցվածների, առկա է միայն կուսակցություններում և լրատվամիջոցներում: Իսկ թվարկված երկրների միջին ցուցանիշի համեմատ Հայաստանի Հանրապետությունում միջինից ցածր կոռուպցիան, ըստ հարցվածների, առկա է միայն լրատվամիջոցներում:

Աղյուսակ 1.2-ում ներկայացված է Հայաստանի Կոռուպցիայի Ընկալման Համաթիվը 2010-2015 թվականներին՝ այլ երկրների համեմատությամբ:

Ինչպես երևում է աղյուսակ 1.2-ից, 2010-2015թթ.-ի ընթացքում Հայաստանը տատանվել է 26-37 միջակայքում, ինչը, թերևս բավական ցածր ցուցանիշ է: Եթե համեմատենք այլ երկրների հետ (ԱՊՀ երկրներ, հարևան երկրներ), ապա կարող ենք արձանագրել, որ Հայաստանը ներկայացված ժամանակային միջակայքում միշտ ունեցել է թվարկված երկրների միջինից ավելի ցածր ցուցանիշ: Ավելին, նույն եզրահանգմանը կարելի է հանգել՝ Հայաստանը համեմատելով համաշխարհային

միջին ցուցանիշի հետ: Նկատելի է նաև այն հանգամանքը, որ 2010-2015թթ.-ի ընթացքում Հայաստանը բարելավել է իր դիրքերը ԿԸՀ-ի իմաստով: Բացառություն է կազմում 2015 թվականը 2014 թվականի համեմատությամբ, երբ մեր երկրում ԿԸՀ-ն անկում է ապրել՝ 37 միավորից հասնելով մինչև 35 միավոր:

### Աղյուսակ 1.2

Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) Հայաստանի համար 2010-2015 թթ.<sup>58</sup>

Երկիր	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
Համաշխարհային միջին	40	40	43.3	42.7	43.2	42.6
Թվարկված երկրների միջին	35.7	35.4	40.6	41.4	42	41.9
Հայաստան	26	26.3	34	36	37	35
Ադրբեջան	24	23.8	27	28	29	29
Վրաստան	38	41.3	52	49	52	52
Մոլդովա	29	28.8	36	35	35	33
Ռուսաստան	21	24.5	28	28	27	29
Ուկրաինա	24	23	26	25	26	27
Ղազախստան	29	26.9	28	26	29	28
Էստոնիա	65	63.5	64	68	69	70
Լատվիա	43	41.9	49	53	55	55
Լիտվա	50	47.5	54	57	58	61
Թուրքիա	44	42.1	49	50	45	42

<sup>58</sup> <http://transparency.am/hy/cpi>

Աղյուսակ 1.3-ում ներկայացված է համաշխարհային բանկի կողմից գնահատված կոռուպցիայի կառավարման ցուցանիշը<sup>59</sup>: Համեմատության համար աղյուսակում ներկայացվել են աղյուսակ 1.2-ում ներառված երկրների նույն խումբը:

Աղյուսակ 1.3  
Կոռուպցիայի կառավարման ցուցանիշ<sup>60</sup>

Երկիր	2010 թ.	2011 թ.	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.
Համաշխարհային միջին	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
Թվարկված երկրների միջին	-0.300	-0.267	-0.203	-0.181	-0.130	-0.130
Հայաստան	-0.696	-0.657	-0.588	-0.532	-0.524	-0.534
Ադրբեջան	-1.244	-1.179	-1.127	-0.967	-1.019	-0.930
Վրաստան	0.008	0.118	0.401	0.469	0.786	0.680
Մոլդովա	-0.673	-0.620	-0.614	-0.755	-0.851	-0.911
Ռուսաստան	-1.091	-1.065	-1.042	-1.013	-0.919	-0.949
Ուկրաինա	-1.027	-1.050	-1.077	-1.132	-0.994	-0.980
Ղազախստան	-0.998	-0.991	-0.919	-0.929	-0.830	-0.853
Էստոնիա	0.995	1.053	1.096	1.189	1.303	1.294
Լատվիա	0.228	0.287	0.245	0.328	0.415	0.468
Լիտվա	0.377	0.327	0.394	0.426	0.559	0.618
Թուրքիա	0.029	0.044	0.158	0.092	-0.148	-0.154

Այս աղյուսակից պարզ է դառնում, որ ինչպես որ ԿԸՀ ցուցանիշի դեպքում, այնպես էլ կոռուպցիայի կառավարման ցուցանիշի դեպքում, դիտարկվող ժամանակաշրջանում Հայաստանի ցուցանիշը ցածր է թե՛ համաշխարհային միջինի և

<sup>59</sup> <http://databank.worldbank.org/data/home.aspx>

<sup>60</sup> <http://databank.worldbank.org/data/home.aspx>

թե՛ թվարկված երկրների միջին ցուցանիշից: Աղյուսակից պարզ է դառնում, նաև, որ դիտարկվող ժամանակահատվածում Հայաստանը բարելավել է իր դիրքը նշված ցուցանիշի իմաստով:

### 1.3. ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երկրում գործող իրավական դաշտն ունի առանձնահատուկ կարևորություն ինչպես ժողովրդավարական սկզբունքների պահպանման, այնպես էլ սոցիալ տնտեսական զարգացման համար: Օրենսդիր իշխանության կողմից սահմանված իրավական դաշտն իրենից ներկայացնում է օրենքների համախումբ, որը նպատակ ունի համակարգել գործադիր իշխանության քաղաքականությունն ու քաղաքացիական հասարակության բոլոր իրավական, քաղաքական և տնտեսական հարաբերությունները: Այս դաշտում որպես «մայր օրենք» է ծառայում երկրի սահմանադրությունը. սահմանադրությամբ, սովորաբար, սահմանվում են քաղաքական/ժողովրդավարական, իրավական և սոցիալ-տնտեսական ընդհանուր դրույթներ: Վերջինիս դրույթների պահպանմանն ու օպտիմալ իրացվելիությանն ընդառաջ ձևավորվում են քրեական, վարչական, քաղաքացիական և այլ օրենսգրքեր: Այս ամենը միասին ձևավորում են երկրի ընդհանուր օրենսդրական դաշտը: Այս դաշտում առկա կարգավորումների երաշխիք է համարվում դատական իշխանությունը, որը նպատակաուղղված է իրականացնելու օրենքով սահմանված իրավական կարգավորումների անխափան կատարումը:

Հանրային բարեկեցության և զարգացման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն «որակյալ» օրենսդրական դաշտի առկայությունը, այլև օրենքով սահմանված կարգավորումների օպտիմալ իրացվելիությունը իրական կյանքում: Այս իմաստով, մասնավորապես, սահմանադրական նորմերի իրացվելիությունը համարվում է կարևորագույն բաղկացուցիչներից մեկը հանրային բարեկեցության պահպանման և զարգացման համար: Սահմանադրական նորմերի իրացվելիության մակարդակը՝ սահմանադրականության մակարդակը, հանդիսանում է արդի հիմնախնդիր և



ուսումնասիրվում է ինչպես իրավագիտական, այնպես էլ տնտեսագիտական գրականության կողմից: Մասնավորապես, ուսումնասիրության հետաքրքրական առարկա է հանդիսանում սահմանադրական նորմերի օպտիմալ իրացվելիությանն խոչընդոտող գործոնների բացահայտումը, ինչպես նաև այդ գործոնների կրճատմանը/չեզոքացմանն ուղղված քաղաքականության մշակումը: Այս տեսակի խոչընդոտող գործոն է հանդիսանում երկրում առկա կոռուպցիայի մակարդակը: Այլ կերպ ասած, սահմանադրական նորմերի օպտիմալ իրացվելիությանն ուղղված օրենսդրական կարգավորումները, անաչառ դատական համակարգը կարող են թե՛ տեղային և թե՛ արմատական իմաստով չառաջնորդվել բացարձակապես օրենքի տառով՝ կոռուպցիայի առկայության դեպքում: Պատկերավոր ասած, վերը նկարագրված դեպքերը տանում են այն իրավիճակին, երբ օրենքը մնում է գրված թղթի վրա և չի իրացվում իրական կյանքում:

Այսպիսով, հետաքրքրական է դառնում ուսումնասիրել կոռուպցիան կարգավորող օրենսդրական դաշտը և երկրում առկա հակակոռուպցիոն քաղաքականությունը:

Կոռուպցիայի քրեական պատասխանատվության մասին Եվրոպական Խորհրդի Կոնվենցիան և դրան լրացնող լրացուցիչ արձանագրությունները Հայաստանի Հանրապետության ԱԺ-ի կողմից վավերացվել են 2004 թ.-ի հունիսի 8-ի համար 105-3<sup>61</sup> և 106-3<sup>62</sup> որոշումներով: Միաժամանակ վավերացվել է նաև կոռուպցիայի քաղաքացիաիրավական պատասխանատվության մասին Եվրոպական Խորհրդի կոնվենցիան<sup>63</sup>: Վավերացումը հանգեցրեց քրեական և վարչական օրենսդրական փոփոխություններին կոռուպցիայի անօրինականության ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն միության անդամ (Анти-Коррупционный Сеть для стран Восточной Европы и Центральной Азии ОЭСР): Վերջինիս շրջանակներում իրականացվող գործողությունների ծրագիրը Հայաստանի Հանրապետության համար ընդունվել է 2003 թ.-ին Ստամբուլում (Ստամբուլյան

<sup>61</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4202>

<sup>62</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4203>

<sup>63</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24512>

գործողությունների ծրագիր)<sup>64</sup>: 2004 թ.-ին տրվել է երկրում առկա իրավիճակի գնահատականը և տրվել են առաջարկություններ կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ: Առաջարկությունների հիմնական ուղղությունը հանդիսանում էր կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականությունը, կոռուպցիայի անօրինականացումը և վերջինիս կանխարգելման համալիր գործիքակազմը: Վերոհիշյալ առաջարկությունների կատարման վերաբերյալ իրականացվել է 3 փուլից բաղկացած մշտադիտարկում 2006, 2010, 2014 թթ.-ին: Յուրաքանչյուր փուլի արդյունքում առաջարկությունները փոփոխվել կամ լրացվել են<sup>65</sup>:

2004 թ.-ին Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է նաև Եվրոպական Խորհրդի շրջանակներում կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբին (ГРЕКО (GRECO) – группа государств против коррупции, в рамках Совета Европы)<sup>66</sup>: Անդամակցության շրջանակներում 2006 թ.-ին իրականացվել են մշտադիտարկման առաջին և երկրորդ փուլերը, իսկ 2010 թ.-ին՝ երրորդը: Հայաստանի Հանրապետությանը տրվել են առաջարկություններ, որոնք հիմնականում նույնական էին Ստամբուլյան գործողությունների ծրագրի շրջանակներում տրված առաջարկություններին: Դրանք են՝ կոռուպցիայի դեմ պայքարի պետական քաղաքականության ամրապնդումը, դատական համակարգի և օրինապահ մարմինների անկախության ապահովումը, կոռուպցիայի անօրինականացումը, հանրության շրջանակներում կոռուպցիայի հանդեպ հանդուրժողականության նվազեցումը, իշխանության գործողությունների թափանցիկության ապահովումը, տեղեկատվության հասանելիության աստիճանի բարելավումը, ինչպես նաև պետական ծառայողների ուսուցումը կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում: Մշտադիտարկման հանձնաժողովը միջին է գնահատել տրված առաջարկությունների կատարումը ՀՀ-ում. բազում առաջարկություններ չեն կատարվել կամ կատարվել են մասամբ, որոշ առաջարկությունների իրականացումը կատարվում է դանդաղ տեմպով<sup>67</sup>:

<sup>64</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/430.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf)

<sup>65</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100900>

<sup>66</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24512>

<sup>67</sup> <https://transparency.am/files/publications/1481277964-0-512288.pdf>

Միացյալ Ազգերի Կազմակերպության կոնվենցիան ընդդեմ կոռուպցիայի Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 2006թ.-ի հոկտեմբերի 25-ին<sup>68</sup>: Այնուհետև Հայաստանի Հանրապետությունը իրականացրել է ՄԱԿ-ի վերոնշյալ կոնվենցիայի իրավիճակին համապատասխանության վերլուծություն: Այս վերլուծության արդյունքները օգտագործվել են 2009-2012 թթ.-ին հակակոռուպցիոն քաղաքականության ծրագրի մշակման ընթացքում:

Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է նաև քրեական գործերում փոխադարձ իրավական օգնության եվրոպական կոնվենցիայի 1993 թ.-ի լրացուցիչ արձանագրության, քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերում փոխօգնության և համագործակցության Մինսկի կոնվենցիայի և երկկողմ համաձայնագրերի անդամ<sup>69</sup>:

Կառավարման համակարգի բարեփոխումը և կոռուպցիայի դեմ պայքարը 2008 թ.-ից ի վեր հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության հիմնական ուղղություններից<sup>70</sup> (ՀՀ կառավարության 2008 թ.-ի ապրիլի 28-ի համար 380-ա որոշում):

Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում կառավարության ծրագիրը նախատեսում էր 4 հիմնական ուղղություն՝ (ա) կոռուպցիայի դեմ պայքարի ներառումը կառավարական ծրագրերում, (բ) քաղաքական մրցակցության իրավական զարգացումը, (գ) կոռուպցիոն փաստերի հետաքննության ապահովումը օրինապահ մարմինների միջոցով, (դ) ՀՀ-ի նոր հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը<sup>71</sup>:

2003-2007 թթ.-ի հակակոռուպցիոն քաղաքականությունը և դրա իրականացման գործողությունների ծրագիրը հիմնականում միտված էր իրավական դաշտի կատարելագործմանը<sup>72</sup>: Սակայն աշխատանքի արդյունքում ՀՀ կառավարությունը խոստովանեց, որ 2003-2007 թթ.-ի հակակոռուպցիոն քաղաքականության շրջանակներում չեն դրվել պարզ և հստակ խնդիրներ և չեն դիտարկվել կոռուպցիայի դեմ պայքարի կոնկրետ գործողություններ:

<sup>68</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107648>

<sup>69</sup> [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/MAR28-2.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/MAR28-2.pdf)

<sup>70</sup> <http://www.irtek.am/views/act.aspx?tid=43349&sc=p4#p4>

<sup>71</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/430.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf)

<sup>72</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/430.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf)

2003-2007 թթ.-ի հակակոռուպցիոն քաղաքականության արդյունքների գնահատման համաձայն, որը ներկայացված է եղել նոր ծրագրում, երկրում ընդունվել են 50-ից ավելի օրենքներ, իսկ հակակոռուպցիոն քաղաքականությունը կյանքի կոչելու, կոռուպցիոն փաստերը վեր հանելու և հետաքննելու նպատակով ստեղծվել են համակարգող կազմակերպություններ<sup>73</sup>:

ՀՀ-ում 2009-2012 թթ.-ի կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը ընդունվել է 2009 թ.-ի հոկտեմբերի 8-ի ՀՀ կառավարության համար 1272-ն որոշմամբ<sup>74</sup>: Այս քաղաքականությունը իրենից ներկայացնում է ընդգրկուն 58 էջանոց փաստաթուղթ և ներառում է նախորդ հակակոռուպցիոն քաղաքականության արդյունքների գնահատականը, նոր քաղաքականության խնդիրները, կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքների և մեխանիզմների նկարագրությունը, կոռուպցիայի անօրինականացումը, իրավապահ մարմինների համապատասխան գործողությունները, քաղաքացիական հասարակության ընդգրկումը կոռուպցիայի դեմ պայքարում, ինչպես նաև հստակ գործողությունների ցանկ, որոնք պետք է իրագործվեն համապատասխան ծրագրի շրջանակներում: Բացի այդ, այս քաղաքականությունը նախատեսում էր մշտադիտարկման ցուցանիշների համակարգի ներդրում և գործողությունների ծրագրերի իրականացման գնահատում: Նույն որոշմամբ հաստատվել էր 2009-2012 թթ.-ի քաղաքականության իրացման գործողությունների ծրագիրը, որում ներառվել են նաև միջոցառումների ծրագրի իրականացման պատասխանատու մարմինները և ֆինանսավորման աղբյուրները: Գործողությունների ծրագրի 70 տոկոս միջոցառումները վերաբերել են կոռուպցիայի կանխարգելմանը, 15 տոկոսը՝ կոռուպցիայի անօրինականացման առումով իրավական դաշտի լրամշակմանը, 15 տոկոսը՝ քաղաքացիական հասարակության ներգրավմանը կոռուպցիայի դեմ պայքարում<sup>75</sup>:

2009-2012 թթ.-ի ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության մեջ և դրա իրականացման գործողությունների ծրագրում սահմանված էր, որ երկրում բացակայում է կոռուպցիոն իրավախախտումների բազմակողմանի և հասանելի վիճակագրություն:

<sup>73</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/430.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf)

<sup>74</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68627>

<sup>75</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/430.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf)

Մասնավորապես՝ գործող հաշվետվողական համակարգը չի ապահովում կոռուպցիայի հետ կապված բոլոր տեսակի հանցագործությունների մասին տեղեկատվություն, ինչպես նաև այդ հանցագործություններում պաշտոնատար անձանց և պետական մարմինների կոռուպցիայում ներգրավվածության աստիճանի մասին տեղեկատվություն, ինչը դժվարեցնում է տարբեր մարմիններում իրավիճակի համեմատական վերլուծության իրականացումը, կոռուպցիոն ռիսկերի, միտումների և մասշտաբի վերհանումը: ՀՀ-ում բավական սահմանափակ են հետազոտության ծավալները, որոնք վերաբերում են կոռուպցիայի մասշտաբին, ըստ ոլորտների կառուցվածքին, պաշտոնական վիճակագրության առկայությանը և այլն: Ընդհանուր առմամբ այս իրավիճակը ՀՀ-ում անփոփոխ է մնացել 2004-2010 թթ.-ին<sup>76</sup>:

2009-2012 թթ.-ին հակակոռուպցիոն քաղաքականության ռազմավարությունը հանդիսանում էր ազգային հակակոռուպցիոն քաղաքականության գլխավոր բաղկացուցիչը, սակայն 3-րդ փուլի մշտադիտարկում իրականացնող խմբի գնահատմամբ Ստամբուլյան գործողությունների ծրագիրը չի իրականացվել պատշաճ կերպով, իսկ կառավարությունը չի ներկայացրել համակարգային օժանդակություն և ռեսուրսներ ծրագրի գործնական իրականացման համար: Ռազմավարության հիմնական նպատակը հանդիսանում էր երկրում կոռուպցիայի մակարդակի նվազեցումը, այնուհանդերձ, վերոգրյալ նպատակը հասանելի չդարձավ:

ՀՀ կառավարության պնդմամբ, հիմնական պատճառները, որոնք կարող էին բացասաբար ազդել ռազմավարության իրագործման վրա վերաբերում են հենց ռազմավարության որակին և գործողությունների ծրագրի մշակման թերություններին: Կառավարությունը ընդգծեց նաև գնահատման համակարգում առկա թերությունները և ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բացակայությունը<sup>77</sup>: Կրթության, գիտության և առողջապահության նախարարությունները մշակեցին իրենց սեփական հակակոռուպցիոն պլանը, որը հիմնված էր 2009-2012 թթ.-ի ռազմավարության վրա<sup>78</sup>: Նրանք շարունակեցին իրենց ճյուղային հակակոռուպցիոն

<sup>76</sup> <https://transparency.am/storage/overview-of-corruption-in-armenia-hy.pdf>

<sup>77</sup> <https://transparency.am/storage/overview-of-corruption-in-armenia-hy.pdf>

<sup>78</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/1141\\_1k\\_voroshum.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1141_1k_voroshum.pdf)

գործողությունների իրականացումը այն դեպքում, երբ ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունը բացակայում էր:

Հակակոռուպցիոն ռազմավարության նախորդ փուլի դադարեցումից հետո՝ 2012թ.-ին, ՀՀ-ում չընդունվեց նոր հակակոռուպցիոն քաղաքականություն: ՀՀ կառավարությունը 2013թ. իրականացրեց նախորդ փուլի ռազմավարության արդյունքների գնահատումը<sup>79</sup>: Վերոնշյալում տրվեցին ծայրահեղ քննադատական գնահատականներ, որոնք վերաբերում էին համակարգային անարդյունավետությանը. ի լրումն վերոհիշյալին հաշվետվությունում ներառվեց նաև նախազգուշացման մեխանիզմ ստեղծելու միջազգային կանոնակարգերի ներդրման անհրաժեշտությունը: Հաշվետվությունը հիմք ծառայեց հետագա հակակոռուպցիոն քաղաքականությունը մշակելու համար:

Նոր հակակոռուպցիոն ռազմավարության մշակումն իրականացնելու համար ՀՀ կառավարությունը կազմեց միջգերատեսչական աշխատանքային խումբ, որը 2013-2014թթ. կազմեց «Պետական կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի» ծրագիրը: Այս ծրագիրը դրվեց լայնամասշտաբ քննարկման պետական գերատեսչությունների կողմից: 2015թ. տեղի ունեցավ կոռուպցիայի դեմ պայքարի առաջին նիստը, որի ընթացքում նշվեց, որ կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է ՀՀ կառավարության ներքին քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը և վերջինիս արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան կառուցվածքային միավոր: Ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ, որը համակարգում է հակակոռուպցիոն բարեփոխումները և հետևում դրանց պատշաճ կատարմանը<sup>80</sup>:

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստին ներկայացվեց նոր հակակոռուպցիոն ռազմավարությունը 2015-2018թթ.-ի համար<sup>81</sup>: Հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակ է հանդիսանում կոռուպցիայի տարածվածության կրճատումը՝ բարեխիղճ և պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից, քաղիասարակության կողմից պետական կառավարման

<sup>79</sup>[http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/1141\\_1k\\_voroshum.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1141_1k_voroshum.pdf)

<sup>80</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/1141\\_1k\\_voroshum.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1141_1k_voroshum.pdf)

<sup>81</sup> [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/1141\\_1k\\_voroshum.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1141_1k_voroshum.pdf)

գերատեսչությունների հանդեպ վստահության բարձրացումը և կոռուպցիայի հանդեպ անհանդուրժողականության միջավայրի ստեղծումը: Ռազմավարությունը բաղկացած է 4 մասից: 1-ին մասում ներկայացված է ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն քաղաքականությունը, 2-րդ մասում՝ ծրագրի իրականացման համար ֆինանսական աղբյուրները, 3-րդ մասում՝ ծրագրի իրականացման ոլորտների հաջորդականությունը, իսկ 4-րդում ներկայացված է հակակոռուպցիոն ռազմավարության իրագործման մշտադիտարկման համար թվային ցուցանիշների համակարգը: Այս ծրագրում ներկայացված են հետևյալ հիմնական ոլորտները՝ կրթություն, առողջապահություն, հարկային համակարգ: Այստեղ բաց են թողնվել հետևյալ հիմնական ոլորտները՝ դատական իշխանություն, օրինապահ մարմիններ, քաղաքական կոռուպցիա և այլն:

Ծրագրի իրականացման ընթացքում ռազմավարության մեջ ներառվեցին նաև դատական և իրավական համակարգի բարեփոխումներ՝ հաշվի առնելով վերջիններիս կարևորության աստիճանը: Մասնավորապես, երկրում ներդրվեց հանրապետության պատմության մեջ նախադեպը չունեցող ազդարարման համակարգ, ինչը թույլ է տալիս անանուն կերպով հաղորդել կոռուպցիոն իրադարձության մասին: Վերջինս նպատակ էր հետապնդում բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները, նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան և նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը, ինչը, թերևս համաձայն միջազգային փորձի, հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնաքարերից մեկը<sup>82</sup>:

---

<sup>82</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=114364>

## **ԳԼՈՒԽ 2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ**

### **2.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄՈԴԵԼՆԵՐԸ**

Տնտեսագիտական գրականությունն առաջարկում է զանազան մոտեցումներ և մեթոդներ՝ միտված գնահատելու/մոտարկելու որոշակի ինստիտուտում կամ ամբողջ երկրում առկա կոռուպցիայի մակարդակը: Այս համատեքստում տնտեսագիտական մեթոդաբանությունը կարելի է պայմանականորեն բաժանել 2 հիմնական խմբերի՝ /ա/ տեսական-մաթեմատիկական մոդելներ (խաղերի տեսության մոդելներ, վարվելակերպային մոդելներ և այլն), /բ/ խորքային հարցումների և փորձագիտական գնահատումների միջոցով կոռուպցիայի մակարդակի ընկալման բացահայտման մեթոդներ և /գ/ էմպիրիկ գնահատումների միջոցով կոռուպցիայի պատճառների բացահայտման մեթոդներ:

Առաջին խումբը իրենից ներկայացնում է տեսական մաթեմատիկական մոդելների համախումբ, որտեղ, որոշակի նախնական ենթադրությունների միջավայրում փորձ է արվում բացահայտել կոռուպցիան ծնող շարժառիթները, գնահատել որոշակի համակարգում կոռուպցիոն կառուցակարգերի առկայության հավանականությունը, հասկանալ թե մոդելում սահմանված տնտեսական միջավայրում (պետական պաշտոնյաների աշխատավարձերը, նրանց օգտակարության ֆունկցիաները, կոռուպցիոն գործողություններում ներգրավվելու դեպքում բացահայտվելու հավանականությունը, բացահայտման դեպքում օրենսդրությամբ սահմանված պատժաչափերը, և այլն) համակարգային ինչ գործոններ են նպաստում/խաթարում կոռուպցիայի առկայության հնարավորությանը, արդյո՞ք հակակոռուպցիոն համակարգային կառուցակարգերը բավարար են կանխարգելելու կոռուպցիոն ռիսկերը, և այլն:

Այս համատեքստում կոռուպցիայի ուսումնասիրության բազային մոդելներից է համարվում Ռոզ-Ալերմանի մոդելը, որտեղ կոռուպցիան դիտարկվում է որպես




տնտեսական վարքագիծ՝ որոշակի ռիսկի պայմաններում<sup>83</sup>: Վերջինս ենթադրում է հանցագործության իրականացում, որտեղ “հաջող” ելքի դեպքում տնտեսական գործակալը ստանում է որոշակի տնտեսական պարգև, իսկ հակառակ ելքի դեպքում՝ պատիժ: Այստեղ ուսումնասիրվում են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝ կոռուպցիայի էությունը և իրողությունը, կոռուպցիայի առաջացման նախապայմանները, կոռուպցիան և հասարակության կառուցվածքը, կոռուպցիայի տնտեսական հետևանքները, կոռուպցիայի դեմ պայքարի մեթոդները և այլն:

Ստորև ներկայացված են վերը նշված մեթոլոգիաներով կոռուպցիայի վերլուծության մի քանի հակիրճ օրինակներ: Հետաքրքիր օրինակ է հանդիսանում կոռուպցիայի դիտարկումը կոռուպցիոն գործընթացը նկարագրող կորերի միջոցով<sup>84</sup> (գծապատկեր 2.1):

Գծապատկեր 2.1

Կոռուպցիան նկարագրող կորեր<sup>85</sup>



Գծապատկեր 2.1-ում պատկերված են կոռուպցիոն գործընթացը նկարագրող կորերը, որտեղ E-ն ծախսերն են, իսկ K-ն՝ կոռուպցիայի մակարդակը: 1-ին կորը ցույց է

<sup>83</sup> Rose-Ackerman S., “The Economics of Corruption”, Journal of Political Economy. 1975. N 4.

<sup>84</sup> Մարկոսյան Ա. Խ., Մխիթարյան Ս. Մ., Թոքմաջյան Ա. Հ., Մկրտչյան Մ. Ս., «Կոռուպցիոն կորերի մաթեմատիկական մոդելավորումը», ԵՃՇՊՀ, 2012, Տեղեկագիր 2, էջ 127-142:

<sup>85</sup> Մարկոսյան Ա. Խ., Մխիթարյան Ս. Մ., Թոքմաջյան Ա. Հ., Մկրտչյան Մ. Ս., «Կոռուպցիոն կորերի մաթեմատիկական մոդելավորումը», ԵՃՇՊՀ, 2012, Տեղեկագիր 2, էջ 127-142:

տալիս կոռուպցիայից բխող կորուստները, այն է՝ որոշակի KO կոռուպցիայի մակարդակում վերջինիս պատճառով առաջացած կորուստների EO որոշակի մակարդակը: Հատկանշական է դիտարկել, որ կորի ուռուցիկությունը ենթադրում է կոռուպցիայի սահմանային մակարդակի աճ, այլ կերպ ասած, ավելի բարձր կոռուպցիայի մակարդակի միավոր աճը կհանգեցնի էլ ավելի բարձր մակարդակի կորուստների:

2-րդ կորը իրենից ներկայացնում է հակակոռուպցիոն միջոցառումների ծախսերը, այն է՝ հակակոռուպցիոն միջոցառումների ծախսերի փոփոխման ընթացքը՝ կախված կոռուպցիայի մակարդակից: Այս դեպքում հակակոռուպցիոն միջոցառումներին հատկացված ավելի ցածր մակարդակի միջոցներին համապատասխանում է ավելի բարձր կոռուպցիայի մակարդակ: Հատկանշական է դիտարկել նաև, որ 2-րդ կորի ուռուցիկ տեսքը ենթադրում է, որ հակակոռուպցիոն միջոցների միավոր կրճատումը կհանգեցնի էլ ավելի բարձր մակարդակի կոռուպցիայի աճի:

3-րդ կորը իրենից ներկայացնում է 1-ին և 2-րդ կորերի հանրագումարը և նկարագրում է գումարային ծախսերի և կորուստների փոփոխությունը կոռուպցիայի յուրաքանչյուր մակարդակի դեպքում: Այս կորը հաճախ անվանում են կոռուպցիայի օպտիմալ մակարդակի կոր, իսկ կորի տեսքից բխում է այն հանրահայտ եզրակացությունը, ըստ որի հանրային բարեկեցությունը առավելագույնի հասցնելու տեսանկյունից կոռուպցիայի իսպառ բացակայությունը չի համարվում օպտիմալ մակարդակ, քանի որ  $K^*$  (կոռուպցիայի օպտիմալ մակարդակ) կետից ձախ հատվածում հակակոռուպցիոն միջոցառումների ծախսերը ավելի մեծ են քան այդ միջակայքում առկա կոռուպցիայից ստացվող վնասները:

Վերը նշված մեթոդով կոռուպցիայի փաստացի մակարդակը գնահատելու համար նախ անհրաժեշտ է մեծ ճշտագրությամբ մոտարկել վերոնշյալ կորերը: Այս տեսակի մոտարկման համար սովորաբար օգտագործվում են Լագրանժի ինտերպոլյացիոն բազմանդամը և Բերշտեյնի բազմանդամները: Սակայն վերոնշյալ կորերի մոտարկումը որոշակի երկրում կոռուպցիայի փաստացի մակարդակը

գնահատելու համար բավականին բարդ է, իսկ կատարված գնահատականներում սովորաբար առկա է սխալի բավական բարձր մակարդակ:

Կոռուպցիայի ուսումնասիրության մեկ այլ մեթոդ է խաղերի տեսության միջոցով կատարվող վերլուծությունները: Այս դեպքում, ինչպես արդեն նշվեց, սովորաբար սահմանվում է որոշակի տնտեսական միջավայր (պետական պաշտոնյաների աշխատավարձեր, պաշտոնավարումից հետո առկա կենսաթոշակների մակարդակ, պաշտոնյաների օգտակարության ֆունկցիաներ, կոռուպցիոն գործողություններում ներգրավվելու դեպքում բացահայտվելու հավանականություն, բացահայտման դեպքում օրենսդրությամբ սահմանված պատժաչափ, և այլն) և այդ միջավայրում ուսումնասիրվում է տնտեսական գործակալների (օր.՝ պետական պաշտոնյաներ, հասարակություն, և այլն) կողմից իրականացվող հնարավոր ստրատեգիաները:

Այս տեսակի մոդելի օրինակ է Պաուլո Մաուրոյի մոդելը<sup>86</sup>, որտեղ ուսումնասիրվում է քաղաքական անկայուն իրավիճակի և կոռուպցիայի ազդեցությունը տնտեսական աճի վրա (ներկայացված է Մրֆիի խաղերի տեսության մոդելը<sup>87</sup>, որը ներդրված է Բարրոուի տնտեսական աճի մոդելում<sup>88</sup>, որտեղ կառավարության ծախսերը ներառված են թողարկման ֆունկցիայում): Մոդելում քաղաքական անկայունությունը ներկայացված է որպես էնդոգեն պարամետր: Մաուրոն դիտարկում է խաղային մոդել քաղաքական գործիչների միջև, որտեղ յուրաքանչյուր գործիչ, հաշվի առնելով ժամանակային հորիզոնի մեջ սպասվող սեփական տնտեսական մուտքերը, պետք է որոշում կայացնի թե ինչպիսի (կոռումպացված/չկոռումպացված) համակարգ ներդնի իր կողմից կառավարվող ինստիտուտում: Դիցուք առկա են 2 քաղաքական գործիչներ՝ A և B: Ենթադրենք A-ն կոռումպացված է, B-ն՝ ոչ: Սակայն երկուսն էլ հանդիսանում են նույն կառավարության անդամներ:

Ենթադրենք նաև, որ քաղաքացիական հասարակությունը տեսնելով կառավարությունում առկա կոռուպցիան՝ փոխում է ողջ կառավարությունը

---

<sup>86</sup> Mauro P., “The persistence of corruption and slow economic growth”, IMF staff papers, 2004, 51(1), էջ 1-18:

<sup>87</sup> Murphy K. M., Shleifer A., Vishny R. W., “Why Is Rent-Seeking So Costly to Growth?”, American Economic Review, Papers and Proceedings, 1993, Vol. 83, No. 2, էջ 409–414:

<sup>88</sup> Barro R. J., “Government Spending in a Simple Model of Endogenous Growth”, Journal of Political Economy, 1990, V. 98, N5 (part 2), էջ S103–S125:

ընտրությունների միջոցով: Այս դեպքում B քաղաքական գործիչը մաքսիմալացնում է իր անձնական եկամուտը հիմնվելով հետևյալ ենթադրությունների վրա՝

- A քաղաքական գործիչը կոռումպացված է,
- հասարակությունը, տեսնելով կոռուպցիա կառավարությունում, ընտրություններում փոխում է կառավարող ողջ անձնակազմը:

Այս դեպքում A գործչի ստրատեգիան կրճատում է նաև B-ի ժամանակային հորիզոնը (քաղաքական պոստում ավելի կարճ ժամանակ), ուստի <<մղելով>> B գործչին համապատասխան գործողությունների:

Հաշվի առնելով այս ամենը՝ մոդելից հետևում է, որ B գործիչը նույնպես կնախընտրի ներդնել կարճաժամկետում անձնական տնտեսական ավելի մեծ մուտքեր ունեցող կոռումպացված կառավարման համակարգ՝ իր կողմից ղեկավարվող ինստիտուտում և <<ձեռք գցել տորթի ավելի մեծ պատառին>>:

Վերոնշյալ բացասական էֆեկտը ավելի է ուժգնանում այն դեպքում, երբ քաղաքական գործիչների՝ խաղացողների, քանակը մեծանում է:

Հատկանշական է շեշտել, որ երբ գործիչներից և ոչ մեկը չի զբաղվում կոռուպցիայով, ապա գործող կառավարությունը վերընտրվում է և երկար ժամանակային հորիզոնում գործիչների եկամուտները դառնում են ավելի մեծ՝ համեմատած կարճ ժամանակային հորիզոնում ունեցած կոռուպցիոն եկամուտների հետ:

Սակայն, հնարավոր այս լավ հավասարակշիռ իրավիճակը ունի բավականին փխրուն բնույթ, ուստի անհրաժեշտ է ոլորտը կառավարող և քաղաքական/իրավական ազդեցության բավարար բարձր կշիռ ունեցող հակակոռուպցիոն ինստիտուտի առկայություն:

Այս տեսակի խաղային մոդելները ունեն բազմաթիվ մոդիֆիկացիաներ, որտեղ ավելի է բարդացվում տնտեսական միջավայրը և արդյունքում ստացվում են նոր և ավելի խորքային եզրակացություններ: Օրինակ, Ա. Ուսովը դիտարկել է կոռուպցիայի ուսումնասիրության մաթեմատիկական մոդել կառավարման եռամակարդակ համակարգում, որտեղ նույնպես տնտեսական գործակալները մաքսիմալացնում են

սեփական տնտեսական մուտքերը<sup>89</sup>: Այս դեպքում փորձ է արվում հասկանալ հնարավոր կոռուպցիայի մակարդակի առկայությունը, ինչպես նաև դիտարկել կառավարման համակարգի փոփոխության հետևանքը կոռուպցիայի մակարդակի վրա:

Այս տեսակի մոդել է նաև Վ. Սահակյանի վերլուծությունը<sup>90</sup>, որտեղ դիտարկվում է, որ բավականաչափ մեծ տնտեսական համակարգում կոռուպցիոն եկամուտը ընդունում է արժեքներ, որոնց հավանականային մեծությունը բնութագրվում է Գիբսի կանոնական բաշխման ֆունկցիայով՝

$$p(x, q) = \frac{1}{Q} \exp\left(-\frac{f(x, q)}{Y}\right), \quad (2.1)$$

որտեղ  $\frac{1}{Y}$ -ն կոռուպցիոն հակվածության գործակիցն է,  $Q$ -ն կոռուպցիոն վիճակի ինտեգրալն է, իսկ  $K = f(x, q)$ -ն՝ կոռուպցիոն եկամտի ֆունկցիան՝ կախված երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը նկարագրող  $x$  վեկտորից, ինչպես նաև անհատը նկարագրող  $q$  վեկտորից: Մոդելում այնուհետև կառուցվում է  $K = f(x, q)$ -ն՝ կոռուպցիոն եկամտի ֆունկցիան և դիտարկվում է անհատի ծախսերի և եկամտի հետ կապված առընչություններ:

Մեկ այլ մոտեցմամբ ամենապարզ համատեքստում ուսումնասիրվում է կոռուպցիայի ազդեցությունը հանրային բարեկեցության մակարդակի վրա<sup>91</sup> (գծապատկեր 2.2): Դիցուք, պետությունը թողարկում է միայն մեկ հանրային բարիք (օր.՝ որոշակի գործունեության համար լիցենզավորում), որը միասեռ է, և մասնավոր տնտեսավարող սուբյեկտների կողմից ունի  $D(p)$  պահանջարկ: Ենթադրենք նաև, որ գոյություն ունեն պետության կողմից երաշխավորված անձիք, ովքեր վաճառում են վերոնշյալ հանրային բարիքը: Պարզության համար ենթադրենք, որ այդ անձիք կարող

<sup>89</sup> Усов А. Б., “Модельное исследование коррупции в трехуровневых системах управления”, Журнал Экономика и математические методы (ЭММ), 2009, 45(2).

<sup>90</sup> Սահակյան Վ., «Տնտեսական համակարգում կոռուպցիայի գնահատման մի մեթոդ», Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2001:


<sup>91</sup> Епифанова Н., “Исследование коррупции на основе методов экономической теории”, Вопросы экономики, 2007, № 1.

են նվազեցնել բարիքի առաջարկվող քանակությունը (օր.՝ լիցենզավորել ավելի քիչ տնտեսվարող սուբյեկտների) իրենց հայեցողությամբ: Այս դեպքում պետության կողմից երաշխավորված անձիք կարող են տնտեսվարող սուբյեկտներից պահանջել որոշակի հավելյալ գումար՝ հանրային բարիքի մատակարարման դիմաց:

Դիցուք պետությունը պատրաստ է վաճառել բարիքը  $p^E$  գնով, որի դեպքում տնտեսվարող սուբյեկտները պատրաստ են գնել  $q^E$  քանակություն: Այս դեպքում, պետության կողմից երաշխավորված անձիք կարող են նվազեցնել բարիքի առաջարկվող քանակությունը մինչև օրինակ  $q^b$ , որի դեպքում տնտեսվարող սուբյեկտները պատրաստ են վճարել  $p^b$  գին: Բայց քանի որ պետությունը նախապես բարիքի գինը սահմանել էր  $p^E$ , ապա ստացվում է որ բարիքի վաճառողները սահմանափակելով բարիքի առաջարկվող քանակությունը կարող են ստանալ  $(p^b - p^E)$  գինը որպես կոռուպցիոն եկամուտ: Այսպիսով համեմատենք ստացված 2 դեպքերը. 1-ին դեպքում տնտեսվարող սուբյեկտները բարիքը գնում են  $p^E$  գնով  $q^E$  քանակությամբ, որի դեպքում պետությունը ստանում է եկամուտ  $Op^EBq^E$  ուղղանկյան մակերեսի չափով, իսկ սպառողական ավելցուկը կազմում է  $p^EBp$  եռանկյան մակերեսը: Ստացվում է, որ հանրային բարեկեցության մակարդակը (սպառողական ավելցուկի և պետության եկամուտների գումար) այս դեպքում հավասար է  $Oq^EBp$  պատկերի մակերեսին: Երկրորդ դեպքում տնտեսվարող սուբյեկտները բարիքը գնում են  $p^b$  գնով  $q^b$  քանակությամբ, որի դեպքում պետությունը ստանում է եկամուտ  $Op^EAq^b$  ուղղանկյան մակերեսի չափով, այսինքն պետության եկամուտները նվազում են  $q^bq^EBA$  ուղղանկյան մակերեսի չափով: Կոռուպցիայի մակարդակը կազմում է  $p^Ep^bCA$  ուղղանկյան մակերեսը, իսկ սպառողական ավելցուկը կրճատվում է  $p^Ep^bCB$  պատկերի մակերեսի չափով: Ստացվում է, որ հանրային բարեկեցության ընդհանուր մակարդակը պակասում է  $q^bq^EBC$  պատկերի մակերեսի չափով, ինչն առաջանում է կոռուպցիայի առկայության պատճառով:

## Գծապատկեր 2.2

### Կոռուպցիայի մակարդակ<sup>92</sup>



Գրականության մեջ բավական շատ են նմանատիպ մոդելները, որոնք բավական արդյունավետ և օգտակար են այն իմաստով, որ թույլ են տալիս հասկանալ համակարգային անարդյունավետությունների պատճառները և ի վերջո հանգեցնում են բարձր էֆեկտիվությամբ հակակոռուպցիոն կառուցակարգերի մշակմանը և ներդրմանը: Ի հակադրություն այս ամենի, վերոնշյալ մոդելների հիմնական թերությունն այն է, որ վերջիններիս համար բարդություն է հանդիսանում գնահատել կոնկրետ ինստիտուտում կամ երկրում առկա կոռուպցիայի փաստացի մակարդակը, քանի որ իրականում գրեթե անհնարին կլիներ գնահատել օրինակ պաշտոնյաների օգտակարության ֆունկցիաները կամ կոռուպցիայում ներգրավված լինելու դեպքում բացահայտվելու հավանականությունը: Իհարկե գոյություն ունեն այսպիսի որոշակի միկրո գնահատումներ/մոտարկումներ, որոնք կատարվել են տնտեսագիտական լաբորատոր էքսպերիմենտների միջոցով, սակայն այս գնահատականները պարունակում են որոշակի սխալանք, որոնք դրսևորվում են մակրո ընդհանրացումներում:

<sup>92</sup> Епифанова Н., “Исследование коррупции на основе методов экономической теории”, Вопросы экономики, 2007, № 1.

Վերը նշված իրադրությանն ընդառաջ, տնտեսագիտական գրականությունը առաջարկում է կոռուպցիայի գնահատման/մոտարկման որոշակի մեթոդաբանություն, ինչն օգնում է վերջին հաշվով հանգել կոռուպցիայի վերաբերյալ որոշակի քանակական գնահատականի:

Այսպիսով, երկրորդ խմբի մեթոդաբանությունն իրենից ներկայացնում է խորքային հարցումների և այդ հարցումների վրա հիմնված փորձագիտական վերլուծությունների ամբողջություն, ինչը թույլ է տալիս մոտարկել/գնահատել առկա կոռուպցիայի փաստացի մակարդակը և կատարել ինչպես որակական այնպես էլ քանակական եզրակացություններ:

Այս մեթոդաբանության հիմնական առավելությունն այն է, որ այստեղ հնարավորություն է ընձեռվում հետազոտության արդյունքում հանգել որոշակի թվային գնահատականի<sup>93</sup>, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ օրինակ Թրանսփարենսի Ինթերնեյշնալ կազմակերպությունը<sup>94</sup> կատարում է այս վերլուծությունը աշխարհի բազմաթիվ երկրներում (2015թ.-ին հետազոտությունը ընդգրկել է 175 երկիր), ապա ստացվում է, որ հնարավորություն է ստեղծվում նույնաչափ համատեքստում համեմատել ինչպես տարբեր երկրների գնահատականները, այնպես էլ նույն երկրի գնահատականները ժամանակի մեջ: Ի հակադրություն վերը նշվածի, այս մեթոդաբանությամբ ստացված վերջնական գնահատականները ներառում են սուբյեկտիվիզմի բավականին բարձր մակարդակ:

Այն է՝ մի կողմից հարցվողները կարող են հարցերին պատասխանել որոշակի վերապահումներով կամ անազնվությամբ, իսկ մյուս կողմից հարցումների վրա հիմնված փորձագիտական վերլուծություններն ու գնահատականները կարող են արտապատկերել վերլուծաբանի անձնական հայացքները որոշակի ինստիտուտի կամ իրողության վերաբերյալ:

Ի լրացում վերը նշված կոռուպցիայի գնահատման/մոտարկման մեթոդաբանությանը, տնտեսագետները հաճախ դիտարկում են կոռուպցիան էկոնոմետրիկ գնահատականների համատեքստում: Այս դեպքում փորձ է արվում

<sup>93</sup> Kaufmann D., Kraay A., "Growth Without Governance". World Bank Policy Research Working Paper, 2002b, No. 2928.

<sup>94</sup> <https://www.transparency.org/>



բացահայտել կոռուպցիան ծնող պատճառները և տնտեսական, իրավական և ժողովրդավարական այն գործոնները, որոնք ազդում են կոռուպցիայի մակարդակի վրա:

Օրինակ, Այսեն և Եվրենսելը<sup>95</sup> ուսումնասիրել են ինստիտուցիոնալ և տնտեսական գործոնների ազդեցությունը կոռուպցիայի մակարդակի վրա: Մասնավորապես, ուսումնասիրությունը դիտարկում է կոռուպցիայի մակարդակը որպես էվոլյուցիոն գործընթաց, որի ընթացքում ինստիտուցիոնալ կարգավորումները սահմանում են կոռուպցիայի աստիճանը: Էմպիրիկ արդյունքները հաստատում են, որ երկրների դանդաղ տնտեսական աճը, գնաճի ավելի բարձր մակարդակը, տոտալիտար քաղաքականության ռեժիմները, անգործուն դատական համակարգերը և կրթության ցածր մակարդակը ստեղծում են նախապայմաններ հաջորդ ժամանակաշրջանում կոռուպցիայի ավելի բարձր մակարդակի համար:

Այս տեսակի տնտեսական գրականությունը բազմազան է և ներառում է տնտեսական, ժողովրդավարական և իրավական բազմաթիվ գործոնների փոխազդեցությունը կոռուպցիայի հետ: Օրինակ Ադես դի Տելլան ուսումնասիրել է տնտեսական մրցակցության ազդեցությունը կոռուպցիայի մակարդակի վրա<sup>96</sup>, Բրոդմանը և ուրիշները դիտարկել են շուկայական ինստիտուտները և կոռուպցիան որպես համատեղ ուսումնասիրության օբյեկտ<sup>97</sup>, Կաուֆմանը, Քրեյլը և Մաստուցցին ուսումնասիրել են կառավարման արդյունավետության ցուցչակազմը, որտեղ ելակետային կարևորություն է տրվել կոռուպցիայի ֆենոմենին<sup>98</sup>, Կուրնիկովան և Ռոգ-Ակերմանը ուսումնասիրել են ընտրական գործընթացների և սահմանադրության կառուցվածքի հնարավոր սահմանափակումները կոռուպցիայի վրա<sup>99</sup>, Լեդերմանը և ուրիշները հետազոտել են կառավարման հաշվետվողականության փոխազդեցությունը

<sup>95</sup> Ayşe Y. E., “Institutional and economic determinants of corruption: a cross-section analysis”, Applied Economics Letters, 2010, 17:6, էջ 551-554:

<sup>96</sup> Ades A., Di Tella R., “Rents, Competition, and Corruption”. American Economic Review, 1999, 89(4): էջ 982-992:

<sup>97</sup> Broadman H. G., Recanatini F., “Seed of Corruption: Do Market Institutions Matter?”, The World Bank Policy Research Working Paper, 2002, No.2368.

<sup>98</sup> Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., “Governance Matters”. World Bank Policy Research Working Paper, 1999, էջ 2196:

<sup>99</sup> Kunicova J., Rose-Ackerman S., “Electoral Rules and Constitutional Structures as Constraints on Corruption”, British Journal of Political Science, 2005, 35 (4), էջ 573-606:

կոռուպցիայի հետ<sup>100</sup>: Բազմաթիվ են նաև քաղաքական իրավիճակի, տնտեսական ազատության, առևտրային տարիքների և այլ տնտեսա-իրավական գործոնների ազդեցությունը կոռուպցիայի վրա ուսումնասիրող տնտեսական գրականությունը<sup>101</sup>:

## 2.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՄՈԴԵԼՆԵՐԸ

### 2.2.1. ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գործոնային վերլուծությունը կիրառվում է հետևյալ խնդիրների լուծման նպատակով՝

1. բացահայտել փոփոխականների միջև կապը՝ հաշվի առնելով վերջիններիս միջև առկա կոռելացիոն կախվածությունը,
2. նվազեցնել չափողականությունը՝ նվազեցնելով մոդելում առկա փոփոխականների քանակը:

Գործոնային վերլուծության մոդելը ձևակերպվում է հետևյալ կերպ<sup>102</sup>

Դիցուք՝ գոյություն ունի  $N$  դիտարկումներից կազմված նմուշ: Յուրաքանչյուր դիտարկման վերաբերյալ գոյություն ունեն  $p$  բնութագրիչ ցուցանիշներ ( $p$  փոփոխականներ)՝

$$X_{p \times 1} = \begin{pmatrix} x_1 \\ x_2 \\ \dots \\ x_p \end{pmatrix},$$

<sup>100</sup> Lederman D., Norman V. L., Soares R., “Accountability and Corruption: Political Institutions Matter”. Economics and Politics, 2005, 17, էջ 1-35:

<sup>101</sup> Ades, A., Di Tella R., “Rents, Competition and Corruption”, American Economic Review, 1999, 89(4), էջ 982-92, Ali M., Hodan S., “Determinants of Economic Corruption: A Cross-Country Comparison”. Cato Journal, 2003, 22(3), էջ 449-466, Alt J. E., Dreyer L., “The Political Economy of Corruption in American States”, Journal of Theoretical Politics, 2003, 15(3), էջ 341-365, Andvig J. Ch., Fjeldstad O., Amundsen I., Sissener T., Soreide T., “Research on Corruption: A Policy Oriented Survey”, Chr. Michelsen Institute and Norwegian Institute of International Affairs, Bonaglia, 2003, Braga de Macedo F., Bussolo M., “How Globalization Improves Governance”. Discussion Paper No. 2992. Paris, France: Centre for Economic Policy Research, Organisation for Economic Co-operation and Development, 2001.

<sup>102</sup> Fruchter B., “Introduction to Factor Analysis”, Van Nostrand, 1954.

Այդ փոփոխականների մաթեմատիկական սպասումները և կովարիացիոն մատրիցը կներկայացվեն հետևյալ կերպ<sup>103</sup>


$$\mu_{p \times 1} = \begin{pmatrix} \mu_1 \\ \mu_2 \\ \dots \\ \mu_p \end{pmatrix}, \quad \text{Cov}(X) = \Sigma = \begin{bmatrix} \sigma_{11} & \dots & \sigma_{1p} \\ \vdots & \ddots & \vdots \\ \sigma_{p1} & \dots & \sigma_{pp} \end{bmatrix};$$

Ենթադրենք, գոյություն ունեն  $m$  գործոններ ( $F$ ), որոնք չդիտարկվող փոփոխականներ են, և դրանցով պայմանավորված է  $X$  փոփոխականների վարիացիան (գծապատկեր 2.3):

$$F_{m \times 1} = \begin{pmatrix} F_1 \\ F_2 \\ \dots \\ F_m \end{pmatrix}$$

### Գծապատկեր 2.3

Դիտարկվող և չդիտարկվող փոփոխականների միջև կապը<sup>104</sup>



Նշանակենք  $\Lambda$ -ով  $F$  փոփոխականների՝  $X$  փոփոխականների վրա ազդեցության չափերի մատրիցը: Այդ մատրիցի  $\lambda_{ij}$  տարրերը կոչվում են բեռնվածություններ (loadings):

Քանի որ  $X$  փոփոխականների վարիացիան չի կարող ամբողջությամբ բացատրվել  $F$  գործոններով, ապա  $\delta_j$ -ով նշանակենք  $j$ -րդ փոփոխականի վարիացիայի այն մասը, որը չի բացատրվում  $F$  գործոնների միջոցով (ունիկալ գործոններ):

Ստորև ներկայացնենք վեկտորային տեսքով գործոնային մոդելը<sup>105</sup>՝

<sup>103</sup> Meglen R. R., “Examining Large Databases: A Chemometric Approach Using Principal Component Analysis”, Journal of Chemometrics, 1991, 5 (3), էջ 163–179:

<sup>104</sup> Fruchter B., “Introduction to Factor Analysis”, Van Nostrand, 1954.

$$\begin{aligned}
x_1 &= \mu_1 + \lambda_{11} * F_1 + \lambda_{12} * F_2 + \dots + \lambda_{1m} * F_m + \delta_1, \\
x_2 &= \mu_2 + \lambda_{21} * F_1 + \lambda_{22} * F_2 + \dots + \lambda_{2m} * F_m + \delta_2, \\
&\vdots \\
x_j &= \mu_j + \lambda_{j1} * F_1 + \lambda_{j2} * F_2 + \dots + \lambda_{jm} * F_m + \delta_j, \\
&\vdots \\
x_p &= \mu_p + \lambda_{p1} * F_1 + \lambda_{p2} * F_2 + \dots + \lambda_{pm} * F_m + \delta_p:
\end{aligned}$$

Մատրիցային տեսքով այն կլինի<sup>106</sup>

$$\begin{pmatrix} x_1 \\ x_2 \\ \dots \\ x_p \end{pmatrix}_{p \times 1} = \begin{pmatrix} \mu_1 \\ \mu_2 \\ \dots \\ \mu_p \end{pmatrix}_{p \times 1} + \begin{bmatrix} \lambda_{11} & \dots & \lambda_{1m} \\ \vdots & \ddots & \vdots \\ \lambda_{p1} & \dots & \lambda_{pm} \end{bmatrix}_{p \times m} * \begin{pmatrix} F_1 \\ F_2 \\ \dots \\ F_m \end{pmatrix}_{m \times 1} + \begin{pmatrix} \delta_1 \\ \delta_2 \\ \dots \\ \delta_p \end{pmatrix}_{p \times 1}$$

$$X = M + \Lambda F + \delta,$$

$$X - M = \Lambda F + \delta:$$

Գործոնային մոդելի համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների բավարարումը<sup>107</sup>

1.  $E(F) = 0$ ,
2.  $E(\delta) = 0$ ,
3.  $cov(F) = E(FF^T) = I$ , այսինքն՝ գործոնները միմյանց հետ կորելացված չեն:  
Այս դեպքում մոդելը կկոչվի ուղղահայաց (orthogonal) մոդել, հակառակ դեպքում՝ շեղված (oblique) մոդել,
4.  $cov(\delta) = \Psi = \begin{bmatrix} \psi_{11} & \dots & 0 \\ \vdots & \ddots & \vdots \\ 0 & \dots & \psi_{pm} \end{bmatrix}_{p \times p}$ , այսինքն՝ ունիկալ գործոնները միմյանց

հետ կորելացված չեն,

<sup>105</sup> Fruchter B., "Introduction to Factor Analysis", Van Nostrand, 1954.

<sup>106</sup> Fruchter B., "Introduction to Factor Analysis", Van Nostrand, 1954.

<sup>107</sup> Fruchter B., "Introduction to Factor Analysis", Van Nostrand, 1954.

5.  $cov(F\delta) = 0$ :

Կարելի է ստանալ  $X$  փոփոխականների կովարիացիոն մատրիցը<sup>108</sup>

$$\begin{aligned} Cov(X) &= E[(X - \mu)(X - \mu)^T] = E[(\Lambda F + \delta)(\Lambda F + \delta)^T] = E[\Lambda F F^T \Lambda^T + \Lambda F \delta^T + \delta F^T \Lambda^T + \delta \delta^T] \\ &= \Lambda E(F F^T) \Lambda^T + \Lambda E(F \delta^T) + E(\delta F^T) \Lambda^T + E(\delta \delta^T) = \Lambda \Lambda^T + \Lambda * 0 + 0 * \Lambda^T + \Psi \\ &= \Lambda \Lambda^T + \Psi \quad (2) \end{aligned}$$

$$\Sigma = \begin{bmatrix} \delta_{11} & \dots & \delta_{1p} \\ \vdots & \ddots & \vdots \\ \delta_{1p} & \dots & \delta_{pp} \end{bmatrix} = \Lambda \Lambda^T + \Psi = \begin{bmatrix} \sum_{k=1}^m \lambda_{1k}^2 & \dots & \sum_{k=1}^m \lambda_{1k} \lambda_{pk} \\ \vdots & \ddots & \vdots \\ \sum_{k=1}^m \lambda_{1k} \lambda_{pk} & \dots & \sum_{k=1}^m \lambda_{pk}^2 \end{bmatrix}_{p \times p} + \begin{bmatrix} \psi_{11} & \dots & 0 \\ \vdots & \ddots & \vdots \\ 0 & \dots & \psi_{pm} \end{bmatrix}_{p \times p},$$

այսինքն՝

$$\delta_{11} = \sum_{k=1}^m \lambda_{1k}^2 + \psi_{11},$$

$$\delta_{22} = \sum_{k=1}^m \lambda_{2k}^2 + \psi_{22},$$

⋮

$$\delta_{jj} = \sum_{k=1}^m \lambda_{jk}^2 + \psi_{jj}:$$

Հետևաբար, ստացվում է, որ  $X_j$  փոփոխականի վարիացիայի մի մասը բացատրվում է  $F$  փոփոխականների բեռնվածության միջոցով՝  $\sum_{k=1}^m \lambda_{jk}^2$ , մնացած մասը՝ ունիկալ գործոններով՝  $\sum_{k=1}^m \lambda_{jk}^2 + \psi_{jj}$ : Ակնհայտ է, որ գործոնային վերլուծության տեսանկյունից, որքան մեծ է առաջին մասը, այնքան ավելի լավն է մոդելի որակը:

Առկա են  $\Lambda$  մատրիցի գնահատման հետևյալ 3 հիմնական մեթոդաբանությունները<sup>109</sup>

1. գլխավոր բաղադրիչների մեթոդ (Principal component method),
2. գլխավոր գործոնների մեթոդ (Principal factor method),

<sup>108</sup> Fruchter B., "Introduction to Factor Analysis", Van Nostrand, 1954.

<sup>109</sup> Cattell R. B., "Factor analysis", New York Harper, 1952.

3. առավելագույն ճշմարտանմանության մեթոդ (Maximum likelihood estimation):

Գլխավոր բաղադրիչների մեթոդը  $\Sigma$  մատրիցը ենթարկում է սպեկտրալ տարրալուծման՝ օգտագործելով մատրիցի սեփական արժեքները և սեփական վեկտորները, որից ստացվում են  $\lambda_{jk}$ -ների գնահատականները: Օրինակ՝ առաջին գործոնի համար  $\lambda_{11} = \sqrt{Q_1} \times e_{11}$ , որտեղ  $Q_1$ -ը մատրիցի առաջին սեփական արժեքն է, իսկ  $e_{11}$ -ը այդ սեփական արժեքին համապատասխան սեփական վեկտորի առաջին տարրը<sup>110</sup>:

Գործոնային վերլուծության մոդելի որակը ստուգվում է ստորև թվարկված մեթոդաբանությունների միջոցով<sup>111</sup>:

1. Կորելյացիոն մատրիցի միջոցով (ստուգվում է փոփոխականների կորելյացիոն մատրիցը և փոփոխականների միջև կորելյացիայի բարձր աստիճանի առկայության դեպքում (սովորաբար 0.4-ից մեծ) առաջանում է գործոնային վերլուծության անհրաժեշտություն),
2. Բարտլետի գնդաձևության թեստ (Bartlett's sphericity test)

$$\chi_{p(p-1)/2}^2 = -[(n-1) - \frac{(2p+5)}{6} \ln|R|]$$

Որտեղ՝  $p$ -ն փոփոխականների քանակն է,  $n$ -ը՝ դիտարկումների քանակը,  $R$ -ը կորելյացիոն մատրիցը,  $\frac{p(p-1)}{2}$  –ը ազատության աստիճանը:

Այս թեստով ստուգվում է  $H_0$  վարկածն այն մասին, ըստ որի գործոնային վերլուծության անհրաժեշտություն չկա: Եթե հավասարման աջ մասը մեծ է ձախ մասից, ապա  $H_0$  վարկածը մերժվում է և առաջանում է գործոնային վերլուծություն իրականացնելու անհրաժեշտություն:

3. Մեծ նմուշի թեստ (Large sample test)

<sup>110</sup> Cattell R. B., “Factor analysis”, New York Harper, 1952.

<sup>111</sup> Cattell R. B., “Factor analysis”, New York Harper, 1952.

Գործոնային վերլուծություն կատարելիս կարևոր է համարվում գործոնների քանակի ընտրությունը: Այն ընտրելու համար գոյություն ունեն 3 ընդունված մեթոդները<sup>112</sup>

1. Սահմանվում է որոշակի սահմանային տոկոսային շեմ, որից պակաս չպետք է լինի գործոնների գումարային տոկոսը:
2. Դիտարկվում են այն գործոնները, որոնց սեփական արժեքները մեծ են մեկից:
3. Օգտագործվում է scree plot գրաֆիկը:

Հաջորդիվ ենթադրենք, որ գոյություն ունեն որոշակի փոփոխականներ, որոնք գործոնային վերլուծության արդյունքում միավորվում երկու գործոնների: Քանի որ բոլոր փոփոխականները ունեն գծային կախվածություն վերոնշյալ գործոններից, ապա կարելի է այդ գործոններն ընդունել որպես երկչափանի տարածության առանցքներ, իսկ փոփոխականները ներկայացնել որպես այդ տարածության կետեր, որոնց կոորդինատները համապատասխանեցվում են փոփոխականների բեռնվածություններին<sup>113</sup>: Այնուհետև, անհրաժեշտություն է առաջանում ռոտացիայի ենթարկել վերոնշյալ առանցքներն այնպես, որ կետերի մի մասն ավելի մոտ լինի առաջին առանցքին, իսկ մյուս մասը՝ երկրորդին: Գոյություն ունի ռոտացիայի երկու եղանակ<sup>114</sup>, որոնցից առաջին դեպքում առանցքներն այնպես են տեղաշարժվում, որ վերջնական արդյունքում դրանք մնան միմյանց զուգահեռ: Սա նշանակում է, որ գործոնները միմյանցից անկախ են: Այս դեպքը անվանվում է ուղղահայաց ռոտացիա: Հաջորդ դեպքում թույլատրվում է առանցքները տեղաշարժել այնպես, որ արդյունքում ստացված առանցքները լինեն ոչ զուգահեռ, և հետևաբար, գործոնները կլինեն կորելացված: Այս դեպքը անվանվում է շեղ ռոտացիա: Ուղղահայաց ռոտացիան կարող է կատարվել 3 եղանակով՝ վարիմաքսի, էքուիմաքսի և քուարտիմաքսի<sup>115</sup>: Ռոտացիայի

---

<sup>112</sup> Ruscio J., Roche B., “Determining the number of factors to retain in an exploratory factor analysis using comparison data of known factorial structure”, *Psychological Assessment*, 2012, 24, էջ 282–292:

<sup>113</sup> Ruscio J., Roche B., “Determining the number of factors to retain in an exploratory factor analysis using comparison data of known factorial structure”, *Psychological Assessment*, 2012, 24, էջ 282–292:


<sup>114</sup> Child D., “The Essentials of Factor Analysis”, 3rd edition, Bloomsbury Academic Press, 2006.

<sup>115</sup> Child D., “The Essentials of Factor Analysis”, 3rd edition, Bloomsbury Academic Press, 2006.

ամենատարածված մեթոդը վարիմաքսի ոտացիան է: Գծապատկեր 2.4-ում ներկայացված են ոտացիայի 2 եղանակներ՝

### Գծապատկեր 2.4

#### Ռոտացիայի տեսակները<sup>116</sup>



Այսպիսով, գործոնային վերլուծության արդյունքում բացահայտվում են այն չդիտարկվող փոփոխականները, որոնք հանգեցնում են դիտարկվող փոփոխականների դրսևորմանը: Այստեղից հարց է առաջանում, թե արդյո՞ք կարելի է ստանալ չդիտարկվող փոփոխականների որոշակի արժեքներ, որոնք կպարունակեն դիտարկվող փոփոխականների տեղեկատվությունը: Վերոնշյալ խնդիրը լուծելու համար առկա են 3 մեթոդաբանություններ<sup>117</sup>

1. կշռված փոքրագույն քառակուսիների մեթոդ,
2. ռեգրեսիոն մեթոդներ,
3. առավել ճշմարտանմանության մեթոդը:

Գործոնների արժեքների առանձնահատկությունն այն է, որ վերջիններս կարող են օգտագործվել հետագա վերլուծություններում որպես առանձին փոփոխականներ, օրինակ՝ էկոնոմետրիկ վերլուծություններում որպես կախյալ և/կամ անկախ փոփոխականներ:

<sup>116</sup> Child D., “The Essentials of Factor Analysis”, 3rd edition, Bloomsbury Academic Press, 2006.

<sup>117</sup> Child D., “The Essentials of Factor Analysis”, 3rd edition, Bloomsbury Academic Press, 2006.



Սովորաբար գործոնային վերլուծության արդյունքում ստացված փոփոխականների արժեքները ստանդարտացվում են այնպես, որ յուրաքանչյուր փոփոխականի միջինը լինում է 0, իսկ վարիացիան՝ 1: Այս դեպքում, թաքնված փոփոխականի դիտարկման համար ստացված արժեքը համապատասխանում է այդ փոփոխականի ընդհանուր նմուշի միջինից ստանդարտ շեղման կետային քանակին:

### 2.2.2. ՔԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսագիտական գրականությունը հարուստ է քլաստերավորման տարբեր մեթոդներով և ալգորիթմներով: Քլաստերավորման տեխնիկաները հիմնականում դիտարկվում են երկու հիմնական մոտեցումներով՝ քլաստերավորման հիերարխիկ եղանակ և քլաստերավորում մասնատման մեթոդաբանությամբ<sup>118</sup>: Առաջին դեպքում քլաստերավորումն ունի երկու՝ ագլոմերատիվ և բաժանարար ուղղություններ:

Ագլոմերատիվ հիերարխիկ քլաստերավորման դեպքում նախնական փուլում դիտարկվող բոլոր օբյեկտները համարվում են առանձին քլաստերներ: Այնուհետև, այդ քլաստերները, դրանց միջև հեռավորության հիման վրա, հաջորդաբար միավորվում են, և քլաստերավորման գործընթացը դադարում է այն ժամանակ, երբ բոլոր օբյեկտները խմբավորված են լինում մեկ խմբում:

Բաժանարար քլաստերավորման դեպքում տեղի է ունենում հակառակ գործընթացը: Նախնական քլաստերը պարունակվում են բոլոր օբյեկտները: Այս քլաստերը աստիճանաբար մասնատվում է, և այս պրոցեսը ավարտվում է, երբ յուրաքանչյուր օբյեկտ դառնում է առանձին քլաստեր: Հիերարխիկ քլաստերավորման դեպքում, երբ որոշակի դիտարկում դառնում է որոշակի քլաստերի բաղկացուցիչ, ապա հետագա քլաստերային վերաբաշխում չի կատարվում<sup>119</sup>:

Հիերարխիկ քլաստերավորման մեթոդաբանությունը հիմնվում է դիտարկումների և քլաստերների միջև հեռավորության վրա: Ակադեմիական

<sup>118</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

<sup>119</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

գրականությունն առաջարկում է հեռավորությունների չափման բազմաթիվ մեթոդաբանություններ: Ամենատարածվածներից են, օրինակ, Էվկլիդյան հեռավորությունը (Euclidean distance), Սիթի բլոկ հեռավորությունը (City-block distance (Manhattan metric distance)) և Չեբիշևի հեռավորությունը (Chebychev distance):

Էվկլիդյան հեռավորությունը  $B (x_B, y_B)$  և  $C (x_C, y_C)$  օբյեկտների միջև հաշվարկվում է հետևյալ կերպ<sup>120</sup>

$$d_{Euclidean}(B, C) = \sqrt{(x_B - x_C)^2 + (y_B - y_C)^2}$$

Սիթի բլոկ հեռավորության չափանիշի դեպքում հաշվարկվում է արժեքների միջև տարբերությունների բացարձակ մեծությունների գումարը: Հեռավորությունը չափվում է հետևյալ կերպ<sup>121</sup>

$$d_{City-block}(B, C) = |x_B - x_C| + |y_B - y_C|$$

Չեբիշևի հեռավորությունը հաշվարկվում է որպես օբյեկտների արժեքների տարբերության բացարձակ մեծությունների առավելագույն արժեք<sup>122</sup>

$$d_{Chebychev}(B, C) = \max(|x_B - x_C|, |y_B - y_C|)$$

Հիերարխիկ ազլումերատիվ քլաստերավորման սկզբնական փուլում հաշվարկվում և ներկայացվում են բաղադրիչ բոլոր զույգերի միջև հեռավորությունները և արդյունքները ներկայացվում են հեռավորության մատրիցի միջոցով: Այնուհետև, դիտարկվող օբյեկտները խմբավորվում են և ձևավորում են քլաստերներ՝ հիմնված որոշակի ազլումերատիվ ընթացակարգի վրա: Քլաստերավորման յուրաքանչյուր փուլից հետո հեռավորությունների մատրիցը թարմացվում է: Ստորև ներկայացված են ազլումերացիայի առավել տարածված ընթացակարգերը<sup>123</sup>

<sup>120</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

<sup>121</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

<sup>122</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

<sup>123</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

- ❖ Միակ կապը (մոտակա հարևան)՝ քլաստերների միջև հեռավորությունը հավասար է քլաստերներում պարունակվող երկու անդամների միջև ամենակարճ հեռավորությանը:
- ❖ Ամբողջական կապ (ամենահեռու հարևան)՝ քլաստերների միջև հեռավորությունը հավասար է քլաստերներում պարունակվող երկու անդամների միջև ամենաերկար հեռավորությանը:
- ❖ Միջին կապը՝ քլաստերների միջև հեռավորությունը հավասար է քլաստերի բոլոր զույգերի միջև միջին հեռավորությանը:
- ❖ Ցենտրոիդ՝ հեռավորությունը հավասար է քլաստերների երկրաչափական կենտրոնների (ցենտրոիդների) միջև հեռավորությանը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ ալգորիթմներից յուրաքանչյուրը կարող է բացահայտել միմյանցից տարբեր քլաստերներ՝ օգտագործելով նույն տվյալները: Օրինակ, առաջին ալգորիթմը սովորաբար ձևավորում է մի մեծ քլաստեր և մի քանի փոքր քլաստերներ, քանի որ այն հիմնված է նվազագույն հեռավորությունների վրա: Մյուս կողմից, ամբողջական կապի ալգորիթմը մեծապես ազդեցություն է կրում տվյալներում առկա մեծ շեղումներից: Պատճառն այն է, որ վերջինս առավելագույնի է հասցնում օբյեկտների միջև հեռավորությունը: Մյուս երկու մոտեցումների դեպքում ձևավորվում են ցածր ներքլաստերային վարիացիայով և նմանատիպ չափեր քլաստերներ, սակայն դրանք նույնպես կրում են բավական մեծ ազդեցություն տվյալներում առկա մեծ շեղումներից<sup>124</sup>: Մյուս կողմից, բաժանարար քլաստերավորման մեթոդները միաժամանակ ձևավորում են որոշակի բաժանարարներ և գնահատում վերջիններս՝ հիմնվելով որոշակի սկզբունքների և չափանիշների վրա<sup>125</sup>: Այստեղ ամենատարածված մեթոդաբանություններից է K միջինների քլաստերավորումը: Այս մոտեցումը հաշվի չի առնում դիտարկումների միջև հեռավորությունները և օբյեկտները քլաստերավորվում է մինիմալացնելով ներքլաստերային վարիացիայի մակարդակը: Վերջինս ներկայացնում է որոշակի դիտարկման քառակուսային հեռավորությունը

<sup>124</sup> Şchiopu D., “Applying TwoStep cluster analysis for identifying bank customers' profile”, Buletinul, 2010, էջ 66-75:

<sup>125</sup> Şchiopu D., “Applying TwoStep cluster analysis for identifying bank customers' profile”, Buletinul, 2010, էջ 66-75:

քլաստերի կենտրոնից: K միջինների քլաստերավորման դեպքում քլաստերների քանակությունը սահմանվում է նախապես: Քլաստերավորման սկզբնական փուլում դիտարկումները պատահականորեն համապատասխանեցվում են որոշակի քլաստերների, այնուհետև տեղի է ունենում դիտարկումների վերաբաշխում քլաստերից քլաստեր, որն իրականացվում է ներքլաստերային վարիացիայի մինիմալացման սկզբունքով: Յուրաքանչյուր օբյեկտ վերաբաշխվում է մեկ այլ քլաստերի, եթե այդ քայլը բերում է ներքլաստերային վարիացիայի նվազեցման<sup>126</sup>:

Թեև վերոնշյալ երկու մեթոդաբանությունները լայնորեն կիրառվում են քլաստերավորման գործընթացներում, այնուհանդերձ դրանք ունեն բավական մեծ թերություններ: Հիերարխիկ քլաստերների առաջին լուրջ թերությունն այն է, որ այն մեծապես ազդեցություն է կրում տվյալներում առկա շեղումներից: Այս տեխնիկայի մեկ այլ հիմնախնդիր է վերջինիս կիրառելիությունը փոքր ծավալի տվյալների նկատմամբ:

K միջինների դեպքում վերոնշյալ խնդիրները բավականին լավ են լուծվում, սակայն այստեղ առաջ է գալիս ոչ պակաս կարևորություն ունեցող մեկ այլ խնդիր, այն է՝ քլաստերների քանակի նախասահմանման անհրաժեշտությունը:

Ուստի, վերը նկարագրված հիմնախնդիրների արդյունավետ լուծում կարող է լինել երկքայլ քլաստերավորման մեթոդը, ինչն իրենից ներկայացնում է հիերարխիկ և K միջինների մեթոդաբանությունների յուրահատուկ զուգակցում:

Երկքայլ քլաստերային վերլուծությունը<sup>127</sup> համատեղում է հիերարխիկ և K միջինների քլաստերավորման տեխնիկաների առանձնահատկությունները: Վերջինս բաղկացած է երկու փուլից: Առաջին՝ նախաքլաստերացման փուլում, նախնական դիտարկումները բաժանվում են ենթախմբերի, որոնք համարվում են անկախ միավորներ: Յուրաքանչյուր օբյեկտ հերթականությամբ միանում է առկա ենթախմբերից մեկին կամ ձևավորում է նոր խումբ՝ ըստ հեռավորության

<sup>126</sup> Şchiopu D., “Applying TwoStep cluster analysis for identifying bank customers' profile”, Buletinul, 2010, էջ 66-75:

<sup>127</sup> Chiu T., Fang D., Chen J., Wang Y., Jeris C. “A robust and scalable clustering algorithm for mixed type attributes in large database environment”, Proceedings of the seventh ACM SIGKDD International Conference on Knowledge Discovery and Data Mining, 2001, էջ 263-268:

չափորոշիչների: Ամբողջ գործընթացը հիմնված է CF ծառի մոտեցման վրա<sup>128</sup>: Երկրորդ քայլում, որը կոչվում է քլաստերավորում, նախնական քլաստերների արդյունքում առաջացած ենթախմբերը, հիերարխիկ ազլումերատիվ քլաստերների հիման վրա, խմբավորվում են ցանկալի քանակությամբ քլաստերների մեջ: Լավագույն քլաստերի լուծումը որոշվում է ստորև ներկայացված համապատասխան տեղեկատվական չափորոշիչներով<sup>129</sup>:

Հեռավորության 2 չափանիշներ գոյություն ունեն երկքայլ քլաստերավորման դեպքում՝ լոգարիթմական հավանականությունների չափանիշ և Էվկլիդյան հեռավորությունների չափանիշ<sup>130</sup>: Առաջինը շատ արդյունավետ է կատեգորիկ փոփոխականների դեպքում: Այս դեպքում հեռավորությունը հիմնված է հավանականությունների վրա և դիտարկումները միանում են այնպիսի քլաստերին, որն ունի ամենաբարձր մուտքային հավանականությունը: Երկրորդ չափանիշի դեպքում դիտարկումներն ընդգրկվում են քլաստերներում՝ ամենափոքր Էվկլիդյան հեռավորության սկզբունքով<sup>131</sup>: Այս չափանիշի հիման վրա երկու քլաստերների միջև հեռավորությունը չափվում է հետևյալ կերպ<sup>132</sup>՝

$$d_{(R,S)} = \xi_R + \xi_S - \xi_{(R,S)},$$

որտեղ՝

$$\xi_v = -N_v \left( \left( \sum_{k=1}^{K^A} \frac{1}{2} \log(\sigma_k^2 + \sigma_{vk}^2) \right) + \left( \sum_{k=1}^{K^B} E_{vk} \right) \right),$$

որտեղ՝

<sup>128</sup> Şchiopu D., “Applying TwoStep cluster analysis for identifying bank customers' profile”, Buletinul, 2010, էջ 66-75:

<sup>129</sup> Şchiopu D., “Applying TwoStep cluster analysis for identifying bank customers' profile”, Buletinul, 2010, էջ 66-75:

<sup>130</sup> Trpkova M., Tevdovski D., “Twostep cluster analysis: Segmentation of largest companies in Macedonia, Proceedings of the Challenges for Analysis of the Economy”, The Businesses and Social Progress International Scientific Conference, 2009, November 19-21.

<sup>131</sup> Trpkova M., Tevdovski D., “Twostep cluster analysis: Segmentation of largest companies in Macedonia, Proceedings of the Challenges for Analysis of the Economy”, The Businesses and Social Progress International Scientific Conference, 2009, November 19-21.

<sup>132</sup> Chiu T., Fang D., Chen J., Wang Y., Jeris C. “A robust and scalable clustering algorithm for mixed type attributes in large database environment”, Proceedings of the seventh ACM SIGKDD International Conference on Knowledge Discovery and Data Mining, 2001, էջ 263-268:

$$E_{vk} = -\sum_{k=1}^{L_k} \left( \frac{N_{vkl}}{N_v} \log \left( \frac{N_{vkl}}{N_v} \right) \right),$$

որտեղ  $d_{(R,S)}$ -ը  $R$  և  $S$  քլաստերների միջև հեռավորությունն է,  $\xi_v$ -ը՝  $v$  քլաստերի վարիացիան է,  $N$ -ը՝ դիտարկումների քանակն է,  $N_v$ -ն՝  $v$ -րդ քլաստերում դիտարկումների քանակն է,  $K^A$ -ն և  $K^B$ -ն համապատասխանաբար անընդհատ և կատեգորիալ փոփոխականների քանակներն են,  $\sigma_k^2$ -ն՝  $k$ -րդ անընդհատ փոփոխականի գնահատված վարիացիան է,  $\sigma_{vk}^2$ -ն՝  $v$ -րդ քլաստերում  $k$ -րդ անընդհատ փոփոխականի գնահատված վարիացիան է,  $N_{vkl}$ -ն՝  $v$ -րդ քլաստերում դիտարկումների քանակն է, որտեղ  $k$ -րդ կատեգորիալ փոփոխականը ընդունում է  $l$  կատեգորիան:

Քլաստերավորման այս մոտեցումը թույլ է տալիս, սահմանելով քլաստերների առավելագույն քանակը, ստանալ քլաստերների արդյունավետ քանակը: Այս դեպքում օգտագործվում են BIC կամ AIC տեղեկատվական չափորոշիչները յուրաքանչյուր քլաստերի համար: Այնուհետև, երկրորդ փուլում նախնական գնահատումը բարելավվում է՝ հայտնաբերելով հիերարխիկ քլաստերի յուրաքանչյուր փուլում երկու ամենամոտ քլաստերների միջև հեռավորության առավելագույն աճը:  $R$  քլաստերի համար այդ չափանիշները հաշվարկվում են հետևյալ կերպ<sup>133</sup>

$$BIC_R = -2 \sum_{i=1}^R \xi_R + m_R \log(N),$$

$$AIC_R = -2 \sum_{i=1}^R \xi_R + 2m_R,$$

$$m_R = R \left\{ 2K^A + \sum_{k=1}^K (L_k - 1) \right\}$$

Երկրայլ քլաստերավորման լուծում է նաև տվյալներում առկա մեծ շեղումների խնդիրը: Ենթադրվում է, որ վերջիններս ունեն նորմալ բաշխում:

---

<sup>133</sup> Trpkova M., Tevdovski D., “Twostep cluster analysis: Segmentation of largest companies in Macedonia, Proceedings of the Challenges for Analysis of the Economy”, The Businesses and Social Progress International Scientific Conference, 2009, November 19-21.

Երկքայլ քլաստերացման տեխնիկան թույլ է տալիս գնահատել քլաստերների արդյունքների որակը: Այդ նպատակով հաշվարկվում է Սիլուետի չափորոշիչը: AIC-ի դեպքում այն տատանվում է -1-ից 1 միջակայքում, իսկ BIC-ի դեպքում՝ 0-ից մինչև 1: Եթե արժեքը 0.2-ից պակաս է, ապա քլաստերների որակը ցածր է: 0.2-ից 0.5 միջակայքում քլաստերների որակը համարվում է բավարար: Քլաստերների լավ որակի համար վերջինս պետք է լինի 0.5-ից մեծ<sup>134</sup>: Այս մեթոդաբանությունը թույլ է տալիս նաև գնահատել քլաստերների ձևավորման ընթացքում պարամետրերի կարևորության աստիճանը: Այդ կարևորությունը բնութագրող ցուցանիշները տատանվում են 0-ից մինչև 1 միջակայքում, որտեղ 0.5-ից մեծ ցուցանիշները համարվում են առավել կարևոր:

### 2.2.3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Երկրում առկա սահմանադրականության գնահատման հիմնահարցերը գտնվում են տնտեսա-իրավագիտական գրականության ուսումնասիրության ակտիվ մակարդակում: Սահմանադրական տնտեսագիտությունը, հանդիսանալով բավական նոր գիտական ուղղություն, ակտիվորեն զանգանում է առաջարկելով սահմանադրականության գնահատման և սահմանադրական դեֆիցիտի չափման մեթոդաբանություն: Այս համատեքստում գիտականորեն հետաքրքրական աշխատանք է Գ. Հարությունյանի, Հ. Սարգսյանի և Ռ. Գևորգյանի կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքը, որտեղ առաջարկվել է սահմանադրականության գնահատման մեթոդաբանություն անցումային երկրների համար<sup>135</sup>:

Սահմանադրականության գնահատումը հանդիսանում է ինստիտուցիոնալ զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը, քանի որ այն արտացոլում է երկրի մայր օրենքի՝ Սահմանադրության, նորմերի և դրույթների իրացվելիության աստիճանը իրական կյանքում: Ուստի, սահմանադրականության գնահատման հիմնահարցերը

<sup>134</sup> Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.

<sup>135</sup> Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, 2017. Volume VIII, Summer, 4(26), էջ 1126 – 1135:

ներառում են գնահատման և մշտադիտարկման մեթոդաբանության և գործիքակազմի մշակում: Սա թույլ կտա ախտորոշել առկա իրավիճակը մասնավոր երկրում, կատարել համեմատական վերլուծություններ ինչպես այլ երկրների հետ, այնպես էլ դինամիկայում, բացահայտել սահմանադրականության մասնավոր մակարդակը պայմանավորող գործոնները և առաջարկել ինստիտուցիոնալ քաղաքականություն, որն ուղղորդված կլինի կրճատելու սահմանադրական դեֆիցիտը:

Հաշվի առնելով սահմանադրականության մակարդակի գնահատման հիմնահարցի կարևորությունը, ստորև նկարագրված է վերջինիս գնահատման որոշակի մեթոդաբանություն և այդ մեթոդաբանության կիրառմամբ սահմանադրականության մակարդակի գնահատականներ 29 երկրների համար<sup>136</sup>:

Հետազոտությունը ներառել է հետևյալ քայլերի հաջորդականությունը՝

1. Տվյալների և ցուցակազմի ընտրություն
2. Սահմանադրական կայունության ինտեգրալ մակարդակի սահմանում
3. Պարզել սահմանադրականության մակարդակը նկարագրող լատենտ գործոնները կամ ամենակարևոր փոփոխականները
4. Երկրներին տարրանջատել տարբեր քլաստերների միջև՝ ուսումնասիրելով քլաստերավորման բնութագրիչները
5. Հետազոտել յուրաքանչյուր քլաստերին բնորոշ բնութագրիչները և նման երկրները

Ստորև ներկայացված է հետազոտության համար ընտրված ցուցակազմը՝

- ❖ Ընտրական գործընթացների համաթիվ
- ❖ Քաղաքացիական հասարակության համաթիվ
- ❖ Ազատ մեդիայի համաթիվ
- ❖ Կառավարման արդյունավետության համաթիվ
- ❖ Քաղաքական կայունության և բռնությունների բացակայության համաթիվ
- ❖ Կանոնակարգումների որակի համաթիվ

---

<sup>136</sup> Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, 2017. Volume VIII, Summer, 4(26), էջ 1126 – 1135:



- ❖ Իրավունքի գերակայության համաթիվ
- ❖ Ձայնի և հաշվետվողականության համաթիվ
- ❖ Քաղաքական բազմակարծության և մասնակցության համաթիվ
- ❖ Արտահայտման և համոզմունքների ազատության համաթիվ
- ❖ Ասոցացման և կազմակերպվածության իրավունքի համաթիվ
- ❖ Սեփական ինքնավարության և անձնական իրավունքի համաթիվ
- ❖ Կոռուպցիայի ընկալման համաթիվ
- ❖ Աղքատության մակարդակի համաթիվ (տոկոսը հասարակությունում, ազգային շեմ)
- ❖ Սեփականության իրավունքի համաթիվ
- ❖ Մարդկային զարգացման համաթիվ

Հաջորդ քայլում հեղինակների կողմից ընտրվել է սահմանադրականության ինտեգրալ գնահատման մոդելը<sup>137</sup>՝

$$U_i = \sum_{j=1}^m \left[ \frac{(x_{ij} - x_j^{(a)})}{\sigma(x_j)} \prod_{\substack{\beta=1 \\ \beta \neq j}}^m (1 - \gamma_{\beta j}) \right]$$

որտեղ՝  $U_i$ -ն սահմանադրական կայունության ինտեգրալ մակարդակն է,  $x_{ij}$ -ն  $j$ -րդ համաթվի բնութագրիչն է  $i$ -րդ երկրի /խմբի/ համար,  $x_j^{(a)}$ -ն վկայակոչված փոփոխականի բնութագրիչն է,  $\gamma_{\beta j}$ -ն զույգ կոռելացիայի գործակիցն է, իսկ  $\sigma(x_j)$ -ն  $x_j$  ցուցանիշի վարիացիան է:

Անհրաժեշտ է նշել, որ այս մեթոդաբանության համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ընտրել կոռելացիայի բարձր աստիճան ունեցող փոփոխականներ, այլապես կստացվեն չարդարացված բարձր կշիռներ:

Դիտարկվող փոփոխականներով կատարվել է գործոնային վերլուծություն և ստացված արդյունքները օգտագործվել են հետագա վերլուծություններում<sup>138</sup>:


<sup>137</sup> Հարությունյան Գ., «Սահմանադրական մշտադիտարկում» Երևան, Նժար, 2016:

<sup>138</sup> Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, 2017. Volume VIII, Summer, 4(26), էջ 1126 – 1135:

2014 թ.-ի համար կատարված գնահատման արդյունքները ներկայացված են գծապատկեր 2.5-ում:

Գծապատկեր 2.5.

Սահմանադրականության գնահատման արդյունքներ<sup>139</sup>



Աղյուսակ 2.1-ում ներկայացված են ստացված քլաստերները, որտեղ տեղակայված են սահմանադրականության ցածր, միջին և բարձր մակարդակ ունեցող երկրները:

<sup>139</sup> Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, 2017. Volume VIII, Summer, 4(26), էջ 1126 – 1135:

## Աղյուսակ 2.1

### Քլասսիֆիկացիայի արդյունքները<sup>140</sup>

<i>Ցածր մակարդակ</i>	<i>Միջին մակարդակ</i>	<i>Բարձր մակարդակ</i>
<i>Ռուսաստան</i>	<i>Ուկրաինա</i>	<i>Մոնղոլիա</i>
<i>Ադրբեջան</i>	<i>Կիրգիզիա</i>	<i>Լատվիա</i>
<i>Ուզբեկստան</i>	<i>Տաջիկստան</i>	<i>Խոնդալստան</i>
<i>Վրաստան</i>	<i>Կոսովո</i>	<i>Հունգարիա</i>
<i>Ղազախստան</i>	<i>Հայաստան</i>	<i>Լիտվիա</i>
<i>Թուրքմենստան</i>	<i>Մոլդովա</i>	<i>Էստոնիա</i>
<i>Մակեդոնիա</i>	<i>Բոսնիա և Հերցեգովինա</i>	<i>Լեհաստան</i>
	<i>Ռումինիա</i>	<i>Սլովենիա</i>
	<i>Բուլղարիա</i>	<i>Չեխիա</i>
	<i>Բելոռուս</i>	<i>Սլովակիա</i>
	<i>Սերբիա</i>	
	<i>Ալբանիա</i>	

### 2.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԿԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոռուպցիայի և կառավարման արդյունավետության ազդեցությունը տնտեսական, իրավական և ժողովրդավարական երևույթների վրա ուսումնասիրող տնտեսագիտական գրականությունը բազմազան է: Այսպիսի հետազոտությունները նպատակ են հետապնդում բացահայտել կոռուպցիայի և անարդյունավետ կառավարման հետևանքով առաջացող տնտեսական վնասները, վերջիններիս չափը, և այսպիսով առաջարկել հակակոռուպցիոն քաղաքականության լրամշակման որոշակի

<sup>140</sup> Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, 2017. Volume VIII, Summer, 4(26), էջ 1126 – 1135:

ուղղություն, ինչը զսպելով կոռուպցիան, կբարձրացնի կառավարման արդյունավետությունը և դրականորեն կազդի հանրային բարեկեցության վրա:

Սակայն ակադեմիական շրջանակները միակարծիք չեն կոռուպցիայի և կառավարման արդյունավետության փոխազդեցության շուրջ: Մասնավորապես, որոշակի հետազոտությունների շրջանակներում կատարված եզրակացությունները ցույց են տալիս կոռուպցիայի և հանրային բարեկեցության դրական կախվածությունը: Պարադոքսալ հնչող այս պնդումը ունի որոշակի արգումենտատիվ բացատրություն: Մասնավորապես, զարգացող երկրներում համատարած և ծանրակշիռ կանոնակարգերի և խիստ բյուրոկրատիայի համատեքստում, կոռուպցիան կարող է իրականում բարելավել արդյունավետությունը և դրականորեն ազդել տնտեսական աճի<sup>141</sup>: Բանն այն է, որ արդեն իսկ բյուրոկրատիկ և խեղաթյուրված պետական ապարատի պայմաններում, կոռուպցիան կարող է արագացնել տնտեսական գործընթացները և արդյունքում միավոր ժամանակում այլ հավասար պայմաններում դրականորեն ազդել արդյունքի վրա<sup>142</sup>:

Նույնական եզրահանգումներ են պարունակում նաև խաղերի տեսության որոշ մոդելներ: Մասնավորապես, այս տեսակի մոդելներում դիտարկվում են կառավարության կողմից մասնավոր ֆիրմաների լիցենզավորումը, որտեղ աճուրդի գաղափարի շրջանակներում ենթադրում է, որ ամենամեծ կաշառքի առաջարկը կարող են անել ծախսային ամենաբարձր արդյունավետություն ունեցող ֆիրմաները, ուստի հաղթող կամ կոռուպցիայի հաշվին լիցենզավորվող ֆիրման առավելագույն արդյունավետությամբ կարող է իրականացնել տվյալ ոլորտի բիզնես գործընթացները<sup>143</sup>: Այս տեսակի աշխատությունների հիմնական թերությունը կայանում է վերջիններիս արստրահման բարձր աստիճանում:

Ի հակադրություն վերոգրյալի, տնտեսական գրականությունը հարուստ է նաև այնպիսի աշխատանքներով, որոնց եզրահանգումները ինտուիտիվ են և ցույց են տալիս կոռուպցիայի բացասական ազդեցությունը տնտեսական ցուցանիշների վրա:

---

<sup>141</sup> Leff N. H., "Economic Development through Bureaucratic Corruption," *The American Behavioral Scientist*, Nov. 1964, 8(2), էջ 8-14:

<sup>142</sup> Huntington S. P., "Political order in changing societies", New Haven: Yale U. Press, 1968.

<sup>143</sup> Beck P. J., Maher M. W., "A Comparison of Bribery and Bidding in Thin Markets," *Econ.Letters*, 1986, 20, էջ 1-5, Lien D., "A Note on Competitive Bribery Games," *Econ. Letters*, 1986, 22, էջ 337-41:

Օրինակ, Լամբսդորֆը ուսումնասիրել է կոռուպցիայի բացասական ազդեցությունը հանրային բարեկեցության մակարդակի վրա<sup>144</sup>, Լեիթը և Վեյդմանը դիտարկել են կոռուպցիայի ունեցած բացասական արդյունքները տնտեսական աճի ցուցանիշի վրա<sup>145</sup>, Մաուրո Պաուլոն ներկայացրել է կոռուպցիայի բացասական ազդեցությունը ներդրումների և տնտեսական աճի վրա<sup>146</sup>, Ֆիլիպ Ադհոնը և ուրիշները ներկայացրել են կոռուպցիայի, հարկերի և տնտեսական աճի փոխկապակցվածությունը<sup>147</sup>:

Մյուս կողմից, տնտեսական գրականությունը միակարծիք չէ նաև կառավարման արդյունավետության և տնտեսական առաջընթացի փոխկապակցվածության առումով: Մասնավորապես, հետազոտողների մի խումբ (Quibria 2006, Kurtz et al. 2007<sup>148</sup>) կասկածի տակ են դնում արդյունավետ կառավարման և տնտեսական աճի կախվածությունը: Մասնավորապես, հետաքրքրական է Kaufmann et al. 2008<sup>149</sup>, աշխատությունը, որտեղ հեղինակները դիտարկելով 2 լազային պանելային տվյալներ, հերքում են արդյունավետ կառավարման միանշանակ ազդեցության առկայության գոյությունը հաջորդ ժամանակաշրջանի տնտեսական աճի վրա:

Մյուս կողմից, կոռուպցիայի, կառավարման արդյունավետության և տնտեսական աճի համատեքստում, հետաքրքրական է Նորֆի<sup>150</sup> աշխատությունը, ըստ որի ինստիտուտներն ու կառավարությունը մարդու կողմից ստեղծված սահմանափակումների համակարգ են, ինչը բավական մեծ ազդեցություն ունի տնտեսական գործակալների որոշումների ընդունման վրա: Ուստի արդյունավետ կառավարումը, որը ավելի է նպաստում արդյունավետ աշխատանքի բաժանմանը, արտադրողական ներդրումների ներգրավմանը, սոցիալ-տնտեսական

---

<sup>144</sup> Lambsdorff J. Graf., “How Corruption in Government Affects Public Welfare: A Review of Theory”, Mimeo, Georg-August-University of Göttingen, 2001b.

<sup>145</sup> Leite C., Weidmann J., “Does Mother Nature Corrupt?: Natural Resources, Corruption, and Economic Growth”, Working paper WP/99/85, International Monetary Fund, Washington, DC, 1999.

<sup>146</sup> Mauro P., “Corruption and growth”, Quarterly Journal of Economics, 1995, 110(3), էջ 681-712:

<sup>147</sup> Aghion Ph., Akcigit U., Cagé J., Kerr W., “Taxation, corruption, and growth”, European Economic Review, 2016.

<sup>148</sup> Quibria M. G., “Does Governance Matter? Yes, No or Maybe: Some Evidence from Developing Asia”, Kyklos, 2006, 59(1), էջ 99-114, Kurtz M., Schrank A., “Growth and governance: Models, measures and mechanisms”, Journal of Politics, 2007, 69(2), էջ 538-554:

<sup>149</sup> Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., “Governance matters VII: Governance indicators for 1996-2007”, World Bank Policy Research Paper, 2008.

<sup>150</sup> North D. C., “Institutions, Institutional Change, and Economic Performance”, New York, Cambridge University Press, 1990.

քաղաքականության իրականացմանը, մղում է արձանագրել տնտեսական աճի ավելի բարձր ցուցանիշ<sup>151</sup>: Մյուս կողմից, համաձայն Հոլլի և Ջոնսի<sup>152</sup>, եթե արդյունավետ կառավարումը նպաստում է տնտեսական աճին, ապա վատ կառավարումը՝ սեփականության իրավունքի իրացվածության ցածր աստիճանը, իրավունքի գերակայության ցածր մակարդակը, ոչ օպտիմալ հարկային համակարգի առկայությունը, կոռուպցիայի բարձր մակարդակը հանգեցնում է հանրային բարեկեցության անխուսափելի անկման: Ի լրացում, մի խումբ հետազոտություններ ներկայացնում են էմպիրիկ ապացույցներ, ըստ որոնց որակյալ ինստիտուտները և արդյունավետ կառավարումը անխուսափելիորեն առաջացնում են տնտեսական աճ<sup>153</sup>: Ի լրացում վերջինիս, համաձայն Ադսերայի, Բոիքսի և Փեյնի<sup>154</sup>, դեմոկրատիկ միջավայրում արդյունավետ մակրո կառավարումը ենթադրում է առնվազն երկու անհրաժեշտ պայմանների առկայություն՝ (ա) օրինական ընտրություններ և (բ) թափանցիկ և հաշվետվողական կառավարում, որոնք ապահովում են տեղեկացված ընտրազանգվածի ռացիոնալ որոշում կայացնելու հնարավորությունը: Այս ամենը հանգեցնում է արդյունավետ կառավարման և հետևաբար տնտեսական աճի: Այս մեխանիզմի օպտիմալ իրացվելիության զսպիչ գործոն կարող է դառնալ կոռուպցիան: Գծապատկեր 2.6-ում պատկերավոր ներկայացված են վերոնշյալ հետազոտության պնդումների նկարագիրը:

---

<sup>151</sup> United Nations, “Investing in Development; A practical Plan to Achieve the Millennium Development Goals”, Millennium Project Report to the UN Secretary General, 2001.


<sup>152</sup> Hall R. E., Jones C. I., “Why Do Some Countries Produce so Much More Output per Worker Than Others?”, Quarterly Journal of Economics, 1999, 114(1), էջ 83-116:

<sup>153</sup> Rafayet A., Kitege E., Bedane A., “Government Effectiveness and Economic Growth”, Economics Bulletin, 2017, Volume B., 37, Issue 1, էջ 222-227, Acemoglu D., Johnson S., Robinson J.A., “The colonial origins of comparative development: An empirical investigation”, American Economic Review, 2001, 91 (5), էջ 1369–1401, Acemoglu D., Robinson J., “The role of institutions in growth and development”, Review of Economic Institutions, 2010, 1 (2), Barro R.J., “Determinants of economic growth: A cross-country empirical study”, MIT Press, 1998, Knack S., Keefer P., “Institutions and economic performance: Cross-country tests using alternative institutional measures”, Economics and Politics, 1995, 7 (3), էջ 207–227, Kaufmann D., Kraay A., “Growth without Governance”, Economia, 2002, 3(1), էջ 169– 229, Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., “Governance matters VII: Governance indicators for 1996–2007”, World Bank Policy Research Paper, 2008:

<sup>154</sup> Adserà A., Boix C., Payne M., “Are You Being Served? Political Accountability and Quality of Government”, J. Law Econ Organ., 2003, 19 (2), էջ 445-490:

Գծապատկեր 2.6

Արդյունավետ կառավարում և տնտեսական աճ<sup>155</sup>



<sup>155</sup> Adserà A., Boix C., Payne M., “Are You Being Served? Political Accountability and Quality of Government”, J. Law Econ Organ., 2003, 19 (2), էջ 445-490:

### ԳԼՈՒԽ 3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՓՈԽԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱ- ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏ

Այս գլխում նպատակ է հետապնդվում ուսումնասիրել կոռուպցիայի էությունը էմպիրիկ գնահատման համատեքստում: Մի կողմից հետաքրքրական է բացահայտել կոռուպցիայի մակարդակի վրա ազդեցություն ունեցող և այն պայմանավորող ինստիտուցիոնալ և համակարգային գործոնները, իսկ մյուս կողմից գիտական կարևորություն է ներկայացնում նաև իրավա-տնտեսական և ժողովրդավարական ցուցանիշների վրա կոռուպցիայի ազդեցության բացահայտումը:

#### Աղյուսակ 3.1

#### Դիտարկվող փոփոխականներ

<i>Ցուցանիշի անվանում</i>	<i>Ցուցանիշի հապավում</i>	<i>Շտեմարանի հապավում</i>
<i>Արտահայտման ազատությունների համաթիվ</i>	<i>FEI</i>	<i>V-Dem</i>
<i>Գործադիրի կողմից սահմանադրության պահպանումը համաթիվ</i>	<i>ERCI</i>	<i>V-Dem</i>
<i>Դատական մարմնի զսպումը գործադիրին համաթիվ</i>	<i>JCEI</i>	<i>V-Dem</i>
<i>Իշխանության թևերի տարանջատման համաթիվ</i>	<i>DPI</i>	<i>V-Dem</i>
<i>Իրավունքի գերակայության համաթիվ</i>	<i>RLI</i>	<i>WGI</i>
<i>Լիբերալ ժողովրդավարության համաթիվ</i>	<i>LDI</i>	<i>WEF</i>
<i>Կառավարման արդյունավետության համաթիվ</i>	<i>GEI</i>	<i>WGI</i>
<i>Կառավարման թափանցիկության համաթիվ</i>	<i>GTI</i>	<i>V-Dem</i>
<i>Կառավարման հաշվետվողականության համաթիվ</i>	<i>GAI</i>	<i>V-Dem</i>
<i>Կոռուպցիայի ընկալման համաթիվ</i>	<i>CPI</i>	<i>TI</i>
<i>Հանրային վստահությունը քաղաքական գործիչներին համաթիվ</i>	<i>PTPI</i>	<i>V-Dem</i>
<i>Մարդկային զարգացման համաթիվ</i>	<i>HDI</i>	<i>UNDP</i>
<i>Մաքուր ընտրությունների համաթիվ</i>	<i>CEI</i>	<i>V-Dem</i>
<i>Ներդրողի պաշտպանվածության համաթիվ</i>	<i>SIPI</i>	<i>WEF</i>
<i>Որակյալ կրթության համաթիվ</i>	<i>QEI</i>	<i>WEF</i>
<i>Սեփականության իրավունքի համաթիվ</i>	<i>PRI</i>	<i>V-Dem</i>
<i>Քաղաքական կայունության և բռնությունների ու տրեռորիզմի բասակայության համաթիվ</i>	<i>PSAVTI</i>	<i>WGI</i>
<i>Օրենսդիր մարմնի զսպումը գործադիրին համաթիվ</i>	<i>LCEI</i>	<i>V-Dem</i>



Ստորև կդիտարվեն վերոնշյալ վերլուծությունները, և վերջիններս կիրականացվեն 2011-2015 թթ.-ի ցուցանիշների հիման վրա: Վերլուծության համար արհրաժեշտ տվյալները նկարագրված են աղյուսակ 3.1-ում, որտեղ նշված է ցուցանիշի անվանումը, հապավումը և ձեռք բերման շտեմարանը:

### **3.1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԵՐԿԿՈՂՄԱՆԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Պետական կառավարման արդյունավետության հիմնահարցերը լայնորեն ուսումնասիրվում են ինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում: Պետական կառավարման արդյունավետությունն ունի հիմնարար կարևորություն տնտեսական զարգացման համար, քանի որ վերջինիս համակարգային և գործառնական արդյունավետությունից է կախված երկրում սահմանադրականության պատշաճ մակարդակի ապահովումը կամ վերջինիս դեֆիցիտի կրճատումը, այսինքն սահմանադրական հիմնարար դրույթների իրացումը իրական կյանքում: Կառավարման համակարգային և գործառնական արդյունավետությունն ուղղակիորեն ազդող գործոն է տնտեսական ցուցանիշների վրա: Մի կողմից արդյունավետ կառավարված համակարգի, այն է՝ օպտիմալ կառավարման համար անհրաժեշտ ինստիտուտների, գերատեսչությունների և մեխանիզմների առկայությունը, տնտեսական բոլոր գործակալների համար իրավահավասար և արդարացի կանոնների սահմանումը, անաչառ դատական համակարգի առկայությունը, իշխանության թևերի արդյունավետ փոխկախվածությունն ապահովող զսպումների և հակակշիռների համակարգի առկայությունն ու գործունեությունը, կոռուպցիոն ռիսկերի կրճատումը և այլն, նշանակալիորեն ազդում են տնտեսական զարգացման վրա: Մյուս կողմից, կարևորվում է կառավարման գործառնական արդյունավետությունը, այն է՝ վերոնշյալ մեխանիզմների օպտիմալ իրացումը, կառավարման համար անհրաժեշտ ծախսերի օպտիմալ մակարդակի սահմանումը և իրացումը (օր.՝ ՀՀ-ում 2015 թ.-ին այն կազմել է ՀՆԱ-ի մոտ 28%-ը<sup>156</sup>), կոռուպցիոն երևույթների կրճատումը/բացառումը և այլն, քանի

<sup>156</sup> <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a>

որ վերջիններիս որակից է կախված սահմանադրականության մակարդակը և որպես ածանցյալ արդյունք՝ տնտեսական զարգացումը:

Ուստի, մի կողմից կառավարման համակարգը և օրենսդրական դաշտը կարող են ստեղծել նախապայմաններ կոռուպցիոն ռիսկերի առաջացման և կոռուպցիոն իրադարձությունների համար, մյուս կողմից կոռուպցիոն իրադարձությունները կարող են զսպել կառավարման գործառնական արդյունավետությանը՝ հանգեցնելով մի իրավիճակի, երբ որոշումները ծառայում են մասնավոր շահերի և հակադրվում հանրային շահին և բարօրությանը:

### 3.1.1. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻԶՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետագա էմպիրիկ վերլուծություններում ավտոկոռելացիայի խնդրից խուսափելու և չափողականությունը կրճատելու նպատակով՝ ստորև իրականացվել է կառավարման համակարգային և գործառնական արդյունավետությունը բնութագրող որոշակի ցուցանիշների գործոնային վերլուծություն:

Դիտարկված փոփոխականներն են ներկայացված են աղյուսակ 3.2-ում:

Աղյուսակ 3.2

#### Դիտարկվող փոփոխականներ

<i>Ցուցանիշի անվանում</i>	<i>Ցուցանիշի հապավում</i>
<i>Կառավարման հաշվեքվողականության համաթիվ</i>	<i>GAI</i>
<i>Կառավարման թափանցիկության համաթիվ</i>	<i>GTI</i>
<i>Հանրային վստահությունը քաղաքական գործիչներին համաթիվ</i>	<i>PTPI</i>
<i>Դատական մարմնի զսպումը գործադիրին համաթիվ</i>	<i>JCEI</i>
<i>Օրենսդիր մարմնի զսպումը գործադիրին համաթիվ</i>	<i>LCEI</i>
<i>Իշխանության թևերի բաժանման համաթիվ</i>	<i>DPI</i>

Գործոնային վերլուծության համար դիտարկվել են զարգացած, զարգացող և անցումային երկրների 2011-2015 թթ.-ի առկա ցուցանիշները: Դիտարկված յուրաքանչյուր տարվա վերլուծության արդյունքում ստացված գործոնները ներառում են նույն ցուցակազմը, որոնց արդյունքները ներկայացված են հավելված 1-ում:

Վերլուծությունը կատարվել է գլխավոր բաղադրիչի մեթոդով, իսկ ռոտացիան՝ վարիմաքս եղանակով: Ստացված գործոնների գնահատականները ստացվել են կշռված փոքրագույն քառակուսիների մեթոդով:

Աղյուսակ 3.3-ում և 3.4-ում ներկայացված են 2015 թ.-ի տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքները: Ինչպես երևում է աղյուսակ 3.3-ից, ստացված արդյունքները նշանակալի են:

### Աղյուսակ 3.3

ԿՄՕ և Բարլեդդի թեստի արդյունքներ 2015թ.

<b>KMO and Bartlett's Test</b>		
<i>Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.</i>		
		<i>0.694</i>
	<i>Approx. Chi-Square</i>	<i>470.4</i>
<i>Bartlett's Test of Sphericity</i>	<i>Df</i>	<i>15.0</i>
	<i>Sig.</i>	<i>0.000</i>

Աղյուսակ 3.4

Գործոնային վերլուծության արդյունքներ 2015թ.

<b>Rotated Component Matrix<sup>a</sup></b>		
	<i>Component</i>	
	1	2
<i>PTPI</i>	0.9495	
<i>GTI</i>	0.9156	
<i>GAI</i>	0.8147	
<i>LCEI</i>		0.9113
<i>JCEI</i>		0.8858
<i>DPI</i>		0.8059

*Extraction Method: Principal Component Analysis.*

*Rotation Method: Varimax with Kaiser Normalization.*

*a. Rotation converged in 3 iterations.*

Վերլուծության արդյունքում պարզ է դառնում (աղյուսակ 3.4), որ կառավարման հաշվետվողականության համաթիվը, կառավարման թափանցիկության համաթիվը, հանրային վստահությունը քաղաքական գործիչներին համաթիվը ներառվել են մեկ գործոնում, իսկ դատական մարմնի զսպումը գործադիրին համաթիվը, օրենսդիր մարմնի զսպումը գործադիրին համաթիվը և իշխանության թևերի տարանջատման համաթիվը կազմել են 2-րդ գործոնը:

1-ին գործոնում ներառված ցուցչակազմը որոշակի իմաստով բնորոշում է կառավարման գործառնական արդյունավետության մասնավոր բաղադրիչ, այն է՝ կառավարման հաշվետվողականությունը հասարակության հանդեպ, կառավարման թափանցիկությունը հասարակության հանդեպ, և այս 2-ից ածանցյալ հասարակության վստահությունը քաղաքական գործիչների /կառավարության/ նկատմամբ: Ուստի, այս գործոնը հետագա ուսումնասիրության շրջանակներում կանվանվի Կառավարության և հասարակության կապի գործոն՝ *GSRF*:

2-րդ գործոնը ներառել և համակարգային արդյունավետությունը բնորոշող ցուցչակազմ: Այսպես, իշխանության թևերի տարանջատումը, վերջինիս արդյունքում ստացվող իշխանության բաժանումը օրենսդիր, գործադիր և դատական մարմինների միջև, օրենսդիր իշխանության զսպումը գործադիր իշխանության վարչակազմին և, վերջապես, դատական իշխանության զսպումը գործադիր մարմնին ներկայացնում են երկրում առկա զսպումների և հակակշիռների համակարգը: Ուստի, ստացված գործոնը հետագա ուսումնասիրության շրջանակներում կանվանվի Ձսպումների և հակակշիռների համակարգ՝ *CBF*:

Ստացված արդյունքները թույլ կտան հետագա ռեգրեսիոն մոդելներում կրճատել չափողականությունը, խուսափել մուլտիկոլինեարության խնդրից և դիտարկել կառավարման համակարգային և գործառնական արդյունավետությունը բնութագրող գործոններ:

### **3.1.2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՔԼԱՍՏԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Սույն վերլուծության շրջանակներում իրականացվել է երկքայլ քլաստերավորում, որի ընթացքում դիտարկվել են 2015 թ.-ի ցուցանիշները: Դիտարկվել են 2 խումբ երկրներ: Առաջին դեպքում դիտարկվել են ԱՊՀ երկրները, ինչպես նաև Հայաստանի հարևան երկրները և Արևելյան Եվրոպայի երկրները: Երկրորդ դեպքում՝ դիտարկվել են միայն ԱՊՀ երկրները:

Վերլուծության համար դիտարկվել են սահմանադրականությունը նկարագրող որոշակի ժողովրդավարական և իրավական ցուցանիշներ: Դիտարկվող ցուցչակազմը ներկայացված է աղյուսակ 3.5-ում:

### Աղյուսակ 3.5


#### Դիփարկվող փոփոխականներ

Ցուցանիշի անվանում	Ցուցանիշի հապավում
Լիբերալ ժողովրդավարության համաթիվ	LDI
Գործադիրի կողմից սահմանադրության պահպանումը համաթիվ	ERCI
Իրավունքի գերակայության համաթիվ	RLI
Մաքուր ընտրությունների համաթիվ	CEI
Կառավարման արդյունավետության համաթիվ	GEI
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	CPI

Ստորև ներկայացված են առաջին դեպքի վերլուծության արդյունքները:

#### Գծապատկեր 3.1

Քլաստերավորման արդյունքներ 2015թ.



Ինչպես երևում է գծապատկեր 3.1-ից Սիլուետի չափոցը մեծ է 0.5-ից, ինչը ցույց է տալիս քլաստերավորման բարձր որակ: Նույն նկարից պարզ է դառնում նաև,


որ երկրների ընտրանքը բաժանվել է 3 քլաստերների, որոնցից 1-ինը ներառում է դիտարկվող երկրների 36.7 տոկոսը, երկրորդն ու 3-րդը՝ համապատասխանաբար 30 տոկոսը և 33.3 տոկոսը:

Գծապատկեր 3.2-ում ներկայացված է քլաստերավորման ընթացքում դիտարկվող ցուցիչների կարևորության աստիճանը: Վերջինս ցույց է տալիս քլաստերավորման ընթացքում դիտարկվող երկրների տարբերության աստիճանը որոշակի ցուցչի իմաստով:

Այս դեպքում, ինչպես երևում է գծապատկեր 3.2-ից, դիտարկվող բոլոր ցուցիչները ունեցել են բավական բարձր կարևորության աստիճան: Մասնավորապես, քլաստերավորման ընթացքում ամենակարևոր ցուցանիշ է հանդիսացել մաքուր ընտրությունների համաթիվը: Վերջինիս հաջորդում են ըստ կարևորության լիբերալ դեմոկրատիայի համաթիվը, կոռուպցիայի ընկալման համաթիվը, իրավունքի գերակայության համաթիվը, գործադիրի կողմից սահմանադրության պահպանման համաթիվը և կառավարման արդյունավետության համաթիվը:

### Գծապատկեր 3.2

#### Քլաստերավորման փոփոխականների կարևորություններ



Աղյուսակ 3.6-ում ներկայացված են յուրաքանչյուր քլաստերում յուրաքանչյուր փոփոխականի ցենտրոիդը, ինչպես նաև ընդհանուր միջին ցուցանիշը:

Աղյուսակ 3.6  
Քլաստերների ցենտրոիդներ

<b>Centroids</b>												
Cluster	CEI		LDI		CPI		GEI		RLI		ERCI	
	Mean	Std. Dev.	Mean	Std. Dev.	Mean	Std. Dev.	Mean	Std. Dev.	Mean	Std. Dev.	Mean	Std. Dev.
	1	0.92	0.06	0.72	0.09	57.27	6.10	0.86	0.28	0.76	0.37	1.54
2	0.65	0.11	0.42	0.15	38.89	5.73	-0.15	0.43	-0.25	0.33	0.87	0.67
3	0.26	0.14	0.12	0.07	27.00	5.21	-0.42	0.30	-0.80	0.32	-1.10	0.60
Comb.	0.62	0.30	0.43	0.28	41.67	14.12	0.13	0.66	-0.06	0.75	0.46	1.32

Աղյուսակ 3.7-ում ներկայացված են ստացված 3 քլաստերները, որտեղ 1-ին քլաստերում ներառված երկրները դիտարկվող ցուցանիշների իմաստով ունեն ավելի լավ արդյունքներ, 2-րդ քլաստերում ներառված երկրները՝ ունեն միջին արդյունքներ, իսկ երրորդում՝ ցածր արդյունքներ:

Ինչպես երևում է աղյուսակից, դիտարկվող համաթվերի շրջանակում Հայաստանը ներառվել է ցածր արդյունքներ արձանագրած երկրների քլաստերում: Այդ քլաստերում ներառվել են հիմնականում ԱՊՀ երկրներ, բացառություն է կազմում Հայաստանի հարևան երկիր Իրանը: Այս քլաստերում է նաև Հայաստանի հարևան Ադրբեջանը, ԵԱՏՄ անդամ Ռուսաստանը, Բելոռուսը և Ղազախստանը:

Հայաստանի հարևան երկրներից Թուրքիան դիտարկվող ցուցանիշների համատեքստում ներառվել է միջին արդյունքներ արձանագրած երկրների քլաստերում, իսկ Վրաստանը՝ լավ արդյունքներ արձանագրած երկրների քլաստերում: Վերոնշյալ քլաստերում, բացառությամբ Վրաստանի, բոլոր երկրները հանդիսանում են Արևելյան Եվրոպայի անդամներ:



Աղյուսակ 3.7



Ստացված քլաստերներ

<b>Քլաստեր 1</b>	<b>Քլաստեր 2</b>	<b>Քլաստեր 3</b>
Վրաստան	Կիրգիզիա	Ռուսաստան
Սլովակիա	Մոլդովա	Ուկրաինա
Խոռվապիա	Ռումինիա	Հայաստան
Հունգարիա	Բուլղարիա	Բելոռուս
Էստոնիա	Բոսնիա և Հերցեգովինա	Ղազախստան
Չեխիայի	Թուրքիա	Ադրբեջան
Լիտվիա	Մակեդոնիա	Իրան
Սլովենիա	Ալբանիա	Ուզբեկստան
Լեհաստան	Մոնտենեգրո	Թուրքմենստան
Լատվիա		Տաջիկստան
Կիպրոս		

Ստորև, ուսումնասիրության շրջանակը նեղացնելու նպատակով, դիտարկվել է քլաստերային վերլուծություն ԱՊՀ երկրների շրջանակում: Դիտարկվել է առաջին քլաստերավորման ընթացքում օգտագործված նույն ցուցակագմը 2015 թ.-ի համար:

Ինչպես երևում է գծապատկեր 3.3-ից, Սիլուետի չափոչոշիչը մեծ է 0.5-ից, ինչը ցույց է տալիս քլաստերավորման բարձր որակ: Նույն նկարից պարզ է դառնում նաև, որ երկրների ընտրանքը բաժանվել է 3 քլաստերների, որոնցից 1-ինը ներառում է դիտարկվող երկրների 25 տոկոսը, երկրորդն ու 3-րդը՝ համապատասխանաբար 50 տոկոսը և 25 տոկոսը:

**Գծապատկեր 3.3**  
**Քլաստերավորման արդյունքներ 2015թ.**




Գծապատկեր 3.4-ում ներկայացված է քլաստերավորման ընթացքում դիտարկվող ցուցիչների կարևորության աստիճանը:

Այս դեպքում, ինչպես երևում է գծապատկերից, քլաստերավորման ընթացքում ամենակարևոր ցուցանիշ է հանդիսացել Լիբերալ դեմոկրատիայի համաթիվը: Վերջինիս հաջորդում են ըստ կարևորության Մաքուր ընտրությունների համաթիվը, Գործադիրի կողմից սահմանադրության պահպանման համաթիվը Կոռուպցիայի ընկալման համաթիվը, Իրավունքի գերակայության համաթիվը և Կառավարման արդյունավետության համաթիվը: Ինչպես պարզ է դառնում գծապատկերից, վերջին 3 ցուցանիշների կարևորության աստիճանը միջինից ցածր է, այլ կերպ ասած կոռուպցիայի ընկալման, իրավունքի գերակայության և կառավարման արդյունավետության իմաստով դիտարկվող երկրները ավելի քիչ են տարբերվում միմյանցից, իսկ Լիբերալ դեմոկրատիայի, Մաքուր ընտրությունների և գործադիրի կողմից սահմանադրության պահպանման իմաստով՝ տարբերությունը ավելի մեծ է:

### Գծապատկեր 3.4

#### Քլաստերավորման փոփոխականների կարևորություններ

##### Predictor Importance



Աղյուսակ 3.8-ում ներկայացված են յուրաքանչյուր քլաստերում յուրաքանչյուր փոփոխականի ցենտրոիդը, ինչպես նաև ընդհանուր միջին ցուցանիշը:

### Աղյուսակ 3.8

#### Քլաստերների ցենտրոիդներ

<b>Centroids</b>												
	<i>CEI</i>		<i>LDI</i>		<i>CPI</i>		<i>GEI</i>		<i>RLI</i>		<i>ERCI</i>	
<i>Cluster</i>	<i>Mean</i>	<i>Std. Dev.</i>	<i>Mean</i>	<i>Std. Dev.</i>	<i>Mean</i>	<i>Std. Dev.</i>	<i>Mean</i>	<i>Std. Dev.</i>	<i>Mean</i>	<i>Std. Dev.</i>	<i>Mean</i>	<i>Std. Dev.</i>
<i>1</i>	<i>0.69</i>	<i>0.11</i>	<i>0.47</i>	<i>0.09</i>	<i>37.67</i>	<i>12.66</i>	<i>-0.38</i>	<i>0.69</i>	<i>-0.37</i>	<i>0.65</i>	<i>0.79</i>	<i>0.72</i>
<i>2</i>	<i>0.29</i>	<i>0.11</i>	<i>0.14</i>	<i>0.06</i>	<i>30.00</i>	<i>2.97</i>	<i>-0.27</i>	<i>0.19</i>	<i>-0.60</i>	<i>0.20</i>	<i>-0.95</i>	<i>0.41</i>
<i>3</i>	<i>0.15</i>	<i>0.09</i>	<i>0.05</i>	<i>0.01</i>	<i>21.00</i>	<i>4.36</i>	<i>-0.79</i>	<i>0.10</i>	<i>-1.16</i>	<i>0.21</i>	<i>-1.66</i>	<i>0.64</i>
<i>Comb.</i>	<i>0.36</i>	<i>0.23</i>	<i>0.20</i>	<i>0.17</i>	<i>29.67</i>	<i>8.64</i>	<i>-0.43</i>	<i>0.39</i>	<i>-0.68</i>	<i>0.44</i>	<i>-0.69</i>	<i>1.06</i>

Աղյուսակ 3.9-ում ներկայացված են ստացված 3 քլաստերները, որտեղ 1-ին քլաստերում ներառված երկրները դիտարկվող ցուցանիշների իմաստով ունեն արձանագրել են ավելի լավ արդյունքներ, 2-րդ քլաստերում ներառված երկրները արձանագրել են միջին արդյունքներ, իսկ երրորդում՝ ցածր արդյունքներ:

Ինչպես երևում է աղյուսակից, դիտարկվող համաթվերի շրջանակում Հայաստանը ներառվել է միջին արդյունքներ արձանագրած երկրների քլաստերում: Այդ քլաստերում ներառվել են նաև Հայաստանի հարևան երկիր Ադրբեջանը, ԵԱՏՄ անդամ երկրներ Ռուսաստանը, Բելոռուսը և Ղազախստանը:

Հայաստանի հարևան երկրներից Վրաստանը ներառվել է բարձր արդյունքներ արձանագրած երկրների քլաստերում, իսկ ցածր արդյունք արձանագրած երկրների քլաստերում ԱՊՀ երկրներից ներառվել են միայն միջին Ասիական երկրներ:

### Աղյուսակ 3.9

#### Ստացված քլաստերներ

<i><b>Քլաստեր 1</b></i>	<i><b>Քլաստեր 2</b></i>	<i><b>Քլաստեր 3</b></i>
<i>Վրաստան</i>	<i>Ռուսաստան</i>	<i>Ուզբեկստան</i>
<i>Կիրգիզիա</i>	<i>Ուկրաինա</i>	<i>Թուրքմենստան</i>
<i>Մոլդովա</i>	<i>Հայաստան</i>	<i>Տաջիկստան</i>
	<i>Բելոռուս</i>	
	<i>Ղազախստան</i>	
	<i>Ադրբեջան</i>	

Իրականացված 2 քլաստերային վերլուծությունների արդյունքները թույլ կտան կատարել հետագա համեմատական վերլուծություն երկրների 2 տարբեր ընտրանքների շրջանակներում: Համեմատական վերլուծությունների նպատակադրումը կարող է հանդիսանալ դիտարկվող համաթվերի շրջանակում Հայաստանի դիրքի դրական փոփոխությունը, իսկ այդ նպատակին ընդառաջ առաջադրվող խնդիրներից կարող են

լինել ավելի լավ քլաստերում ընդգրկված երկրների ընտրական գործընթացների ժողովրդավարական և իրավական մեխանիզմների ուսումնասիրությունը, հակակոռուպցիոն քաղաքականության և համալիր գործիքակազմի վերլուծությունը և այլն:

### **3.1.3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ**

Կառավարման որակի բնորոշիչները, այն է՝ կառավարման մեխանիզմների համակարգային արդյունավետության մակարդակը և այդ մեխանիզմների իրացման միջոցով կառավարման գործառնական արդյունավետության մակարդակը, ստեղծում են նախապայմաններ կոռուպցիոն իրադարձությունների համար: Այլ կերպ ասած, երկրում կոռուպցիայի մակարդակը որոշակիորեն կախված է կառավարման որակի աստիճանից:

Մի կողմից, կառավարման համակարգի ցածր որակը ստեղծում է նախապայմաններ կոռուպցիոն իրադարձությունների համար, իսկ մյուս կողմից, կոռուպցիայի առկա մակարդակը զսպում է կառավարման գործառնական արդյունավետությանը: Ուստի, հետաքրքրական է դառնում ուսումնասիրել կառավարման համակարգային գործոնների կապը կոռուպցիայի մակարդակի հետ:

Կառավարման համակարգի որակի մասնավոր բնորոշիչ է զսպումների և հակակշիռների համակարգը, ինչը գերկարևոր համակարգային գործոն է, որը մի կողմից ապահովում է իշխանության թևերի օպտիմալ տարանջատումը, այսինքն զսպում է իշխանության կենտրոնացմանը, իսկ մյուս կողմից՝ իշխանության տարբեր թևերի միջոցով հակակշիռ է ստեղծում մյուս թևերի կամայականության նկատմամբ: Այսպիսով, վերոնշյալ գործոնը համակարգային իմաստով ապահովում է իշխանության վերահսկողությունը իշխանության միջոցով:

Կառավարման համակարգային արդյունավետության մեկ այլ ցուցիչ է կառավարման թափանցիկության և հաշվետվողականության գործոնը, ինչը բարձրացնում է մեդիայի և քաղաքացիական հասարակության տեղեկացվածության

աստիճանը կառավարման արդյունքների մասին, և հետևապես, թույլ տալիս վերջիններին, որոնք հանդիսանում են իշխանության 4-րդ և 5-րդ թևերը, կառավարել իշխանության հետագա վերարտադրությունը ընտրությունների միջոցով:

Հաշվի առնելով կառավարման համակարգային արդյունավետության վերը նշված գործոնները, ստորև դիտարկվել է այդ գործոնների ազդեցությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա: Զսպումների և հակակշիռների համակարգի մակարդակը ցույց է տալիս տվյալներում առկա նույնանուն գործոնը, իսկ կառավարման թափանցիկության և հաշվետվողականության մակարդակը ցույց է տալիս տվյալներում առկա Կառավարության և հասարակության կապի գործոնը, որը ստացվել է գործոնային վերլուծության արդյունքում և ներառում է կառավարման թափանցիկության համաթիվը, կառավարման հաշվետվողականության համաթիվը և հանրային վստահությունը քաղաքական գործիչների նկատմամբ համաթիվը: Ի լրումն այդ գործոնների, մոդելում դիտարկվել են նաև իրավական-ժողովրդավարական վերահսկող փոփոխականներ: Դիտարկված փոփոխականները ներկայացված են աղյուսակ 3.10-ում:

*Աղյուսակ 3.10*


*Դիտարկվող փոփոխականներ*

<i>Ցուցանիշի անվանում</i>	<i>Ցուցանիշի հապավում</i>
<i>Կոռուպցիայի ընկալման համաթիվ</i>	<i>CPI</i>
<i>Զսպումների և հակակշիռների համակարգ գործոն</i>	<i>CBF</i>
<i>Կառավարության և հասարակության կապի գործոն</i>	<i>GSRF</i>
<i>Քաղաքական կայունության և բռնությունների ու տրեռորիզմի բացակայության համաթիվ</i>	<i>PSAVTI</i>
<i>Արտահայտման ազատությունների համաթիվ</i>	<i>FEI</i>
<i>Մաքուր ընտրությունների համաթիվ</i>	<i>CEI</i>
<i>Մարդկային զարգացման համաթիվ</i>	<i>HDI</i>
<i>Գործադիր կողմից սահմանադրության պահպանումը համաթիվ</i>	<i>ERCI</i>

Գծապատկեր 3.5-ում և 3.6-ում ներկայացված են 2015թ.-ի համար դիտարկվող գործոնների և կոռուպցիայի ընկալման համաթվի հիման վրա կառուցված էկոնոմետրիկ կետերի ամպը և մոտարկող գծային և պոլինոմիալ ուղիղները:


Գծապատկեր 3.5

Կոռուպցիայի ընկալման համաթվի և զսպումների ու հակակշիռների գործոնի կապը



Գծապատկեր 3.6

Կոռուպցիայի ընկալման համաթվի և կառավարության և հասարակության կապի գործոնի կապը



Պարզելու համար վերոնշյալ գործոնների և կոռուպցիայի ընկալման համաթվի կապը, ստորև դիտարկվել է բազմագործոն ռեգրեսիոն մոդել, որում ներառված են գծային և պոլինոմիալ բացատրող փոփոխականներ:

$$CPI_{ij} = \beta_0 + \beta_1 * CBF_{ij} + \beta_2 * CBF_{ij}^2 + \beta_3 * GSRF_{ij} + \beta_4 * GSRF_{ij}^2 + \beta_5 * PSAVTI_{ij} + \beta_6 * FEI_{ij} + \beta_7 * CEI_{ij} + \beta_8 * HDI_{ij} + \beta_9 * ERCL_{ij} + e_{ij} \quad (3.1.)$$

որտեղ՝  $i$ -ն երկրի ցուցիչն է,  $j$ -ն՝ տարեթիվ,  $e_{ij}$ -ն՝ գնահատման սխալը:

Գնահատումը կատարվել է պանելային տվյալների կիրառմամբ. դիտարկվել են 127 երկրների ցուցանիշներ 2011-2015 թթ.-ի համար:

Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.7-ում և աղյուսակ 3.8-ում:

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.7-ից, գնահատված 9 մոդելների արդյունքները նշանակալի են, սակայն 9-րդ մոդելում բացատրող փոփոխականները առավելագույնս են բացատրում կախյալ փոփոխականի վարիացիան (*Adj. R-Squared* 0.873): Ուստի, հետագա ուսումնասիրության համար ընտրվում է 9-րդ մոդելը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.8-ում:



### Աղյուսակ 3.7

#### Գնահատման արդյունքներ

Dependent Variable: CPI	M1	M2	M3	M4	M5	M6	M7	M8	M9
Variables	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]	Coef. (Prob.[t- Stat.]
Const.	44.14 0.00	38.60 0.00	41.82 0.00	40.39 0.00	42.04 0.00	29.68 0.00	21.30 0.00	9.15 0.00	11.88 0.00
CBF	10.05 0.00	13.46 0.00	11.48 0.00	11.42 0.00	8.75 0.00	6.14 0.00	3.90 0.00	2.73 0.00	1.64 0.00
CBF^2	-	5.59 0.00	2.34 0.00	2.02 0.00	1.36 0.00	1.76 0.00	2.10 0.00	1.26 0.00	1.16 0.00
GSRF	-	-	13.46 0.00	12.30 0.00	10.01 0.00	10.26 0.00	9.88 0.00	9.44 0.00	8.75 0.00
GSRF^2	-	-	-	1.77 0.00	1.55 0.00	1.54 0.00	1.69 0.00	1.40 0.00	1.48 0.00
PSAVTI	-	-	-	-	5.65 0.00	4.82 0.00	3.20 0.00	2.79 0.00	2.91 0.00
FEI	-	-	-	-	-	16.21 0.00	9.60 0.00	13.18 0.00	10.84 0.00
CEI	-	-	-	-	-	-	19.08 0.00	13.13 0.00	10.90 0.00
HDI	-	-	-	-	-	-	-	20.28 0.00	18.49 0.00
ERCI	-	-	-	-	-	-	-	-	2.32 0.00
Prob. (F-Stat.)	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00
Adj. R-Squared	0.261	0.334	0.787	0.799	0.832	0.843	0.859	0.869	0.873
Periods	5	5	5	5	5	5	5	5	5
Cross-sections	127	127	127	127	127	127	127	127	127
Total panel obs.	595	595	595	595	595	595	595	595	595

**Աղյուսակ 3.8**  
**Գնահատման արդյունքներ**

<i>Dependent Variable: CPI</i>				
<i>Method: Panel Least Squares</i>				
<i>Sample (adjusted): 2011 2015</i>				
<i>Periods included: 5</i>				
<i>Cross-sections included: 127</i>				
<i>Total panel (unbalanced) observations: 595</i>				
<i>Variables</i>	<i>Coef.</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
<i>CBF</i>	<i>1.641</i>	<i>0.680</i>	<i>2.414</i>	<i>0.016</i>
<i>CBF^2</i>	<i>1.164</i>	<i>0.347</i>	<i>3.360</i>	<i>0.001</i>
<i>GSRF</i>	<i>8.746</i>	<i>0.420</i>	<i>20.827</i>	<i>0.000</i>
<i>GSRF^2</i>	<i>1.480</i>	<i>0.240</i>	<i>6.170</i>	<i>0.000</i>
<i>PSAVTI</i>	<i>2.905</i>	<i>0.511</i>	<i>5.688</i>	<i>0.000</i>
<i>FEI</i>	<i>10.836</i>	<i>2.570</i>	<i>4.216</i>	<i>0.000</i>
<i>CEI</i>	<i>10.898</i>	<i>2.423</i>	<i>4.498</i>	<i>0.000</i>
<i>HDI</i>	<i>18.487</i>	<i>2.959</i>	<i>6.248</i>	<i>0.000</i>
<i>ERCI</i>	<i>2.324</i>	<i>0.527</i>	<i>4.406</i>	<i>0.000</i>
<i>Const.</i>	<i>11.877</i>	<i>2.797</i>	<i>4.247</i>	<i>0.000</i>
<i>Effects Specification</i>		<i>Period fixed (dummy variables)</i>		
<i>R-squared</i>	<i>0.876</i>	<i>Mean dependent var</i>	<i>44.144</i>	
<i>Adjusted R-squared</i>	<i>0.873</i>	<i>S.D. dependent var</i>	<i>19.484</i>	
<i>S.E. of regression</i>	<i>6.947</i>	<i>Akaike info criterion</i>	<i>6.738</i>	
<i>Sum squared resid</i>	<i>28037</i>	<i>Schwarz criterion</i>	<i>6.841</i>	
<i>Log likelihood</i>	<i>-1990</i>	<i>Hannan-Quinn criter.</i>	<i>6.778</i>	
<i>F-statistic</i>	<i>314.767</i>	<i>Durbin-Watson stat</i>	<i>0.276</i>	
<i>Prob(F-statistic)</i>	<i>0.000</i>			

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.8-ից, ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի են: Մասնավորապես, F և t վիճակագրականները ցույց են տալիս մոդելի բացատրող փոփոխականների ստացված գործակիցների 0 լինելու հավանականության բացառումը 95%-անոց վստահելիության միջակայքում: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ մոդելում բացատրող

փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի վարիացիայի 87.3%-ը (Adjusted R-squared = 0.873):

Հետաքրքրական է բացատրող գործոնների գծային և քառակուսային անդամների ազդեցությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա: Մասնավորապես, 2 գործոնների դեպքում էլ քառակուսային անդամները ունեն դրական նշան, ինչը փաստում է, որ գործոնի սահմանային ազդեցությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա ունի աճող տեսք: Մասնավորապես, եթե օրինակ զսպումների և հակակշիռների գործոնը հավասար է 1-ի, ապա այս կետից միավոր փոփոխությունը կհանգեցնի կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 5.133 միավոր ընդհանուր փոփոխության: Նույնական է նաև կառավարության և հասարակության կապի գործոնի ազդեցության մեկնաբանությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա: Այս դեպքում գործոնի 1 միավորից միավոր փոփոխությունը կհանգեցնի կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 13.186 միավոր ընդհանուր փոփոխության:

Քաղաքական կայունության և բռնությունների ու տեռորիզմի բացակայության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 2.905 միավոր փոփոխության հետ, արտահայտման ազատության համաթիվը, որը զսպիչ գործոն է իշխանական ապարատի ամենաթողության հանդեպ, զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 10.836 միավոր փոփոխության հետ, օրինական ընտրությունների համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 10.898 միավոր փոփոխության հետ, մարդկային զարգացման համաթվի (ՄԶԻ-ին կոմույատիվ համաթիվ է, որը ներառում է շնչային ՀՆԱ-ն, կրթության մակարդակը/տարիների քանակը և կյանքի սպասվող տևողությունը) միավոր փոփոխությունը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 18.4 միավոր փոփոխության հետ, և վերջապես, գործադիրի կողմից սահմանադրության պահպանման համաթիվը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 2.324 միավոր փոփոխության հետ:

Այսպիսով, ստացվում է, որ կառավարման համակարգը բնութագրող գործոններն ունեն լայնամասշտաբ ազդեցություն երկրում առկա կոռուպցիայի մակարդակի վրա: Ուստի, հակակոռուպցիոն ծրագրի լրամշակման շրջանակներում անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել վերը նշված գործոններին, քանի որ հենց այդ գործոնների օպտիմալ կառավարումը կարող է հանգեցնել երկրում կոռուպցիայի ցածր մակարդակին և կառավարման արդյունավետության մակարդակի աճին:

### **3.1.4. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ**

Կառավարման որակի բնորոշիչներից է կառավարման գործառնական արդյունավետությունը, ինչը բաղադրյալ հասկացություն է և ներառում է այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են, օրինակ, կառավարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը, պետական պաշտոնյաների պրոֆեսիոնալության մակարդակը, այդ պաշտոնյաների առաջնորդումը համաձայն սահմանադրության դրույթների և վերջիններից ածանցված այլ օրենսդրական կարգավորումների, պետական պաշտոնյաների առաջնորդումը ի բարօրություն հանրային շահի, և այլն: Ինչպես պարզ է դառնում վերոգրյալից, կոռուպցիոն իրադարձությունները խաթարում են արդյունավետ կառավարմանը և հանգեցնում մի իրավիճակի, երբ պետական կառավարումը նպատագրում է մասնավոր շահը և վեր դասում վերջինիս հանրային շահից: Այս համատեքստում ակադեմիական հետաքրքրություն է ներկայացնում ուսումնասիրել կոռուպցիայի և կառավարման /գործառնական/ արդյունավետության փոխկապվածությունը:

Գնահատման համար դիտարկված փոփոխականները ներկայացված են աղյուսակ 3.9-ում:

### Աղյուսակ 3.9


#### Դիտարկվող փոփոխականներ

Ցուցանիշի անվանում	Ցուցանիշի հապավում
Կառավարման արդյունավետության համաթիվ	GEI
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	CPI
Զսպումների և հակակշիռների համակարգ գործոն	CBF
Կառավարության և հասարակության կապի գործոն	GSRF
Մաքուր ընտրությունների համաթիվ	CEI
Իրավունքի գերակայության համաթիվ	RLI

Գծապատկեր 3.7-ում ներկայացված է 2015թ.-ի համար դիտարկվող կառավարման արդյունավետության համաթվի և կոռուպցիայի ընկալման համաթվի հիման վրա կառուցված էկոնոմետրիկ կետերի ամպը և մոտարկող գծային ուղիղը:

Գծապատկեր 3.7

Կառավարման արդյունավետության և կոռուպցիայի ընկալման համաթվի կապը



Պարզելու համար կոռուպցիայի ընկալման համաթվի և կառավարման արդյունավետության կապը, ստորև դիտարկվել է բազմագործոն ռեգրեսիոն մոդել, որում ներառված են գծային և պոլինոմիալ բացատրող փոփոխականներ:

$$GEI_{ij} = \beta_0 + \beta_1 * CPI_{ij} + \beta_2 * CBF_{ij} + \beta_3 * CBF_{ij}^2 + \beta_4 * CEI_{ij} + \beta_5 * RLI_{ij} + e_{ij} \quad (3.2)$$

որտեղ՝  $i$ -ն երկրի ցուցիչն է,  $j$ -ն՝ տարեթիվ,  $e_{ij}$ -ն՝ գնահատման սխալը:

Գնահատումը կատարվել է պանելային տվյալների կիրառմամբ. դիտարկվել են 127 երկրների ցուցանիշներ 2011-2015 թթ.-ի համար:

### Աղյուսակ 3.10

#### Գնահատման արդյունքներ

Dependent Variable: GEI	M1	M2	M3	M4	M5	M6
Variables	Coef. (Prob.[t-Stat.])	Coef. (Prob.[t-Stat.])	Coef. (Prob.[t-Stat.])	Coef. (Prob.[t-Stat.])	Coef. (Prob.[t-Stat.])	Coef. (Prob.[t-Stat.])
Const.	-1.920 0.000	-1.710 0.000	-1.723 0.000	-1.475 0.000	-1.648 0.000	-0.383 0.000
CPI	0.045 0.000	0.041 0.000	0.040 0.000	0.034 0.000	0.030 0.000	0.006 0.000
CBF	- -	0.098 0.000	0.152 0.000	0.213 0.000	0.146 0.000	0.063 0.000
CBF <sup>2</sup>	- -	- -	0.069 0.000	0.073 0.000	0.090 0.000	0.044 0.000
GSRF	- -	- -	- -	0.113 0.000	0.139 0.000	0.069 0.000
CEI	- -	- -	- -	- -	0.503 0.000	0.277 0.000
RLI	- -	- -	- -	- -	- -	0.662 0.000
Prob. (F-Stat.)	0.000	0.000	0.000	0.000	0.000	0.000
Adj. R-Squared	0.870	0.876	0.881	0.885	0.890	0.925
Periods	5	5	5	5	5	5
Cross-sections	127	127	127	127	127	127
Total panel obs.	595	595	595	595	595	595

Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.10-ում և աղյուսակ 3.11-ում:

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.10-ից, գնահատված 6 մոդելների արդյունքները նշանակալի են, սակայն 6-րդ մոդելում բացատրող փոփոխականները առավելագույնս են բացատրում կախյալ փոփոխականի վարիացիան (*Adj. R-Squared 0.924*): Ուստի, հետագա ուսումնասիրության համար ընտրվում է 6-րդ մոդելը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.11-ում:

*Աղյուսակ 3.11*  
*Գնահատման արդյունքներ*

<i>Dependent Variable: GEI</i>				
<i>Method: Panel Least Squares</i>				
<i>Sample (adjusted): 2011 2015</i>				
<i>Periods included: 5</i>				
<i>Cross-sections included: 127</i>				
<i>Total panel (unbalanced) observations: 595</i>				
<i>Variables</i>	<i>Coef.</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
<i>CPI</i>	<i>0.006</i>	<i>0.002</i>	<i>2.831</i>	<i>0.00</i>
<i>CBF</i>	<i>0.063</i>	<i>0.021</i>	<i>2.930</i>	<i>0.00</i>
<i>CBF^2</i>	<i>0.044</i>	<i>0.012</i>	<i>3.659</i>	<i>0.00</i>
<i>GSRF</i>	<i>0.069</i>	<i>0.020</i>	<i>3.527</i>	<i>0.00</i>
<i>CEI</i>	<i>0.277</i>	<i>0.079</i>	<i>3.532</i>	<i>0.00</i>
<i>RLI</i>	<i>0.662</i>	<i>0.041</i>	<i>16.325</i>	<i>0.00</i>
<i>Const.</i>	<i>-0.383</i>	<i>0.096</i>	<i>-3.981</i>	<i>0.00</i>
<i>Effects Specification</i>		<i>Period fixed (dummy variables)</i>		
<i>R-squared</i>	<i>0.9258</i>	<i>Mean dependent var</i>	<i>0.1107</i>	
<i>Adjusted R-squared</i>	<i>0.9245</i>	<i>S.D. dependent var</i>	<i>0.9146</i>	
<i>S.E. of regression</i>	<i>0.2513</i>	<i>Akaike info criterion</i>	<i>0.0940</i>	
<i>Sum squared resid</i>	<i>36.88</i>	<i>Schwarz criterion</i>	<i>0.1752</i>	
<i>Log likelihood</i>	<i>-16.98</i>	<i>Hannan-Quinn criter.</i>	<i>0.1256</i>	
<i>F-statistic</i>	<i>728.34</i>	<i>Durbin-Watson stat</i>	<i>0.1871</i>	
<i>Prob(F-statistic)</i>	<i>0.0000</i>			

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.11-ից, ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի են: Մասնավորապես, F և t վիճակագրականները ցույց են տալիս մոդելի բացատրող փոփոխականների ստացված գործակիցների 0 լինելու հավանականության բացառումը 95%-անոց վստահելիության միջակայքում: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ մոդելում բացատրող փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի վարիացիայի 92.45%-ը (Adjusted R-squared = 0.9245):

Հետաքրքրական է բացատրող փոփոխականների գծային և քառակուսային անդամների ազդեցությունը կառավարման արդյունավետության համաթվի վրա: Մասնավորապես, կոռուպցիայի ընկալման համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կառավարման արդյունավետության համաթվի միջինում 0.006 միավոր փոփոխության հետ: Զսպումների և հակակշիռների գործոնի դեպքում քառակուսային անդամը ունի դրական նշան, ինչը փաստում է, որ գործոնի սահմանային ազդեցությունը կառավարման արդյունավետության համաթվի վրա ունի աճող տեսք: Մասնավորապես, եթե օրինակ զսպումների և հակակշիռների գործոնը հավասար է 1-ի, ապա այս կետից միավոր փոփոխությունը կհանգեցնի կառավարման արդյունավետության համաթվի միջինում 0.195 միավոր ընդհանուր փոփոխության: Կառավարության և հասարակության կապի գործոնի միավոր փոփոխությունը կհանգեցնի կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 0.069 միավոր փոփոխության: Նույն կերպ, օրինական ընտրությունների համաթվի, ինչը զսպիչ գործոն է իշխանությանը և ծառայում է որպես հասարակության կողմից իշխանության փոխելու լծակ, միավոր փոփոխությունը զուգորդվում է կառավարման արդյունավետության համաթվի միջինում 0.277 միավոր փոփոխության հետ, իսկ իրավունքի գերակայության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կառավարման արդյունավետության համաթվի միջինում 0.662 միավոր փոփոխության հետ:

Այսպիսով, ստացվում է, որ կոռուպցիան ունի նշանակալի ազդեցություն կառավարման արդյունավետության վրա, սա հատկանշական է և անհրաժեշտություն է



ստեղծում ուժգնացնել հակակոռուպցիոն քաղաքականություն իրականացնող մարմին/ների ազատության/անկախության աստիճանը պետական ապարատից:

### **3.2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ**

Սահմանադրականության հասկացության ելակետային և հիմնարար բաղկացուցիչներից է իրավունքի գերակայության հասկացությունը, որն, ըստ սահմանման, իրենից ենթադրում է մի իրավիճակ, երբ մի կողմից օրենսդրական դաշտը բաղկացած է պարզ օրենքներից, որոնց կատարումը գործնականորեն հնարավոր է, իսկ մյուս կողմից յուրաքանչյուր ոք հավասար է օրենքի առաջ: Իրավունքի գերակայության բարձր մակարդակի պայմաններում առկա օրենքները օպտիմալ կերպով իրացվում են իրական կյանքում, ինչը ծառայում է սահմանադրական դեֆիցիտի կրճատմանը և հանրային բարեկեցության աճին:

Այս համատեքստում կոռուպցիոն իրադարձությունները բացասական և խարխլող ազդեցություն են ունենում իրավունքի գերակայության արդյունավետ մակարդակի ապահովման վրա, ուստի, հասկանալու համար այդ ազդեցության ուժը, ստորև դիտարկվել է կոռուպցիայի ընկալման համաթվի ազդեցությունը իրավունքի գերակայության համաթվի վրա:

Գնահատման համար դիտարկված փոփոխականները ներկայացված են աղյուսակ 3.12-ում:

Գծապատկեր 3.8-ում ներկայացված է 2015թ.-ի համար դիտարկվող իրավունքի գերակայության համաթվի և կոռուպցիայի ընկալման համաթվի հիման վրա կառուցված էկոնոմետրիկ կետերի ամպը և մոտարկող գծային ուղիղը:


### Աղյուսակ 3.12

#### Դիտարկվող փոփոխականներ

Ցուցանիշի անվանում	Ցուցանիշի հապավում
Իրավունքի գերակայության համաթիվ	RLI
Կոռուպցիայի ընկալման համաթիվ	CPI
Զսպումների և հակակշիռների համակարգ գործոն	CBF
Սեփականության իրավունքի համաթիվ	PRI
Կառավարման արդյունավետության համաթիվ	GEI

#### Գծապատկեր 3.8

Իրավունքի գերակայության և կոռուպցիայի ընկալման համաթվի կապը



Պարզելու համար կոռուպցիայի ընկալման համաթվի և իրավունքի գերակայության համաթվի կապը, ստորև դիտարկվել է բազմագործոն ռեգրեսիոն մոդել:

$$RLI_{ij} = \beta_0 + \beta_1 * CPI_{ij} + \beta_2 * CBF_{ij} + \beta_3 * PRI_{ij} + \beta_4 * GEI_{ij} + e_{ij} \quad (3.3)$$

որտեղ՝  $i$ -ն երկրի ցուցիչն է,  $j$ -ն՝ տարեթիվ,  $e_{ij}$ -ն՝ գնահատման սխալը:

Գնահատումը կատարվել է պանելային տվյալների կիրառմամբ. դիտարկվել են 127 երկրների ցուցանիշներ 2011-2015 թթ.-ի համար:

Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.13-ում և աղյուսակ 3.14-ում:

*Աղյուսակ 3.13*  
*Գնահատման արդյունքներ*

<i>Dependent Variable: RLI</i>	<i>M1</i>	<i>M2</i>	<i>M3</i>	<i>M4</i>
<i>Variables</i>	<i>Coef.</i> <i>(Prob.[t-Stat.])</i>	<i>Coef.</i> <i>(Prob.[t-Stat.])</i>	<i>Coef.</i> <i>(Prob.[t-Stat.])</i>	<i>Coef.</i> <i>(Prob.[t-Stat.])</i>
<i>Const.</i>	-2.0864 0.000	-1.9677 0.000	-2.4659 0.000	-1.5572 0.000
<i>CPI</i>	0.0474 0.000	0.0452 0.000	0.0342 0.000	0.0203 0.000
<i>CBF</i>	- -	0.0826 0.000	0.1208 0.000	0.0643 0.000
<i>PRI</i>	- -	- -	0.2337 0.000	0.1521 0.000
<i>GEI</i>	- -	- -	- -	0.4322 0.000
<i>Prob. (F-Stat.)</i>	0.0000	0.0000	0.0000	0.0000
<i>Adj. R-Squared</i>	0.9104	0.9210	0.9376	0.9571
<i>Periods</i>	5	5	5	5
<i>Cross-sections</i>	127	127	127	127
<i>Total panel obs.</i>	595	595	595	595

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.13-ից, գնահատված 4 մոդելների արդյունքները նշանակալի են, սակայն 4-րդ մոդելում բացատրող փոփոխականները առավելագույնս են բացատրում կախյալ փոփոխականի վարիացիան (*Adj. R-Squared*

0.9571): Ուստի, հետագա ուսումնասիրության համար ընտրվում է 4-րդ մոդելը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.14-ում:

*Աղյուսակ 3.14*  
*Գնահատման արդյունքներ*

<i>Dependent Variable: RLI</i>				
<i>Method: Panel Least Squares</i>				
<i>Sample (adjusted): 2011 2015</i>				
<i>Periods included: 5</i>				
<i>Cross-sections included: 127</i>				
<i>Total panel (unbalanced) observations: 595</i>				
<i>Variables</i>	<i>Coef.</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
<i>CPI</i>	<i>0.0203</i>	<i>0.001</i>	<i>16.246</i>	<i>0.000</i>
<i>CBF</i>	<i>0.0643</i>	<i>0.011</i>	<i>6.115</i>	<i>0.000</i>
<i>PRI</i>	<i>0.1521</i>	<i>0.016</i>	<i>9.302</i>	<i>0.000</i>
<i>GEI</i>	<i>0.4322</i>	<i>0.027</i>	<i>16.143</i>	<i>0.000</i>
<i>Const.</i>	<i>-1.5572</i>	<i>0.069</i>	<i>-22.569</i>	<i>0.000</i>
<i>Effects Specification</i>		<i>Period fixed (dummy variables)</i>		
<i>R-squared</i>	<i>0.9577</i>	<i>Mean dependent var</i>	<i>0.0290</i>	
<i>Adjusted R-squared</i>	<i>0.9571</i>	<i>S.D. dependent var</i>	<i>0.9652</i>	
<i>S.E. of regression</i>	<i>0.1998</i>	<i>Akaike info criterion</i>	<i>-0.3679</i>	
<i>Sum squared resid</i>	<i>23.4</i>	<i>Schwarz criterion</i>	<i>-0.3015</i>	
<i>Log likelihood</i>	<i>118.5</i>	<i>Hannan-Quinn criter.</i>	<i>-0.3421</i>	
<i>F-statistic</i>	<i>1659.2</i>	<i>Durbin-Watson stat</i>	<i>0.2585</i>	
<i>Prob(F-statistic)</i>	<i>0.0000</i>			

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.14-ից, ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի են: Մասնավորապես, F և t վիճակագրականները ցույց են տալիս մոդելի բացատրող փոփոխականների ստացված գործակիցների 0 լինելու հավանականության բացառումը 95%-անոց վստահելիության միջակայքում: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ մոդելում բացատրող

փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի վարիացիայի 95.71%-ը (Adjusted R-squared = 0.9571):

Հետաքրքրական է բացատրող փոփոխականների ազդեցությունը իրավունքի գերակայության համաթվի վրա: Մասնավորապես, կոռուպցիայի ընկալման համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է իրավունքի գերակայության համաթվի միջինում 0.0203 միավոր փոփոխության հետ: Զսպումների և հակակշիռների գործոնի միավոր փոփոխությունը կհանգեցնի իրավունքի գերակայության համաթվի միջինում 0.0643 միավոր փոփոխության: Սեփականության իրավունքի համաթվի, ինչը իրավունքի գերակայության համաթվի ուղղակի մաս է կազմում, միավոր փոփոխությունը զուգորդվում է իրավունքի գերակայության համաթվի միջինում 0.1521 միավոր փոփոխության հետ, իսկ կառավարման արդյունավետության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է իրավունքի գերակայության համաթվի միջինում 0.4322 միավոր փոփոխության հետ:

Այսպիսով, ստացվում է, որ կոռուպցիան ունի նշանակալի ազդեցություն իրավունքի գերակայության վրա, ինչն անհրաժեշտություն է ստեղծում հաշվի առնել վերջինս հակակոռուպցիոն քաղաքականության լրամշակման ընթացքում:

### **3.3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ**

Տնտեսական համատեքստում սահմանադրականության հասկացության կարևոր բաղկացուցիչ է հանրային բարեկեցության մակարդակը, ինչը բաղադրյալ հասկացություն է և ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են տնտեսական աճը, տնտեսական զարգացումը, վերջինիս կիրառականությունը, եկամուտների բևեռացման աստիճանը, սոցիալ-բարեկեցության համակարգը և այլն: Ըստ սահմանման, հանրային բարեկեցությունը կարող է ներառել նաև այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են կրթության մակարդակը, առողջապահության մակարդակը, կյանքի սպասվող տևողությունը և այլն:

Վերոնշյալ գործոններից յուրաքանչյուրը բնութագրում է երկրի զարգացվածության աստիճանը: Հաշվի առնելով այս գործոնների զանազանությունը, հանրային բարեկեցության մակարդակը սովորաբար մոտարկվում է այնպիսի ցուցանիշներով, ինչպիսիք են շնչային ՀՆԱ-ն, շնչային եկամուտը, մարդկային զարգացման համաթիվը և այլն: Ստորև հանրային բարեկեցության մակարդակը կմոտարկվի մարդկային զարգացման համաթվի միջոցով, ինչը կոմուլյատիվ համաթիվ է և ներառում է ինչպես տնտեսական գործոն՝ շնչային ՀՆԱ-ն, այնպես էլ հասարակության կրթվածության և կյանքի սպասվող տևողության ցուցիչներ:

Մյուս կողմից կոռուպցիոն իրադարձությունները քայքայիչ ազդեցություն կարող են ունենալ հանրային բարեկեցության բարձր մակարդակի ապահովման վրա, ուստի, հասկանալու համար այդ ազդեցության ուժը, ստորև դիտարկվել է կոռուպցիայի ընկալման համաթվի ազդեցությունը մարդկային զարգացման համաթվի վրա:

Գնահատման համար դիտարկված փոփոխականները ներկայացված են աղյուսակ 3.15-ում:

### Աղյուսակ 3.15


#### Դիտարկվող փոփոխականներ

<i>Ցուցանիշի անվանում</i>	<i>Ցուցանիշի հապավում</i>
<i>Մարդկային զարգացման համաթիվ</i>	<i>HDI</i>
<i>Կոռուպցիայի ընկալման համաթիվ</i>	<i>CPI</i>
<i>Գործադիրի կողմից սահմանադրության պահպանումը համաթիվ</i>	<i>ERCI</i>
<i>Ներդրողի պաշտպանվածության համաթիվ</i>	<i>SIPi</i>
<i>Քաղաքական կայունության և բռնությունների ու տրեռորիզմի բացակայության համաթիվ</i>	<i>PSAVTI</i>
<i>Որակյալ կրթության համաթիվ</i>	<i>QEI</i>

Գծապատկեր 3.9-ում ներկայացված է 2015թ.-ի համար դիտարկվող իրավունքի գերակայության համաթվի և կոռուպցիայի ընկալման համաթվի հիման վրա կառուցված էկոնոմետրիկ կետերի ամպը և մոտարկող գծային ուղիղը:

Գծապատկեր 3.9

Մարդկային զարգացման համաթվի և կոռուպցիայի ընկալման համաթվի կապը



Պարզելու համար կոռուպցիայի ընկալման համաթվի և մարդկային զարգացման համաթվի կապը, ստորև դիտարկվել է բազմագործոն ռեգրեսիոն մոդել:

$$HDI_{ij} = \beta_0 + \beta_1 * CPI_{ij} + \beta_2 * ERCl_{ij} + \beta_3 * SIPI_{ij} + \beta_4 * PSAVTI_{ij} + \beta_5 * QEI_{ij} + e_{ij} \quad (3.4)$$

որտեղ՝  $i$ -ն երկրի ցուցիչն է,  $j$ -ն՝ տարեթիվ,  $e_{ij}$ -ն՝ գնահատման սխալը:

Գնահատումը կատարվել է պանելային տվյալների կիրառմամբ. դիտարկվել են 127 երկրների ցուցանիշներ 2011-2015 թթ.-ի համար:

Մոդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.16-ում, աղյուսակ 3.17-ում:

Աղյուսակ 3.16

Գնահատման արդյունքներ

<i>Dependent</i>						
<i>Variable: HDI</i>		<i>M1</i>	<i>M2</i>	<i>M3</i>	<i>M4</i>	<i>M5</i>
<i>Variables</i>	<i>Coef.</i>	<i>Coef.</i>	<i>Coef.</i>	<i>Coef.</i>	<i>Coef.</i>	
	<i>(Prob.[t- Stat.]</i>	<i>(Prob.[t- Stat.]</i>	<i>(Prob.[t- Stat.]</i>	<i>(Prob.[t- Stat.]</i>	<i>(Prob.[t- Stat.]</i>	
<i>Const.</i>	0.468	0.491	0.432	0.474	0.336	
	0.000	0.000	0.000	0.000	0.000	
<i>CPI</i>	0.006	0.005	0.004	0.003	0.001	
	0.000	0.000	0.000	0.000	0.000	
<i>ERCI</i>	-	0.019	0.026	0.024	0.025	
	-	0.000	0.000	0.000	0.000	
<i>SIPI</i>	-	-	0.016	0.017	0.014	
	-	-	0.000	0.000	0.000	
<i>PSAVTI</i>	-	-	-	0.031	0.029	
	-	-	-	0.000	0.000	
<i>QEI</i>	-	-	-	-	0.063	
	-	-	-	-	0.000	
<i>Prob. (F-Stat.)</i>	0.000	0.000	0.000	0.000	0.000	
<i>Adj. R-Squared</i>	0.519	0.515	0.558	0.570	0.618	
<i>Periods</i>	5	5	5	5	5	
<i>Cross-sections</i>	144	139	133	133	133	
<i>Total panel obs.</i>	718	693	634	634	634	

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.16-ից, գնահատված 5 մոդելների արդյունքները նշանակալի են, սակայն 5-րդ մոդելում բացատրող փոփոխականները առավելագույնս են բացատրում կախյալ փոփոխականի վարիացիան (*Adj. R-Squared 0.618*): Ուստի, հետագա ուսումնասիրության համար ընտրվում է 5-րդ մոդելը, որի արդյունքները ներկայացված են աղյուսակ 3.17-ում:



### Աղյուսակ 3.17

#### Գնահատման արդյունքներ

<i>Dependent Variable: HDI</i>				
<i>Method: Panel Least Squares</i>				
<i>Sample (adjusted): 2011 2015</i>				
<i>Periods included: 5</i>				
<i>Cross-sections included: 133</i>				
<i>Total panel (unbalanced) observations: 634</i>				
<i>Variables</i>	<i>Coef.</i>	<i>Std. Error</i>	<i>t-Statistic</i>	<i>Prob.</i>
<i>CPI</i>	<i>0.001</i>	<i>0.000</i>	<i>2.001</i>	<i>0.04</i>
<i>ERCI</i>	<i>0.025</i>	<i>0.005</i>	<i>5.249</i>	<i>0.00</i>
<i>SIPI</i>	<i>0.014</i>	<i>0.003</i>	<i>5.184</i>	<i>0.00</i>
<i>PSAVTI</i>	<i>0.029</i>	<i>0.007</i>	<i>4.310</i>	<i>0.00</i>
<i>QEI</i>	<i>0.063</i>	<i>0.007</i>	<i>8.888</i>	<i>0.00</i>
<i>Const.</i>	<i>0.336</i>	<i>0.023</i>	<i>14.403</i>	<i>0.00</i>
<i>Effects Specification</i>		<i>Period fixed (dummy variables)</i>		
<i>R-squared</i>	<i>0.6233</i>	<i>Mean dependent var</i>	<i>0.7167</i>	
<i>Adjusted R-squared</i>	<i>0.6179</i>	<i>S.D. dependent var</i>	<i>0.1525</i>	
<i>S.E. of regression</i>	<i>0.0943</i>	<i>Akaike info criterion</i>	<i>-1.8691</i>	
<i>Sum squared resid</i>	<i>5.5486</i>	<i>Schwarz criterion</i>	<i>-1.7989</i>	
<i>Log likelihood</i>	<i>602.5</i>	<i>Hannan-Quinn criter.</i>	<i>-1.8418</i>	
<i>F-statistic</i>	<i>114.7</i>	<i>Durbin-Watson stat</i>	<i>0.0386</i>	
<i>Prob(F-statistic)</i>	<i>0.0000</i>			

Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 3.17-ից, ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի են: Մասնավորապես, F և t վիճակագրականները ցույց են տալիս մոդելի բացատրող փոփոխականների ստացված գործակիցների 0 լինելու հավանականության բացառումը 95%-անոց վստահելիության միջակայքում: Ճշգրտված դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ մոդելում բացատրող փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի վարիացիայի 61.79%-ը (Adjusted R-squared = 0.6179):

Հետաքրքրական է բացատրող փոփոխականների ազդեցությունը մարդկային զարգացման համաթվի վրա: Մասնավորապես, կոռուպցիայի ընկալման համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է մարդկային զարգացման համաթվի միջինում 0.001 միավոր փոփոխության հետ: Գործադիրի կողմից սահմանադրության պահպանման համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է մարդկային զարգացման համաթվի միջինում 0.025 միավոր փոփոխության հետ, ներդրողի պաշտպանվածության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է մարդկային զարգացման համաթվի միջինում 0.014 միավոր փոփոխության հետ, քաղաքական կայունության և բռնությունների ու տեռորիզմի բացակայության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է մարդկային զարգացման համաթվի միջինում 0.029 միավոր փոփոխության հետ, և վերջապես, որակյալ կրթության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է մարդկային զարգացման համաթվի միջինում 0.063 միավոր փոփոխության հետ:

Այսպիսով, ստացվում է, որ կոռուպցիան ունի նշանակալի ազդեցություն մարդկային զարգացվածության վրա, ինչը մոտարկելով հանրային բարեկեցությունը, արտացոլում է կոռուպցիայի բացասական ազդեցությունը վերջինիս վրա:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ատենախոսության հիմնանպատակի իրականացմանն ուղղված հետազոտությունների արդյունքում կատարվել են հետևյալ եզրակացությունները՝

- ❖ Կառավարման համակարգի որակն ունի լայնամասշտաբ և նշանակալի ազդեցություն կոռուպցիայի իրողության ձևավորման վրա: Մասնավորապես, իշխանության թևերի տարանջատումն ու զսպումների և հակակշիռների համակարգը, կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, մաքուր ընտրությունները, գործադիրի կողմից սահմանադրության պահպանումը դրականորեն են ազդում հակակոռուպցիոն պայքարի ուժգնության վրա:
- ❖ Կոռուպցիայի բարձր մակարդակը, իրավունքի գերակայության ցածր մակարդակը և կառավարման համակարգի ցածր որակը զսպիչ ուժ են հանդիսանում կառավարման գործառնական արդյունավետության վրա:
- ❖ Վերը թվարկված գործոնների ներազդման արդյունքում, երկրում ինստիտուտների արդյունավետ կենսագործունեության համար ստեղծվում են անբավարար պայմաններ, ինչը բացասաբար է ազդում տնտեսական զարգացման և հանրային բարեկեցության մակարդակի աճի վրա:
- ❖ Իրականացված քլաստերային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ատենախոսության թեմայի համատեքստում Հայաստանը պատկանում է ցուցչակազմի համեմատաբար ցածր մակարդակ պարունակող քլաստերում հարևան երկրների, ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի երկրների շրջանակում: Նշված վերլուծության արդյունքում քլաստերավորման կարևոր փոփոխականներ են հանդիսացել լիբերալ ժողովրդավարության, գործադիրի կողմից սահմանադրության պահպանման, իրավունքի գերակայության, մաքուր ընտրությունների, կառավարման արդյունավետության և կոռուպցիայի ընկալման համաթվերը:

- ❖ Իրականացված քլաստերային վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վերոնշյալ համատեքստում ԱՊՀ երկրների շրջանակում Հայաստանը պատկանում է միջին ցուցչակազմ ունեցող երկրների խմբին, որտեղ ներառված են նաև Ռուսաստանի Դաշնությունը, Ուկրաինան, Բելոռուսը, Ղազախստանը և Ադրբեջանը: Նկարագրված խմբին զիջում են Ուզբեկստանը, Թուրքմենստանը և Տաջիկստանը: Իսկ Վրաստանը, Մոլդովան և Կիրգիզիան նշված համատեքստում ներկայացնում են առավել բարձր որակի ցուցչակազմ ունեցող երկրների քլաստերը: Նշված վերլուծության արդյունքում քլաստերավորման կարևոր փոփոխականներ են հանդիսացել լիբերալ ժողովրդավարության, մաքուր ընտրությունների, գործադիրի կողմից սահմանադրության պահպանման համաթվերը:

Հաշվի առնելով վերոնշյալ եզրակացությունները, կատարվում են հետևյալ առաջարկությունները՝

- ❖ Կոռուպցիայի պայքարում ընդգրկված պետական և ոչ պետական ինստիտուտների, հակակոռուպցիոն կենտրոնների և հասարակական կազմակերպությունների խիստ և կանոնական տարանջատումը իշխանության ներկայացուցիչներից, վերջիններիս կողմից ֆինանսավորումից և ուղղակի/անուղղակի կառավարումից, կհանգեցնի հակակոռուպցիոն պայքարի առավել արդյունավետ մակարդակի:
- ❖ Հաշվի առնելով օրենսդրությունը, ՀՀ պատմության վերջին քառորդդարյա հակակոռուպցիոն պայքարի անարդյունավետությունը և կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային փորձը՝ առաջարկվում է իրականացնել օրենսդրական բարեփոխումներ, հատկապես բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարագրման մասով, ինչպես նաև վերանայել պետական ապարատում աշխատավարձերի առկա մակարդակը, ինչը կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:
- ❖ Հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը, արդեն իսկ ներդրված ազդարարման համակարգի արդյունավետ գործարկումը, կոռուպցիոն իրադարձությունների հանդեպ

անհանդուրժողական մթնոլորտի ձևավորումը և կոռուպցիայի առաջարկի կրճատումը լայնորեն կնպաստեն պետության առջև ծառայած հիմնախնդիրների արդյունավետ հանգուցալուծմանը:

- ❖ Կոռուպցիայի դեմ պայքարում հայտնի միջազգային կազմակերպություններին անդամակցումը, միջազգային պայմանագրերի վավերացումը, այդ կազմակերպություններից ֆինանսավորումը, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման և արդյունքների մշտադիտարկման համար անհրաժեշտ գործիքակազմի արդյունավետ օգտագործումը կհանգեցնեն ՀՀ-ում կոռուպցիայի իրողության զգալի կրճատմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, հանրային բարեկեցության աճին և տնտեսական զարգացմանը և, ի վերջո, սահմանադրական դեֆիցիտի կրճատմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Acemoglu D., Johnson S., Robinson J.A., “The colonial origins of comparative development: An empirical investigation”, *American Economic Review*, 2001, 91 (5), էջ 1369–1401:
2. Acemoglu D., Robinson J., “The role of institutions in growth and development”, *Review of Economic Institutions*, 2010, 1 (2).
3. Ades A., Di Tella R., ”Rents, Competition, and Corruption”. *American Economic Review*, 1999, 89(4): էջ 982-992:
4. Adserà A., Boix C., Payne M., “Are You Being Served? Political Accountability and Quality of Government”, *J. Law Econ Organ.*, 2003, 19 (2), էջ 445-490:
5. Aghion Ph., Akcigit U., Cagé J., Kerr W., “Taxation, corruption, and growth”, *European Economic Review*, 2016.
6. Ali M., Hodan S.,”Determinants of Economic Corruption:A Cross-Country Comparison”. *Cato Journal*, 2003, 22(3), էջ 449-466:
7. Alt J. E., Dreyer L., “The Political Economy of Corruption in American States”, *Journal of Theoretical Politics*, 2003, 15(3), էջ 341-365:
8. Andvig J. Ch., Fjeldstad O., Amundsen I., Sissener T., Soreide T., “Research on Corruption: A Policy Oriented Survey”, *Chr.Michelsen Institute and Norwegian Institute of International Affairs, Bonaglia*, 2003.
9. Ayşe Y. E., “Institutional and economic determinants of corruption: a cross-section analysis”, *Applied Economics Letters*, 2010, 17:6, էջ 551-554:
10. Barber N. W., “Constitutionalism: Negative an Positive,” *Oxford Legal Studies Research Paper No. 7/2015*, 2015, էջ 1,6:
11. Barenboim P., Merkulova N., “25th Anniversary of Constitutional Economics: The Russian model and legal Reform in Russia”, *The World rule of Law Movement and Russian Lega Reform.-M: Justitsinform*, 2007, էջ 182:

12. Barro R. J., "Government Spending in a Simple Model of Endogenous Growth", *Journal of Political Economy*, 1990, V. 98, N5 (part 2), էջ S103–S125:
13. Barro R. J., "Determinants of economic growth: A cross-country empirical study", MIT Press, 1998 .
14. Beck P. J., Maher M. W., "A Comparison of Bribery and Bidding in Thin Markets," *Econ.Letters*, 1986, 20, էջ 1-5:
15. Berggren, N., Karlson, N., "Constitutionalism, division of power and transaction costs," *Public Choice*, No. 117, 2003, էջ 99:
16. Braga de Macedo F., Bussolo M., "How Globalization Improves Governance". Discussion Paper No. 2992. Paris, France: Centre for Economic Policy Research, Organisation for Economic Co-operation and Development, 2001.
17. Broadman H. G., Recanatini F., "Seed of Corruption: Do Market Institutions Matter?", *The World Bank Policy Research Working Paper*, 2002, No.2368.
18. Buchanan J. M., "The Constitution of Economic Policy," Nobel Prize Lecture, 1986.
19. Buchanan J. M., "The Domain of Constitutional Economics," *Constitutional Political Economy* Vol. 1, No.1, 1990, էջ 3:
20. Buchanan J. M., "Choice, Contract and Constitutions," Vol. 16 of *The Collective Works of James M. Buchanan*, Indianapolis: Liberty fund, 2001, էջ 9-10:
21. Cattell R. B., "Factor analysis", New York Harper, 1952.
22. Child D., "The Essentials of Factor Analysis", 3rd edition, Bloomsbury Academic Press, 2006.
23. Chiu T., Fang D., Chen J., Wang Y., Jeris C. "A robust and scalable clustering algorithm for mixed type attributes in large database environment", *Proceedings of the seventh ACM SIGKDD International Conference on Knowledge Discovery and Data Mining*, 2001, էջ 263-268:
24. *Concise Routledge Encyclopedia of Philosophy*, General editor: Craig Edward. London: Routledg, 2000, էջ 171:
25. *Elgar Encyclopedia of Comparative Law*, 2nd Edition, Edited by Jan Smits, Cheltenham: Edward Elgar Publishing, 2012, էջ 228:

26. Elgar Encyclopedia of Comparative Law, 2nd Edition, Edited by Jan Smits, Cheltenham: Edward Elgar Publishing, 2012, էջ 227:
27. Encyclopedia of the Developing World, Edited by Leonard, Thomas M., Routledge, 2005, էջ 391:
28. Fombad Ch. M., “Constitutional Reforms and Constitutionalism in Africa: Reflections on Some Current Challenges and Future Prospects,” Buffalo Law Review, Vol. 59, No. 4, 2011, էջ 1014:
29. Fruchter B., “Introduction to Factor Analysis”, Van Nostrand, 1954.
30. Hall R. E., Jones C. I., “Why Do Some Countries Produce so Much More Output per Worker Than Others?”, Quarterly Journal of Economics, 1999, 114(1), էջ 83-116:
31. Harutyunyan G., Sargsyan H., Gevorgyan R., “Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies”, Journal of Advanced Research in Law and Economics, 2017. Volume VIII, Summer, 4(26), էջ 1126 – 1135:
32. Harutyunyan Kh., “National Integrity System Assessment Armenia 2014”, TIAC, Working papers, 2015.
33. <http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8->
34. <http://databank.worldbank.org/data/home.aspx>
35. <http://transparency.am/hy/cpi>
36. [http://transparency.am/storage/GCB2013\\_Tables\\_am.pdf](http://transparency.am/storage/GCB2013_Tables_am.pdf)
37. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100900>
38. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=107648>
39. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=114364>
40. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24512>
41. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4202>
42. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=4203>
43. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68627>
44. <http://www.businessdictionary.com/definition/welfare.html>
45. [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/1141\\_1k\\_voroshum.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1141_1k_voroshum.pdf)
46. [http://www.gov.am/u\\_files/file/xorhurdner/korupcia/430.pdf](http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf)



47. <http://www.irtek.am/views/act.aspx?tid=43349&sc=p4#p4>
48. <http://www.merriam-webster.com/dictionary/corruption>
49. <http://www.oxforddictionaries.com/definition/english/corruption>
50. <http://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199208425.001.0001/oxfordhb-9780199208425-e-16>
51. <http://www1.worldbank.org/publicsector/anticorrupt/corruptn/cor02.htm#define>
52. [http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017\\_FINAL.pdf](http://www3.weforum.org/docs/GCR2016-2017/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2016-2017_FINAL.pdf)
53. [https://en.oxforddictionaries.com/definition/rule\\_of\\_law](https://en.oxforddictionaries.com/definition/rule_of_law)
54. [https://en.oxforddictionaries.com/definition/social\\_welfare](https://en.oxforddictionaries.com/definition/social_welfare)
55. <https://info.worldbank.org/governance/wgi/pdf/ge.pdf>
56. <https://plato.stanford.edu/entries/constitutionalism/>
57. <https://transparency.am/files/publications/1481277964-0-512288.pdf>
58. <https://transparency.am/storage/overview-of-corruption-in-armenia-hy.pdf>
59. <https://worldjusticeproject.org/about-us/overview/what-rule-law>
60. [https://www.e-gov.am/u\\_files/file/decrees/arc\\_voroshum/MAR28-2.pdf](https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/MAR28-2.pdf)
61. <https://www.merriam-webster.com/dictionary/constitutionalism>
62. <https://www.merriam-webster.com/dictionary/rule%20of%20law>
63. <https://www.merriam-webster.com/dictionary/welfare>
64. <https://www.ruleoflaw.org.au/what-is-the-rule-of-law/>
65. <https://www.transparency.org/>
66. Huntington S. P., “Political order in changing societies”, New Haven: Yale U. Press, 1968.
67. Kaufmann D., Kraay A., “Growth without Governance”, *Economia*, 2002, 3(1), էջ 169– 229:
68. Kaufmann D., Kraay A., ”Growth Without Governance”.World Bank Policy Research Working Paper, 2002b, No. 2928.
69. Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., “Governance matters VII: Governance indicators for 1996–2007”, World Bank Policy Research Paper, 2008.

70. Kaufmann D., Kraay A., Mastruzzi M., "Governance Matters". World Bank Policy Research Working Paper, 1999,  2 2196:
71. Kaufmann D., Vicente P., "Legal Corruption", World Bank, 2005,  2 4:
72. Knack S., Keefer P., "Institutions and economic performance: Cross-country tests using alternative institutional measures", *Economics and Politics*, 1995, 7 (3),  2 207–227:
73. Kunicova J., Rose-Ackerman S., "Electoral Rules and Constitutional Structures as Constraints on Corruption", *British Journal of Political Science*, 2005, 35 (4),  2 573-606:
74. Kurtz M., Schrank A., "Growth and governance: Models, measures and mechanisms", *Journal of Politics*, 2007, 69(2),  2 538–554:
75. Lambsdorff J. Graf., "How Corruption in Government Affects Public Welfare: A Review of Theory", Mimeo, Georg-August-University of Gottingen, 2001b.
76. Lederman D., Norman V. L., Soares R., "Accountability and Corruption: Political Institutions Matter". *Economics and Politics*, 2005, 17,  2 1-35:
77. Leff N. H., "Economic Development through Bureaucratic Corruption," *The American Behavioral Scientist*, Nov. 1964, 8(2),  2 8-14:
78. Leite C., Weidmann J., "Does Mother Nature Corrupt?: Natural Resources, Corruption, and Economic Growth", Working paper WP/99/85, International Monetary Fund, Washington, DC, 1999.
79. Lien D., "A Note on Competitive Bribery Games," *Econ. Letters*, 1986, 22,  2 337-41:
80. Masabo J., "The State of Constitutionalism in Tanzania Mainland -2013", *The Annal State of Constitutionalism in East Africa 2013*, Editor Murangira, Thierry B., Fountain Publishers, 2014,  2 7:
81. Mauro P., "Corruption and growth", *Quarterly Journal of Economics*, 1995, 110(3),  2 681-712:
82. Mauro P., "The persistence of corruption and slow economic growth", *IMF staff papers*, 2004, 51(1),  2 1-18:

83. May R. J., Cooper S. L., “Intellectual Property Rights under the Constitution’s Rule of Law,” *Perspectives from FSF Scholars*, Vol. 9, No. 31, 2014, 2:
84. McIlwain Ch. H., “Constitutionalism: Ancient and Modern,” Revised edition, Cornell University Press, New York, 1947, 21, 136:
85. McKenzie, R., “Constitutional Economics: Containing the Economic Powers of Government”, Lexington MA: Lexington Books, 1984.
86. Meglen R. R., “Examining Large Databases: A Chemometric Approach Using Principal Component Analysis”, *Journal of Chemometrics*, 1991, 5 (3), 163–179:
87. Mooi E., Sarstedt M., “A concise guide to market research: the process, data, and methods using IBM SPSS statistics”, Springer-Verlag, Berlin Heidelberg, 2011.
88. Murphy K. M., Shleifer A., Vishny R. W., “Why Is Rent-Seeking So Costly to Growth?”, *American Economic Review, Papers and Proceedings*, 1993, Vol. 83, No. 2, 409–414:
89. North D. C., “Institutions, Institutional Change, and Economic Performance”, New York, Cambridge University Press, 1990.
90. Odoki, B. J. “The On-Going Constitution-Making Process in Uganda,” Report of the Chairman of Uganda Constitutional Commission, Available at: <http://www.constitutionnet.org/vl/item/going-constitution-making-process-uganda-hon-mr-justice-b-j-odoki-chairman-uganda-constituti> , 5:
91. Quibria M. G., “Does Governance Matter? Yes, No or Maybe: Some Evidence from Developing Asia”, *Kyklos*, 2006, 59(1), 99–114:
92. Rafayet A., Kitenge E., Bedane A., "Government Effectiveness and Economic Growth", *Economics Bulletin*, 2017, Volume B., 37, Issue 1, 222-227:
93. Rose-Ackerman S., “The Economics of Corruption”, *Journal of Political Economy*. 1975. N 4.
94. Ruscio J., Roche B., “Determining the number of factors to retain in an exploratory factor analysis using comparison data of known factorial structure”, *Psychological Assessment*, 2012, 24, 282–292:
95. Şchiopu D., “Applying TwoStep cluster analysis for identifying bank customers' profile”, *Buletinul*, 2010, 66-75:

96. Senior I., "Corruption – The World's Big Problem", Institute of Economic Affairs, London, 2006,   19:
97. Smith A., "An Inquiry into the Nature and Causes of Wealth of Nations", Indianapolis: Liberty Fund, 1976b [1776].
98. Steytler N., Visser J., "Sa's Reputation is Undeserved," Mail and Guardian, 06/09/2013, 00:00, Available at <https://mg.co.za/article/2013-09-06-00-sas-reputation-is-undeserved>
99. Thematic Analysis of Zimbabwe's Proposed Draft Constitution, by Justice Mavedzenge, A Report by: Freedom House, 2012,   19-20:
100. Trpkova M., Tevdovski D., "Twostep cluster analysis: Segmentation of largest companies in Macedonia, Proceedings of the Challenges for Analysis of the Economy", The Businesses and Social Progress International Scientific Conference, 2009, November 19-21.
101. United Nations, "Investing in Development; A practical Plan to Achieve the Millennium Development Goals", Millennium Project Report to the UN Secretary General, 2001.
102. Van den Hauwe L., "Constitutional economics," The Elgar companion to law and economics, 2nd edition/ Edited by Jurgen G. Backhaus.-Edward Elgar Publishing, 2005,   227:
103. Van den Hauwe, L., "Constitutional Economics II", The Elgar Companion to Law and Economics, 2005,   223–224:
104. Van den Hauwe, L., "Constitutional Economics", The Elgar Companion to Law and Economics, 2nd edition/Edited by Jurgen G. Backhaus.-Edward Eldar Publishing, 2005,   224:
105. Vanberg V. "Market and State: The Perspective of Constitutional Political Economy," Freiburg Discussion Papers on Constitutional Economics, No 04/10, 2004,   3:

106. Vanberg V., “Democracy, Citizen Sovereignty and Constitutional Economics,” Public Choice and the Challenges of Democracy, Edited by Pardo, Jose C. and Schwartz, Pedro, Edward Elgar Publishing, 2007, էջ 102:
107. Wicksell K., “Finanztheoretische Untersuchungen” Investigations into the Theory of Finance, Jena: Gustav Fischer, 1896.
108. Баренбойм П. Д., “Соотношение доктрин Верховенства права и Правового государства как главный вопрос философии права и конституционализм”, М.:Лум, 2013, էջ 85, 100:
109. Баренбойм П. Д., Лафитский В.А., Захаров А.Б., Меркулова Н.Ю., “Конституционная экономика для школ”, Учебное пособие.-М.:Юцтицинформ, 2006, էջ 6:
110. Баренбойм П. Д., Лафитский В.А., Маы В.А., Захаров А.Б., Меркулова Н.Ю., “Конституционная экономика для школ”, Учебное пособие.-М.:Юцтицинформ, 2006, էջ 2:
111. Епифанова Н., “Исследование коррупции на основе методов экономической теории”, Вопросы экономики, 2007, № 1.
112. Кутафин О.Е., “Российский конституционализм”, М.:Норма, 2008, էջ 3,4,6:
113. Усов А. Б., “Модельное исследование коррупции в трехуровневых системах управления”, Журнал Экономика и математические методы (ЭММ), 2009, 45(2).
114. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհ. Խմբ.՝ Գ. Հարությունյան, Ա. Վաղարշյանի: -Եր. <Իրավունք>, 2010, էջ 8,9,13,15:
115. Հարությունյան Գ., <<Սահմանադրական մշտադիտարկում>> Երևան, Նժար, 2016:
116. Մարկոսյան Ա. Խ., Մխիթարյան Ս. Մ., Թորմաջյան Ս. Հ., Մկրտչյան Մ. Ս., <<Կոռուպցիոն կորերի մաթեմատիկական մոդելավորումը>>, ԵՃՇՊՀ, 2012, Տեղեկագիր 2, էջ 127-142:
117. Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության

- թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 4:
118. Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 34:
119. Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 59:
120. Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 67:
121. Մխիթարյան Ժ., <<Սահմանադրականության գնահատման տնտեսագիտամաթեմատիկական մեթոդները>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջ 127:
122. Սահակյան Վ., <<Տնտեսական համակարգում կոռուպցիայի գնահատման մի մեթոդ>>, Տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2001:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Հավելված 1:** 3.1.1 ենթազվի գնահատման արդյունքները:

<b>2014 KMO and Bartlett's Test</b>		
<i>Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.</i>		<i>0.700</i>
<i>Bartlett's Test of Sphericity</i>	<i>Approx. Chi-Square</i>	<i>462.5</i>
	<i>Df</i>	<i>15.0</i>
	<i>Sig.</i>	<i>0.000</i>

<b>2013 KMO and Bartlett's Test</b>		
<i>Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.</i>		<i>0.718</i>
<i>Bartlett's Test of Sphericity</i>	<i>Approx. Chi-Square</i>	<i>454.9</i>
	<i>df</i>	<i>15.0</i>
	<i>Sig.</i>	<i>0.000</i>

<b>2012 KMO and Bartlett's Test</b>		
<i>Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.</i>		<i>0.746</i>
<i>Bartlett's Test of Sphericity</i>	<i>Approx. Chi-Square</i>	<i>470.8</i>
	<i>Df</i>	<i>15.0</i>
	<i>Sig.</i>	<i>0.000</i>

<b>2011 KMO and Bartlett's Test</b>		
<i>Kaiser-Meyer-Olkin Measure of Sampling Adequacy.</i>		<i>0.752</i>
<i>Bartlett's Test of Sphericity</i>	<i>Approx. Chi-Square</i>	<i>458.0</i>
	<i>df</i>	<i>15.0</i>
	<i>Sig.</i>	<i>0.000</i>

---

---

**2014 Rotated Component Matrix<sup>a</sup>**

---

---

	Component	
	1	2
PTPI	0.9412	
GTI	0.9009	
GAI	0.8420	
LCEI		0.9152
JCEI		0.8932
DPI		0.7670

---

---

Extraction Method: Principal Component Analysis.

Rotation Method: Varimax with Kaiser Normalization.

a. Rotation converged in 3 iterations.

---

---

---

---

**2012 Rotated Component Matrix<sup>a</sup>**

---

---

	Component	
	1	2
PTPI	0.9144	
GTI	0.9120	
GAI	0.8525	
LCEI		0.9099
JCEI		0.8825
DPI		0.7819

---

---

Extraction Method: Principal Component Analysis.

Rotation Method: Varimax with Kaiser Normalization.

a. Rotation converged in 3 iterations.

---

---

---

---

**2013 Rotated Component Matrix<sup>a</sup>**

---

---

	Component	
	1	2
PTPI	0.9203	
GTI	0.9012	
GAI	0.8457	
LCEI		0.9215
JCEI		0.9065
DPI		0.7559

---

---

Extraction Method: Principal Component Analysis.

Rotation Method: Varimax with Kaiser Normalization.

a. Rotation converged in 3 iterations.

---

---

---

---

**2011 Rotated Component Matrix<sup>a</sup>**

---

---

	Component	
	1	2
PTPI	0.9148	
GTI	0.9034	
GAI	0.8407	
LCEI		0.9107
JCEI		0.8648
DPI		0.8017

---

---

Extraction Method: Principal Component Analysis.

Rotation Method: Varimax with Kaiser Normalization.

a. Rotation converged in 3 iterations.

---

---